

Սուրբ ծննդյան երգը

Առաջարան:

Այս հոգևոր փոքրիկ գրքում ես փորձել եմ արթնացնել հոգու մի գաղափար, որի շնորհիվ իմ ընթերցողները չեն նեղանա ո՛չ իրենք իրենցից, ո՛չ միմյանցից, ո՛չ տոնական օրերից և ո՛չ էլ ինձնից: Թող այդ հոգին սիրով հաստատվի նրանց տներում, և ոչ ոք չցանկանա բաժանվել նրանից:

Փառք Աստծու բարձունքներում, և երկրի վրա խաղաղություն և հաճություն մարդկանց մեջ նրանց հավատարիմ ընկեր և Ծառա Չ. Դ. Դեկտեմբեր, 1843թ. Առաջին տուն Մարլիի ուրվականը սկսեց այն բանից, որ Մարլին մահացել էր: Դրանում կասկած չկար: Նրա թաղման վկայագիրը ստորագրել էին քահանան, գրագիրը, հուղարկավորողը և գլխավոր սգավորը: Անձամբ Սքրուջն էր ստորագրել այն: Իսկ Սքրուջի անունը բորսայում որոշիչ դեր ուներ:

Ծեր Մարլինը մեռած էր դռան մեխի պես: Ի դեպ, ես չեմ ուզում ասել՝ իբր սեփական փորձից գիտեմ, թե դռան մեխի ինչն է հատկապես մեռած: Անձամբ ես կասեի՝ դագաղի մեխը երկաթե բոլոր իրերից ամենամեռածն է: Բայց այս խոսքում մեր նախնիների իմաստությունն է արտահայտվախ, և իմ անարժան ձեռքերը չպետք է փոխեն այն, թե չէ երկիրը կկործանվի: Այդ իսկ պատճառով թույլ տվեք կրկնել, որ Մարլին մեռած է դռան մեխի պես:

Սքրուջը գիտե՞ր, որ նա մեռած է: Բհարկե գիտեր: Ինչպե՞ս կարող էր այլ կերպ լինել: Սքրուջն ու Մարլին չգիտեմ, թե քանի տարվա գործընկերներ էին: Սքրուջը նրա միակ կտակատարն էր, միակ հավատարմատարը, միակ ժառանգորդը, միակ բարեկամը, միակ սգավորը:

Այնուհանդերձ, Սքրուջն այդ տխուր դեպքից այնքան էլ չէր ընկճվել, ընդհակառակը, նա այդ օրն իրեն պահել էր հրաշալի գործարարի պես և այն նշանավորել հուսալի մի գործարքով:

Մարլիի թաղման մասին հիշատակությունն ինձ կրկին բերեց այն մտքին, որից սկսել եմ: Կասկած չկար, որ Մարլին մեռած էր: Սա պետք է հստակ պատկերացնել, թե չէ արտասովոր ոչինչ չի լինի այս պատմության մեջ:

Եթե նախքան բեմադրությունը սկսելը մենք լիովին համոզված չլինեինք, որ Համլետի հայրը մեռած է, ապա գիշերաժամին հուժկու քամու ներքո նրա զբոսանքն իր տոհմական ամրոցի պարիսպների վրա ավելի արտառոց չէր թվում, քան կեսգիշերին քամոտ մի վայրում, ասենք՝ Ս. Պողոսի եկեղեցու բակում, անխոհեմ զբոսանքը մեկ այլ տարեց մարդու, որի նպատակն էր ապշեցնել իր որդու հիվանդ երևակայությունը:

Սքրուջը չէր ջնջել ծեր Մարլիի անունը գրասենյակի ցուցաատախտակից: Մրլիի մահվանից երկար տարիներ անց էլի նրա անունը մնացել էր գրացենյակի դռան վերնամասում՝՝ՄՔՐՈՒՋ և ՄԱՐԼԻ՝՝: Այդ անունով էր հայտնի հիմնարկը: Սկսնակ գործարարները Սքրուջին դիմելիս անվանում էին երբեմն՝ Սքրուջ, երբեմն էլ՝ Մարլի, բայց նա երկու անուններին էլ արձագանքում էր:

Նրա համար միննույն էր:

Ա՛յ թե ազահ էր այդ Սքրուջը: Շորթող ու խարդախ, գծուծ ու կովարար ծեր մեղսագործ էր նա: Նա սառն ու կարծր էր քարի պես և դեռ ոչ մեկին չէր հաջողել խղճի կայծ հանել նրանից: Նա ծածկամիտ էր, ինքամիտի ու միայնակ, ինչպես իր պատիանում թաքնվող ոստրեն: Հոգու սառնությունը սառեցր էլ նրա ծերունական դիմագծերը, երկարեցրել սրածայր քիթը, կնճռոտել այտերը, կաշկանդել քայլվացքը, կարմրացրել աչքերը, կապտեցրել բարակ շուրթերը, կոշտացրել ճղճղան ձայնը: Նրա գլուխը, հոնքերը և նեղ կզակն ասես սառը եղյամով էին պատված: Այդ սառնությունը նա միշտ իր հետ էր կրում: Նույնիսկ ամռան ամենաշոգ օրերին նրա գրասենյակը սառչում էր նրա ներկայությունից, իսկ Ծննդյան տոներին նա մեկ աստիճանով անգամ չէր մեղմացնում այդ սառնությունը: Շոգն ու ցուրտը չէին մտահոգում Սքրուջին: Ո՛չ տաք եղանակն էր նրան ջորմացնում, ո՛չ էլ ձմռան ցուրտն էր նրան սառեցնում: Ո՛չ մի հողմաաշունչ քամի նրա պես դաժան չէր, ո՛չ մի տեղատարափ ձյուն նրա պես անգութ չէր, ո՛չ մի հորդառատ անձրև նրա պես անողոք չէր: Վաստ եղանակը երբեք չէր ազդում նրա վրա: Տեղատարափ անձրևը, կարկուտը, ձյունը Սքրուջի մոտ կարող էին պարծենալ մի առավելությամբ. նրանք հաճախ էին առատորեն թափվում ներքև, իսկ Սքրուջին խորթ էր առատաձեռնությունը:

Նրան երբեք չէին կանգնեցնում փողոցում՝ ուրախ բացականչելով՝ Սքրու՛ջ, սիրելիս, ինչպե՞ս էք, ե՞րբ եք գալու եք ինձ տեսության՝: Ոչ մի մուրացկան նրանից ողորմություն չէր խնդրում, ոչ մի երեխա նրան չէր հարցնում ժամը և ոչ ոք նրան չէր խնդրում ցույց տալ այս կամ այն ճանապարհը: Նույնիսկ կույրերին առաջնորդող շները կարծես ճանաչում էին Սքրուջին և երբ հեռվից տեսնում էին նրան, իրենց տերերին քաշելով տանում էին դեպի բակերն ու մուտքերը և պոչը տարուբերելով՝ կարծես ասում էին. “Տեր իմ, լավ է աչք չունենալ, քան չար աչք ունենալ”:

Բայց այս ամենն արդյոք տխրեցնու՞ էր Սքրուջին: Այդ հենց այն էր, ինչ նրան դուր էր գալիս: Նա իր կյանքի ուղին անցնում էր բոլորից խորշելով և մարդկային ամեն մի զգացում իրենից հեռու վանելով, և ովքեր լավ ճանաչում էին նրան, ասում էին, թե նրա նպատակն էլ հենց այդ է:

Մի անգամ՝ տարվա ամենալավ օրը՝ Սուրբ Ծննդյան նախօրեին, ծեր Սքրուջն աշխատու էր իր հաշվապահական գրասենյակում: Ցուրտ, քամոտ ու մառախլաատ եղանակ էր: Սքրուջը լսում էր, թե ինչպես են մարդիկ դրսում հազալով ետ ու առաջ վազում, տաքանալու համար ձեռքերով խփում կրծքին ու ոտքերով դոփում մայթին:

Քաղաքի ժամացույցը նոր էր երեքը խփել, բայց արդեն մութ էր, ասենք՝ ամբողջ օրը լուսավորնչէր էլ եղել: Հարևան գրասենյակների լուսամուտներին վառվող մոմերի լույսերը կարմրավուն բծերի նման էին արտացոլվում թանձր ու մուգ օդում: Մշուշը թափանցում էր բոլոր ճեղքերի ու բանալու անցքերի միջով, և այդ նեղ բակում թանձր մշուճից հազիվ էին երևում նույնիսկ հանդիպակաց տները, որոնք նմանվում էին ուրվականների: Տեսնելով, թե ինչպես է գորշ ամպրծավալվում ու ծածկում շուրջբոլորը, կարելի էր մտածել, թե բնությունն ինքն է մոտակա մի վայրում հսկայական կաթսայով զարեջուր պատրաստում տոնակատարության համար:

Սքրուջը գրասենյակի դուռը կիսաբաց էր թողնում, որպեսզի կարողա Ռոբերտ Շեքլին հետևեր իր գրագրին, որը փոքր ու մութ խցում, ավելի շատ՝ ինչ-որ բնում, գրագրություն էր անում:

Սքրուջի բուխարիում թույլ կրակ էր վառվում, իսկ գրագրի մոտ կրակն այնքան թույլ էր, որ թվում էր՝ միայն մի հատիկ ածուխ է մարմրում: Բայց գրագիրը չէր կարող ածուխ ավելացնել, որովհետև Սքրուջը ածխով լի արկղը պահոտում էր իր սենյակում, և հենց որ գրագիրը ներս էր մտնում՝ գոգաթիակով ածուխ տանելու, Սքրուջն հայտարարում էր, թե ստիպված է նրան ազատել աշխատանքից: Այդ իսկ պատճառով գրագիրը փաթաթվում էր իր սպիտակ բրդյա շարֆի մեջ և

փորձում տաքանալ մոմի կրակով, բայց որովհետև գուրկ էր վառ երևակայությունից, այդ նրան չէր հաջողվում:

-Սուրբ Ծնունդյան տօնը շնորհավոր, քեռի, ուրախ տոն լինի, և Աստված քեզ պահպանի,-լսվեց մի ուրախ ձայն:

Սքրուջի գարմիկի ձայնն էր: Նա այնքան արագ ներխուժեց սենյակ, որ Սքրուջն անակնկալի եկավ, երբ նրան տեսավ իր սեղանի մետ կանգնած:

-Վահ, այս ի՞նչ հիմարությունն է,-ասաց Սքրուջը:

Սքրուջի գարմիկը, սառնամանիքի և մշուշի մեջ արագ քայլելով, այնպես Ռոբերտ Շեքլիեր տաքացել, որ թվում էր, թե ջերմություն է արձակում: Այսերը կարմրել էին, աչքերը փայլում էին, և բերանից գոլորշի էր դուրս գալիս:

-Սուրբ Ծնունդն է հիմարություն, քեռի,-հարցրեց գարմիկը,-վստահ եմ, որ դու այդ նկատի չունեիր:

Ճիշտ հասկացար,-Ասաց Սքրուջը,-ուրախ Սուրբ Ծնունդ... Դու ի՞նչ իրավունք ունես ուրախանալու, ի՞նչ առիթ ունես ուրախանալու չէ՞ որ դու բավական աղքատ ես:

-Այդ դեպքում,-ուրախ պատասխանեց գարմիկը,-դու ի՞նչ իրավունք ունես տխրելու, ի՞նչ առիթ ունես մոայլվելու չէ՞ որ դու բավական հարուստ ես: Սքրուջը, չունենալով ավելի լավ պատասխան, կրկնեց իր "հիմարություն" բառը:

-Մի՛ գայրանա, քեռի,-ասաց գարմիկը:

-Ինչպե՞ս չգայրանամ,-ատարկեց Սքրուջը,-երբ ապրում եմ քեզ նման ապուշների աշխարհում: Ուրախ Սուրբ Ծնունդ, ուրախ Սուրբ Ծնունդ: Ի՞նչ է Սուրբ Ծնունդը քեզ համար, եթե ոչ պարտքերի մարում, երբ բացարձակապես փող չունես:

Կամ երբ ժամանակն է տարեկան հաշվեկշիռ կազմելու, իսկ դու ամիսներ շարունակ ոչ մի եկամուտ չես ունեցել: Եվ չնայած տարիքդ մեծանում է մեկ տարով, բայց մի պենս անգամ չի ավելանում գրպանումդ: Եթե իմ կամքով լիներ,-գայրացած շարունակեց Սքրուջը,- կ'ուզեի՝ ամեն մի հիմար, որն "Ուրախ Սուրբ Ծնունդ" կանչելով այս ու այն կողմ է վազում, խաշվում էր իր տոնական պողպանի մեջ և թաղվում էր՝ փշարմավի ճյուղը սրտում խրված:

-Քեռի՛, -աղերսալի կանչեց գարմիկը:

-Չարմի՛կ,-շարտեց քեռին,-տոնիր Սուրբ Ծնունդը քո ձևով ու թույլ տուր, որ ես էլ իմ ձևով տոնեմ:

-Տոնի՛ր,- կրկնեց գարմիկը,-բայց չէ՞ որ դու չես տոնում այն:

-Ուրեմն հանգիստ թող ինձ: Քեզ ի՞նչ օգուտ է տվել Սուրբ Ծնունդը կամ ի՞նչ օգուտ կարող է այն քեզ տալ:

- Համարձակվում եմ ասել, որ կյանքում շատ բան կար, որից կարող էի օգտվել, բայց չեմ օգտվել,- պատասխանեց գարմիկը,- այդ թվում է նաև՝ Ծնունդյան տոնից: Եթե անգամ մոռանանք, որ Սուրբ Ծնունդը պատվում եմ նրա անվան ու ծագման սրբության համար, ես Սուրբ Ծնունդը միշտ համարել եմ տարվա լավագույն ժամանակը: Դա բարության, ներողամտության, գթառատության և ուրախության բերկրալի ժամանակն է: Միակ օրերը ամբողջ տարեցույցում, երբ տղամարդն ու կինը, ասես լուռ համաձայնությամբ, ազատորեն բացում են իրենց փակ սրտերը, երբ ամեն մարդ իր ստորադասին վերաբերվում է՝ իբր ընկրոջ, որը կյանքի նույն ուղիով դանդաղ շարժվում է դեպի

գերեզման, ոչ թե իբրև մի այլ ցեղատեսակի, որն ստիպված է այլ ուղիով գնալ: Դրա համը էլ, քեռի, թեև Ծննդյան տոներին ոսկու կամ արծաթի մի կտոր չի ավելացել իմ գրպանում, բայց ես հավատում եմ, որ Սուրբ Ծնունդն ինձ օգուտ տվել է և միշտ կտա, ու թող Աստված օրհնի Սուրբ Ծնունդը:

Գրագիրն իր մութ անկյունում ակամայից ծափահարեց, բայց անմիջապես զգալով իր արարքի անպարկեշտությունը՝ նետվեց կրակը խառնելու և հանգրեց կայծի վերջին նշույլը:

-Եթե մեկ անգամ էլ ձայնդ լսեմ,- ասաց Սքրուջը գրագրին,-աշխատանքից կ'ազատվես նախքան Սուրբ Ծնունդը: Հետո դառնալով զարմիկին՝ ավելացրեց. -Իսկ դու, պարոն, առաջնակարգ, հռետոր ես: Ջարմանում եմ, թե ինչու խորհրդարանում չես:

-Մի՛ բարկանա, քեռի: Վաղն արի մեզ մոտ ճաշելու:

Սքրուջը զարմիկի հրավերքին պատասխանեց հեզանքով և մի շարք անեծքներ թափելով՝ ասաց, թե ավելի շուտ նրան անիծված կտեսնի, քան կ'այցելի նրան:

-Բայց ինչու՞,-գոչեց զարմիկը,-ինչու՞:

-Իսկ ինչու՞ դու ամուսնացար,-հարցրեց Սքրուջը:

-Որովհետև սիրահարվել էի:

-Սիրահարվե՞լ էի,-փնթփնթաց Սքրուջտ (կարծես դա ավելի մեծ անմտություն էր, քան "ուրախ Սուրբ Ծնունդը"),-ց' տեսություն:

-Չէ՛, քեռի, դու մինչ այդ էլ ինձ տեսության չէիր գալիս: Ինչու՞ ես հիմա ամեն ինչ բարդում ամուսնությանս վրա:

-Ց' տեսություն,-ասաց Սքրուջը:

-Բայց ես քեզնից ոչինչ չեմ ուզում և ոչինչ չեմ սպասում: Մի՞ թե չենք կարող ընկերներ լինել:

-Ց' տեսություն,-ասաց Սքրուջը:

-Սրտանց ցավում եմ, որ այդքան համառ ես: Ախր մենք երբեք չենք վիճել և հիմա կարող էինք բարեկամներ լինել: Ինչևէ, ես փորձեցի մտերմանալ քեզ հետ Սուրբ Ծննդյան պատվին և չեմ փոխի իմ տոնական տրամադրությունը: Դե, ուրախ Սուրբ Ծնունդ, քեռի:

-Ց' տեսություն, ճասաց Սքրուջը:

-Ե՛վ ուրախ Նոր տարի:

-Ց' տեսություն,-ասաց Սքրուջը:

Ջարմիկը գրասենյակից դուրս եկավ առանց զայրույթի որև խոսքի: Նա կանգնեց դռան մոտ, որ տոնի առիթը շնորհավորի գրագրին, որը թեև ցրտից սառել էր, բայց Սքրուջից ջորմ գտնվեց և սիրալիկ պատասխանեց նրան:

-Եվս մի խենթ,-մրթմրթաց Սքրուջը՝ լսելով գրագրի պատասխանը,-նույնիսկ իմ խղճուկ գրագիրը, որը շաբաթական տասնհինգ շիինգ է տանում և կին ու ընտանիք ունի, խոսում է ուրախ Սուրբ Ծննդյան մասին: Մարդ սրանցից գժանոց կփախչի:

Այս խենթը, ուղեկցելով Սքրուջի զրմիկին, երկու նոր այցելու էր ընդունել: Նրանք հաղթանդամ ուրարեսես պարոններ էին՝ ձեռքներին պահած գրքեր ու թղթեր:

Նրանք գլխարկները հանած կանգնել էին գրասենյակում և, Սքրուջին տեսնելով, գլխի շարժումով քարկեցին նրան:

-Եթե չեմ սխալվում, "Սքրուջ և Մարլի" գրասենյակն է,-հարցրեց պարոններից մեկը՝ նայելով ձեռքի ցուցակին,-ու՛մ հետ եմ պատիվ ունեմ խոսելու պարոն Սքրուջի՞, թե՞ պարոն Մարլիի:

-Պարոն Մարլին արդեն յոթ տարի է, ինչ մահացել է,-պատասխանեց Սքրուջը, — ուղիղ յոթ տարի առաջ, հենց այս օրը՝ Սուրբ Ծննդեան նախօրեին, նա մահացավ:

-

Մենք չենք կասկածում, որ հանգուցեալի առատաձեռնությունը հատուկ է նաև իր գործընկերոջը, — ասաց պարոնը՝ ներկայացնելով իր փաստաթղթերը:

Եվ նա չէր սխալվում, որովհետև այդ պատվարժան գործընկերները հոգեհարազատ էին միմյանց:

Լսելով այդ չարաբաստիկ "առատաձեռնություն" բառը՝ Սքրուջը խոժոռվեց և այցելուին վերադարձրեց փաստաթղթերը:

-Տոնական այս օրերին, պարոն Սքրուջ,- շարունակեց այցելուն՝ գրիչ վերցնելով սեղանից,- ավելի քան երբևէ հարկ է, որ մենք օգնենք տառապող աղքատներին ու կարիքավորներին: Հազարավոր մարդիկ չեն կարող հոգալ իրենց նվազագույն կարիքները, հարյուր հազարավորներ գուրկ են կյանքի հասարակ պայմաններից:

-Մի՞ թե բանտեր չկան,- հարցրեց Սքրուջը:

-Իհարիե կան,- պատասխանեց այցելուն՝ գրիչը դնելով տեղը:

-Իսկ ուղղիչ գաղութներ՞,- շարունակեց Սքրուջը,- դրանք դեռ գործու՞մ են:

-Դեռ գործում են,- պատասխանեց պարոնը,- բայց ուրիս կլինեին հայտնել, որ չեն գործում:

- Ուրեմն Պատժիչ Աղացը և Աղքատների օրենքը ուժի մե՞ջ են:

-Երկուսն էլ ուժի մեջ են:

-Օ՛հ, իսկ ես ձեր խոսքերից սկսեմ վախեցա՝ կարծելով, թե դադարվեցվել է դրանց օգտակար գործունեությունը,- ասաց Սքրուջը,- շատ ուրախ եմ լսել այդ:

-Համոզված լինելով, որ այդ օրենքները և հաստատությունները չեն տալիս քրիստոնյայի հոգուն ու մարմնին անհրաժեշտ սնունդ,- պատասխանեց պարոնը,- մենք որոշել ենք հիմնադրամ ստեղծել՝ աղքատների համար մի քիչ կերակուր, խմիչք և տաք հագուստ գնելու համար: Մենք ընտրել ենք հենց այս օրերը, որովհետև սա մի ժամանակ է, երբ Կիրքը սրվում է, իսկ Առատությունն ուրախություն է պարգևում: Ինչքա՞ն գրեմ Ձեր անվան դիմաց:

- Ոչի՛նչ,- ասաց Սքրուջը:

-Դուք ուզում եք, որ Ձեր անունը չտրվի՞:

-Ուզում եմ, որ ինձ հանգիստ թողնեք,- պատասխանեց Սքրուջը,- դուք հարցնում եք, թե ես ինչ եմ ուզում, պատասխանում եմ՝ ես չեմ տոնում Սուրբ Ծնունդը և չեմ էլ ուզում անբաններից օգնել, որ Սուրբ Ծնունդ տոնեն: Ես օգնում եմ ակնարկաձև հաստատություններին, և այդ բավական թանկ է նստում ինձ վրա: Ում վիճակը լավ չէ, կարող է գնալ այդ հաստատությունները:

-Շատերը չեն կարող գնալ, իսկ մի մասն էլ գերադասում է մեռնել, քան գնալ այնտեղ:

-Եթե նրանք գերադասում են մեռնել, ավելի լավ է անեն այդ: Դրանով կկրճատվի բնակչության ավելորդ քանակը,-ասաց Սքրուջը,-և, վերջապես, ես չգիտեմ այդ մասին:

-Բայց Դուք պարտավոր եք իմանալ,-նկատեց պարոնը:

-Դա իմ գործը չէ,- հակաճանեց Սքրուջը,- ամեն մարդ պետք է իր գործով զբաղվի և չխառնվի ուրիշի գործերին: Իսկ ես շատ զբաղված եմ: Տ'տեսություն, պարոնայք:

Տեսնելով, որ շարունակելն անօգուտ է, այցելուները հեռացան: Սքրուջն ինքն իրենից գոհ և իր համար անսովոր բարձր տրամադրությամբ վերադարձավ իր գործերի:

Այդ ընթացքում մշուշն ու խավարը այնքան էին խտացել, որ մարդիկ բոցկլտացող ջահերով վազվզում էին այս ու այն կողմ՝ առաջարկելով իրենց ծառայությունները՝ գնալ կառքերի առջևից ու լուսավորել ճանապարհը:

Եկեղեցու հինավորոց աշտարակը, որի խոպոտ, հին զանգը գոթական պատուհանից գաղտագողի նայում էր Սքրուջին, դարձավ անտեսանելի և սկսեց ամպերում խփել ժամերն ու քառորդները՝ հետևից թողնելով թրթռացող ձայներ, ասես դողդողար ցրտից: Եղանակն ավելի ցրտեց: Գլխավոր փողոցին հարակից բակի անկյունում մի քանի աշխատավորներ նորոգում էին գազի խոխովակները: Նրանքք մեծ խարույկ էին վառել կրակարում, որի շուրջ հավաքվել էին մի խումբ ցնցոտիավոր մարդիկ: Նրանք տաքացնում էին իրենց ձեռքերը և աչքերը թարթելով՝ հմայված նայում բոցավոռով կրակին: Մոռացության մատնված ջրի ծորակից հոսող ջուրը, դանդաղ սառչելով, վերածվում էին մարդատյաց սառույցի: Ջահերով լուսավորված խանութները, որտեղ ջերմությունից ճտճտում էին փշարմավի ճյուղերն ու հատապտուղները, իրենց պայծառությամբ կարմրացնում էին անցորդների գունատ դեմքերը: Մսավաճառների և նպարավաճառների խանութներում առևտուրը վերածվել էր ճոխ հանդեսի, և անհնար էր հավատալ, որ այդ շքեղ տեսարանը կապ ունի այդպիսի առորյական երևույթի հետ, ինչպիսին առևտուրն է: Լորդ քաղաքապետն իր հսկայական առանձնատանը հրամաններ էր տալիս հիսուն խոհարարներին ու սպասավորներին՝ պատրաստել Սուրբ Ծննդյան տոնին, ինչպես վայել է քաղաքապետի տան անդամներին:

Նույնիսկ խղճուկ դերձակը, որին նախորդ երկուշաբթի նա տուգանել էի հինգ շիլինգ՝ հարբած լինելու և փողոցում կոխվ փնտրելու համար, իր ձեռնահարկում հաջորդ օրվա պուղինգն էր խառնում, իսկ նրա նիհար կինն ու երեխան շտապում էին դուրս գալ՝ տավարի միս գնելու: Մառախուղը թանձրանում էր, ցուրտը՝ սաստկանում:

Մարմնի մեջ թափանցող դաժան ցուրց էր: Եթե սուրբ Դունստանն իր սովորական զենքերն օգտագործելու փոխարեն այս սառնամանիքով կսմբեր սաստանի քիթը, ապա նա անկասկած կ'ոռնար այդ ուժեղ կամթոցից:

Մի պատանի, որի փոքրիկ քիթը սոված սառնամանիքը կրծել ու քաշքշել էր այնպես, ինչպես շներն են ոսկորները կրծում, մոտեցավ Սքրուջի գրասենյակի դռանը՝ փորձելով բանալու անցքից նրա համար Սուրբ Ծննդյան երգ երգել: Բայց առաջին իսկ բառերից՝ “Աստված օրհնի ձեզ, ուրախ պարոնայք, և ոչինչ ձեզ չվախեցնի...”, Սքրուջն այնպես զայրացած վերցրեց քանոնը, որ երգող պատանին սարսափահար փախավ՝ կողպեքի անցքը թողնելով մշուշին և Սքրուջին հոգեհարազատ սառնամանիքին:

Վերջապես ժամանակն էր գրասենյակը փակելու: Սքրուջը դժկամորեն իջավ բարձրադիր աթոռակից և խորդանոցում անհամբեր սպասող գրագրին անխոս հասկացրեց, որ կարելի է գնալ: Գրագիրն իսկույն հանգցրեց մումը և դրեց գլխարկը:

—Ենթադրում եմ, որ վաղն ամբողջ օրը չէք ուզում գալ աշխատանքի,— ասաց Սքրուջը:

—Եթե հարմար գտնեք, պարոն:

—Հարմար չեմ գտնում,— ասաց Սքրուջը,— այդ արդար չէ: Եթե դրա համար ես կես կրոն պակասեցնեմ Ձեր աշխատավարձից, Դուք Ձեզ վիրավորված կզգաք, ճի՞շտ է: Գրագիրը մեղմ ժպտաց:

—Բայց Դուք չէք մտածում,— շարունակեց Սքրուջը,— որ ես նույնպես ինձ վիրավորված եմ զգում, երբ չաշխատած օրվա համար Ձեզ աշխատավարձ եմ տալիս:

Գրագիրը նկատեց, որ այդ լինում է տարին մեկ անգամ:

-Այդ խղճուկ արդարացում է ամեն տարի դեկտեմբերի քսանհինգին մարդուն կողոպտելու համար,- ասաց Սքրուջը՝ վերարկուն մինչև կզակը կոճկելով,- քայց ինչպես տեսնում եմ ուզում եք ամբողջ օրն ազատ լինել: Որեմն մյուս օրը վաղ առվոտից այստեղ կլինեք: Գրագիրը խոստացավ, որ այդպես էլ կանի, և Սքրուջը փնթփնթալով դուրս եկավ: Գրասենյակն ակնթարթորեն փակվեց: Գրագիրը, որի համար վերարկուն շքեղություն էր, փաթաթվեց իր սպիտակ բրոյա շարֆով և, Սուրբ Ծննդան նախօրեին պատվին մի խումբ տղաներ հետ քսան անգամ սահելով Քորնհիլից ներքև, ինչքան ուժ ուներ արագ վազեց տուն՝ դեպի Քամդեն Թաուն՝ աչքակապուկ խաղալու իր երեխաների հետ:

Սքրուջը կերավ իր տաղտկալի ճաշը տաղտկալի պանդկոտում, որտեղ սովորաբար ճաշում էր, կարդաց բոլոր թերթերը, թերթեց իր բանկային գրքույկը և գնաց տուն՝ քնելու: Նա ապրում էր մի բնակարանում, որը ժամանակին պատկանել էր իր հանգուցյալ գործընկերոջը:

Տունը մռայլ սենյակների մի շարան էր և գտնվում էր իրար մոտ կառուցված շենքերի հետևում: Ակնհայտորեն այն ճիշտ տեղում չէր կառուցված, եւ մարդ ակամայից սկսում էր մտածել, թե վաղ պատանեկության տարիներին մյուս տների հետ պահմտոցի խաղալիս այն այդտեղ էր մտել եւ կորցրել էր ելքի ճանապարհը: Հիմա այն շատ հին ու մռայլ շենք էր, եւ բացի Սքրուջից ոչ ոք չէր ապրում այնտեղ:

Մյուս բնակարանները վարձով էին տրվում որպես գրասենյակներ:

Բակն այնքան մութ էր, որ նույնիսկ Սքրուջը, որը գիտեր բակի յուրաքանչյուր քարը, ստիպված էր խարխափելով անցնել: Մշուշն ու եղյամն այնպես էին պատել տան սև, հին մուտքը, որ թվում էր, թե Եղանակի Ոգին է իր ծանր մտորումներով նստել տան շեմին: Եվ այսպես, ակնհայտ փաստ էր, որ դռան թակիչը յուրահատուկ ոչինչ չուներ, պարզապես այն շատ մեծ էր: Ակնհայտ փաստ էր նաև այն հանգամանքը, որ Սքրուջն այդ տանը բնակվելու օրվանից ամեն առավոտ ու երեկո տեսնում էր այդ թակիչը: Կասկածի ենթակա չէր ևս մի հանգամանք. Սքրուջը բնավ օժտված չէր երևակայությամբ, ինչպես և Լոնդոն Սիթիի ցանկացած բնակիչ, բացառություն չէին անգամ (և սա համարձակ է ասված) քաղաքային խորհրդականները, մեծահարուստներն ու գիլդիայի անդամները:

Չպետք է մոռանալ նաև, որ Սքրուօը, կեսօրին մեկ անգամ հիշելով Մարլիին, այլևս երբեք չմտաբերեց յոթ տարի առաջ վախճանված իր գործընկերոջը:

Դե հիմա թող որևէ մեկն ինձ բացատրի, եթե կարող է, թե ինչպե՞ս պատահեց, որ Սքրուօը բանալին կողպեքի մեջ մտցրեց թե չէ, իր առջև տեսավ ոչ թե թակիչը, որն ի դեպ ոչ մի փոփոխության չէր ենթարկվել, այլ տեսավ Մարլիի դեմքը:

Մարլիի դեմքը: Այն ընկղմված չէր անթափանց խավարում, ինչպես բակի մյուս առարկաները: Ընդհակառակը, այն աղոտ լույս էր ճառագում, ինչպես հոտած խեցգետինը՝ մութ նկուղում: Այն ո՛չ զայրույթ էր արտահայտում, ո՛չ էլ հանդիմանանք, այլ նայում էր Սքրուօին, ինչպես սովորաբար Մարլին էր նայում՝ խորհրդավոր ակնոցները բարձրացրած խորհրդավոր ճակատին: Նրա մազերը տարօրինակ ձևով շարժվում էին, կարծես վառարանից արձակվող տաքությունից էին տարուբերվում, աչքերն էլ, չնայած լայն բացված, բայց բացարձակապես անշարժ էին: Այդ ամենը նրա մեռելային գունատության հետ սարսափ էր ներշնչում: Բայց նրա կերպարանքն այնքան սարսափելի չէր, որքան մի բան, որն ասես նրանից դուրս էր:

Երբ Սքրուօը զարմացած աչքերը հառեց այս երևույթին, այն կրկին վերածվեց դռան թակիչի: Միայն կլինի ասել, թե Սքրուօը չվախեցավ, և նրա երակներով սարսուռ չանցավ. մի բան, որ չէր զգացել մանկությունից ի վեր: Բայց մի բոպե վարանելուց հետո նա նորից բռնեց բանալին, որը թողել էր կողպեքի մեջ, վճռականորեն պտտեց, ներս մտավ և վառեց մոմը:

Նախքան դուռը փակելը նա մի պահ հապաղեց ու զգուշորեն նայեց դռան հետևը՝ ասես վախենալով նախասրահում տեսնել Մարլիի մազերի ցցված հյուսքը: Բայց դռան հետևում ոչինչ չկար, բացի պտուտակներից ու պնդողակներից, որոնցով ամրացված էր թակիչը: Սքրուօը, մրթմրթալով. “Թու՛քեզ, անիծված”, աղմուկով փակեց դուռը: Աղմուկը որոտի նման տարածվեց տան մեջ: Վերնահարկի բոլոր սենյակները և ներքնահարկում գտնվող գինեվաճառի մատանի բոլոր տակառները մեկ առ մեկ արձագանքեցին դռան դղրոյունին:

Սքրուօն արձագանքներից վախեցող մարդ չէր: Նա կողպեց դուռը և, մոմն ուղղելով, ստիճաններով դանդաղ բարձրացավ: Այս միջանցքը ձեզ կարող էր հիշեցնել մի շատ հին աստիճանավանդակ, որն այնքան լայն էր, որ կարելի էր վեց ձի լծված կառքով անցնել, կամ մի նոր ընդունված օրենք, որի սողանցքը նույնքան լայն էր: Բայց ես ուզում եմ ասել, որ այդ սանդուղքներով շատ հանգիստ կարող էր նաև դիակառք անցնել, ըստ որում լայնակի՝ կողափայտերը դեպի պատը, դուռը՝ դեպի ճաղաշարքը: Նույնիսկ այդ դեպքում աստիճանների վրայ ազատ տեղ կմնար: Գուցե պատճառն այդ էր, որ Սքրուօին թվաց, թե կիսախավարում իր առջև տեսավ շարժվող դիակառք: Փողոցի կես դյուժին գազի լապտերներն անգամ չէին կարող ինչպես հարկն է լուսավորել այդպիսի մուտքը. դե պատկերացրեք, թե Սքրուօի մոմը ինչքան քիչ էր ցրում խավարը: Սքրուօին այդ ամենը չէր անհանգստացնում. նա շարունակում էր աստիճաններով բարձրանալ: Մթությանն անվճար է, և Սքրուօը սիրում էր այն: Բայց նախքան բնակարանի ծանր դուռը փակելը, նա աչքի անցկացրեց իր սենեակները՝ համոզվելու համար, որ ամեն ինչկարգին է: Չէ՞ որ հանգուցալը Մարլիի դեմքը Սքրուօի մտքից չէր հեռանում: Նա անցավ հյուրասենյակով, ննջարանով, խորդանոցով. ամեն ինչ կարգին էր: Սեղանի տակ ոչ ոք չկար, բազմոցի տակ՝ նույնպես, բուխարիում թույլ կրակ էր մարմրում, սեղանին պատրաստ դրված էին գդալն ու ափսեն, իսկ ջեռոցին դրված էր փոքր թասով վարսակի շիլան (Սքրուօն այն օգտագործում էր հարբուխի ժամանակ): Մահճակալի տակ ոչ ոք չկար, պահարանում՝ նոյնպես, պատից կասկածելի ձևով կախված խալաթն էլ դատարկ դուրս

եկավ: Խորդանոցում ամեն ինչ իր տեղում էր. բուխարու հին ցանց, հին կոշիկներ, երկու ձկնակողով, մի եռոտանի լվացարան ու մի կրակխառնիչ:

Լիովին բավարարված՝ Սքրուջը դուռը կողպեց, բայց ոչ թե սովորականի պես, այլ բանալու երկու պտույտով: Այսպես ապահովագրելով իրեն անակնկալներից՝ նա հանեց փողկապը, հագավ խալաթը, մաշիկներն ու գիշերային թասակը և նստեց բուխարու առաջ՝ շիլան ուտելու: Բուխարու կրակը, իհարկե, շատ թույլ էր և գրեթե ոչինչ այդպիսի ցուրտ գիշերվա համար: Սքրուջն ստիպված էր կրակին մոտ նստել և խոնարհիվել նրա վրա, որ զգար մի բուռ վառելիքի ջերմությունը: Բուխարին շատ հին էր: Այն պատրաստված էր անհիշելի ժամանակներում մի հուլանդացի վաճառականի կողմից և պատված էր հնաճ հուլանդական սալիկներով, որոնք պատկերում էին տեսարաններ Սուրբ Գրքից: Այնտեղ կային Կայեններ և Աբելներ, Փարավոնի դուստրեր և Սաբայի թագուհիներ, Աբրահամներ և Բաղդասարներ, փետրաներքնակի նմանվող ամպերի վրա երկնքից իջնող ավետաբեր հրեշտակներ, փոքրիկ նավերով ծով դուրս եկող առաքյալներ, մի խոսքով՝ հարյուրավոր պատկերներ, որոնք կարող էին զբաղեցնել նրա միտքը: Բայց նրա առջև կրկին հայտնվեց յոթ տարի առաջ վախճանված Մարիի դեմքը՝ կրկին կենդանություն առած, ինչպես մարգարեի գավազանը, և ամեն ինչ կուլ տվեց: Եթե բոլոր սալիկները սպիտակ լինեին, ապա Սքրուջի խառնիխուռն խոհերի պատառիկների շնորհիվ ամեն մի սալիկի վրա կպատկերվեր Մարիի գլուխը:

—Հիմարություն է,— ասաց Սքրուջն ու սկսեց քայլել սենյակում: Մի քանի անգամ ան անկյունից քայլելուց հետո նա նորից նստեց: Երբ գլուխը հենեց աթոռի թիկնակին, նրա հայացքը կանգ առավ մի զանգի վրա. չօգտագործվող զանգ էր, որը ժամանակին ինչոր նպատակով կախել էին սենյակում և միացրել վերնահարկի բնակարաններից մեկին: Սքրուջը շատ զարմացավ և անբացատրելի վախ զգաց, երբ նկատեց, որ զանգը սկսեց ձոճվել: Սկզբում այնքան թույլ էր ձոճվում, որ հազիվ էր զնգում, բայց քիչ հետո այն բարձր դողանջեց, և նրան հետևեցին շենքի բոլոր զանգակները:

Սա հավանաբար մեկ րոպեից ավելի չտևեց, բայց Սքրուջին մեկ ժամ թվաց: Զանգերն սկսեցին դողանջել միաժամանակ ու միաժամանակ էլ լռեցին: Դրան հետևեց ներքնահարկից լսվող մի զրնգոց, կարծես գինսաճառի մառանում ինչ-որ մեկը ծանր շղթա էր քարշ տալիս տակառների վրայով: Սքրուջն ակամայից հիշեց պատմություններ այն մասին, որ տներում հայտնվող ուրվականները շղթաներ են քարշ տալիս իրենց հետ: Նկուղի դուռը դրոյդունով բացվեց, և նա սկսեց ավելի պարզ լսել շղթաների զրնգոցը: Այն անցավ ներքնի հարկով, բարձրացահ աստիճաններով և սկսեց մոտենալ Սքրուջի դռանը:

—Միննույն է, հիմարություն է,— ասաց Սքրուջը,— ես չեմ հավատում ուրվականի գոյությանը: Բայց նրա դեմքի գույնը փոխվեց, երբ մի ուրվական փակ դռան միջով անարգել մտավ սենյակ և կանգնեց նրա առջև: Այդ պահին բուխարու կրակը, որն համարյա հանգչում էր, հանկարծ բոցավառվեց. կարծես ուզում էր գոռալ. “Ես ճանաչում եմ նրան, դա Մարիի հոգին է”,— և նորից մարեց: Այո՛, դա Մարիի դեմքն էր, ճիշտ և ճիշտ նույն դեմքը: Մարին էր՝ մազերի հյուսքով, իր սովորական ժիլետով, նեղ տաբատով և երկարաճիտ կոշիկներով: Կոշիկների կապերը արձակված էին, գլխի մազերն ու հյուսքը՝ զգզված, վերարկուի փեշերը՝ ճմռթված: Նա գոտևորված էր երկար շղթայով, որը պոչի նման քարշ էր գալիս հետևից: Շղթան կազմված էր (Սքրուջն ուշադիր զննեց այն) դրամատուփերից, բանալիներից, կախովի կողպեքներից, հաշվապահական մայր մատյաններից, փաստաթղթերից ու երկաթե ճարմանդներով ծանր դրամապանակներից:

Ուրվականի մարմինն այնքան թափանցիկ էր, որ Սքրուջը, նրան նայելով, ժիլետի միջով պարզ տեսնում էր վերարկուի հետևի երկու կոճակները:

Սքրուջը հաճախ էր լսել, որ Մարլին սիրտ չունի, բայց մինչ այդ պահը երբեք չէր հավատացել դրան:

Ոչ, նույնիսկ հիմա էլ նա չէր հավատում: Չնայած նա նորից ու նորից նայեց իր առջև կանգնած ուրվականին, չնայած նա զգաց ուրվականի սահմոկեցուցիչ մահացու հայացքը և զննեց գլխաշորը, որով փաթաթված էին ուրվականի գլուխն ու կզակը՝ մտածելով, որ նախկինում այդպիսի բան չի տեսել Մարլիի վրա, այդուհանդերձ նա չէր ուզում հավատալ իր տեսածին:

—Սա ի՞նչ է,— ինչպես միշտ հեզնանքով ու սառնությամբ հարցրեց Սքրուջը,— ի՞նչ ես ուզում ինձնից:

—Շատ բան: Մարլիի ձայնն էր, կասկած չկար:

—Դու ո՞վ ես:

—Հարցրու, թե ով եմ եղել ես:—Եվ ո՞վ ես եղել դու,— հարցրեց Սքրուջը՝ ձայնը բարձրացնելով,— դու շատ պահանջկոտ ես՝ ուրվական լինելու համար: Նա ուզում էր ասել՝ “Դու շատ պահանջկոտ ես”, բայց այդպես ավելի հարմար գտավ:

—Կյանքում ես քո գործընկերն էի՝ Ջեյքոբ Մարլին:

—Դու կարո՞ղ ես... կարո՞ղ ես նստել,— հարցրեց Սքրուջը՝ կասկածանքով նայելով նրան:

—Կարող եմ:

—Դե նստի՛ր:

Սքրուջն այդ հարցը տվեց, որովհետև չգիտեր, թե այդ անմարմին էակն արդյոք կարո՞ղ է նստել, և հասկանում էր, որ չկարողանալու դեպքում նա ստիպված կլինի նրբանկատ բացատրություն տալ:

Բայց Ուրվականն այնպես նստեց բուխարու դիմաց գտնվող աթոռին, ասես դա սովորական բան էր իր համար:

—Դու չես հավատում իմ գոյությանը,— նկատեց Ուրվականը:

—Չեմ հավատում,— ասաց Սքրուջը:

—Բացի քո զգայարաններից ի՞նչը կարող է քեզ համոզել, որ ես գոյություն ունեմ:

—Չգիտեմ,— ասաց Սքրուջը:

—Ինչու՞ չես վստահում զգայարաններիդ:

—Որովհետև ամեն մի չնչին բան ազդում է զգայարաններիս վրա,— ասաց Սքրուջը,— ստամոքսի թեթևակի խանգարում, և այլևս չես կարող նրան վստահել: Գուցե քեզ տեսնում եմ այն պատճառով, որ մի կտոր դժվարամարս միս եմ կերել կամ մանանեխի մի ավելորդ կաթիլ, պանրի մի կտոր կամ կիսաեփ կարտոֆիլ: Ինչ էլ որ լինես, դու ավելի շուտ կաթսայից ես հայտնվել, քան գերեզմանից:

Սքրուջն առանձնապես սրամիտ չէր, իսկ հիմա առավել ևս տրամադրված չէր կատակելու, բայց փորձում էր սրամտել, որպեսզի շեղի իր ուշադրությունն ու մեղմացնի իր վախը, քանզի

Ուրվականի ձայնից նա մինչև ուղնուծուծը վախեցել էր: Սքրուջն զգում էր, որ ի վիճակի չէ լուռ նստել եւ սևեռուն նայել այդ անշարժ, ապակյա աչքերին: Մի սահմոկեցնող բան կար նաև Ուրվականին շրջապատող դժոխային մթնոլորտում: Սքրուջը ոչ թե զգում էր այդ, այլ պարզ տեսնում էր. Թեև Ուրվականը բոլորովին անշարժ սստած էր, բայց նրա մազերը, վերարկուի փեշերը և կոշիկների կապերը տատանվում էին, կարծես վառարանից տաքություն էր փչում նրանց վրա:

—Տեսնու՞մ ես այս ատամփորիչը,— հարցրեց Սքրուջը՝ կրկին գրոհելով վերոհիշյալ նպատակով և փորձելով գեթ մի պահ շեղել իրենից Ուրվականի ճնշող հայացքը:

—Տեսնում եմ,— պատասխանեց Ուրվականը:

—Բայց դու չես նայում,— ասաց Սքրուջը:

—Չեմ նայում, բայց տեսնում եմ,— պատասխանեց Ուրվականը:

—Դէ լավ,— շարունակեց Սքրուջը,— եթե ես սա կուլ տամ, ապա մինչև կյանքիս վերջը ինձ կհետապնդեն անհամար ուրվականներ, և բոլորն էլ՝ մտացածին: Դու հիմարություն ես, հիմարություն:

Լսելով այս բառերը՝ Ուրվականը այնպիսի սարսափելի վայնասուն արձակեց և այնպես մոլեգնած ու զարհուրած ցնցեց իր շղթաները, որ Սքրուջն ամուր բռնեց իր աթոռից, որպեսզի չընկնի: Բայց նրա սարսափն ավելի մեծացավ, երբ Ուրվականը, կարծես շոգից, գլխաշորն արձակեց, և նրա ծնոտը կախվեց: Սքրուջը ծնկի իջավ և, դեմքի առաջ ձեռքերն իրար սեղմած, ասաց. —Խնայիր ինձ, զարհուրելի Ուրվական, ինչու՞ ես ինձ տանջում:

—Երկրային բանականության տեր մարդ,— պատասխանեց Ուրվականը,— հիմա հավատու՞մ ես, որ ես իրական եմ:

—Հավատում եմ,— ասաց Սքրուջը,— ես պետք է հավատամ: Բայց ինչու՞ են հոգիները թափառում երկրի վրայ և ինչու՞ են ինձ մոտ գալիս:

—Յուրաքանչյուր մարդուց պահանջվում է,— ասաց Ուրվականը,— որ նրա հոգին շփվի ընկերների հետ՝ հետևելով նրանց և մասնակից լինելով նրանց կյանքին: Եվ նա, ով չի արել այդ իր կյանքի ընթացքում, դատապարտված է այդ անելու մահվանից հետո: Նա դատապարտված է թափառելու աշխարհով մեկ, տեսնելու մարդկային ուրախություններն ու ցավերը, որոնք այլևս չի կարող կիսել, բայց այն ժամանակ, երբ երկրի վրա էր, կարող էր կիսել ու երջանկություն պարզնել մարդկանց:

Ուրվականը նորից աղաղակեց, թափահարեց իր շղթան ու սեղմեց իր անմարմին ձեռքերը:

—Դու շղթաների մեջ ես,— խոսեց Սքրուջը,— ասա ինձ՝ ինչու՞ :

—Ես կրում եմ այն շղթան, որ ինքս եմ կրել իմ կյանքի ընթացքում, —պատասխանեց Ուրվականը,— ես այն կրել եմ օղակ առ օղակ, մետր առ մետր ու հիմա իմ ազատ կամքով կրում եմ այն: Մի՞ թե քեզ ծանոթ չէ այս շղթան:

Սքրուջն սկսեց ավելի ուժգին դողալ:

—Դու գիտե՞ս այն շղթայի քաշն ու երկարությունը, որ դու ինքդ ես կրում,— շարունակեց Ուրվականը,— յոթ տարի առաջ՝ Սուրբ Ծննդյան նախօրեին, այն սրա չափ ծանր էր ու երկար։ Դրանից հետո դու քիչ չես աշխատել այդ շղթայի վրա։ Հիմա այն ամուր ու ծանր շղթա է դարձել։ Սքրուջը նայեց իր ոտքերին՝ մտածելով, որ կտեսնի իրեն փաթաթված հիսուն կամ վաթսուն մետր երկարությամբ երկաթե շղթա, բայց ոչինչ չտեսավ։— Ջեյքոբ,— աղերսեց նա,— Ջեյքոբ Մարլի, իմ հին բարեկամ, խոսիր մի ուրիշ բանի մասին։ Մխիթարիք ինձ, Ջեյքոբ։

— Ես մխիթարություն չեմ բերում, Էբենիզր Սքրուջ,— պատասխանեց Ուրվականը,— մխիթարանքն ուրիշ ոլորտներում է, և ուրիշ սուրհանդակներ են այն փոխանցում ուրիշ բնույթի տեր մարդկանց։ Չեմ կարող ասել նաև այն ամենը, ինչ կուզեի ասել։ Չատ քիչ բան է ինձ թույլատրված։ Ես չեմ կարող հանգստանալ, չեմ կարող դանդաղել, չեմ կարող որևէ տեղ կանգ առնել։ Կյանքում հոգիս երբեք դուրս չէր եկել մեր հաշվապահական գրասենյակից, լսու՞մ ես, հոգիս երբեք չէր շրջել մեր դրամափոխանակման բնի նեղ պատերից դուրս։ Եվ հիմա տանջալից ճամփորդություն է ինձ սպասում։

Երբ Սքրուջը մտքերի մեջ էր ընկնում, սովորություն ուներ ձեռքերը դնել տաբատի գրպանները։ Եվ հիմա էլ, խորհելով Ուրվականի խոսքերի շուրջ, նա ձեռքերն ակամայից դրեց տաբատի գրպանները, բայց մնաց ծնկաչոք և հայացքը դեպի ներքև։

— Կարծես թե դանդաղ ես շարժվում, Ջեյքոբ,— գործնականորեն, բայց խոնարհաբար ու հարգալից նկատեց Սքրուջը։

— Դանդա՛ղ,— կրկնեց Ուրվականը։

— Յոթ տարի է, ինչ մահացել ես,— խորհրդածում էր Սքրուջը,— և ամբողջ այդ ընթացքում ճամփորդու՞մ ես։

— Ամբողջ այդ ընթացքում,— ասաց Ուրվականը,— առանց հանգստի ու դադարի։ Ինձ մշտապես տանջում է մեղքի զգացումը։

— Դու արա՞ց ես ընթանում,— հարցրեց Սքրուջը։

— Քամու թևերով,— պատասխանեց Ուրվականը։

— Յոթ տարում պետք է, որ մեծ տարածություն անցած լինես,— ասաց Սքրուջը։

Այս բառերը լսելով՝ Ուրվականը նորից սոսկալի աղաղակեց և գիշերվա մեռյալ լռութեան մեջ այնպես խելահեղորեն զնգզնգացրեց շղթաները, որ եթե մոտակայքում ոստիկան լիներ, նրան կմեղադրեր հասարակական կարգը խախտելու համար։

— Ով կրկնակի շղթայված գերի, որ չես հասկանում, թե անգամ անմահ էակների՝ բարիք գործելու դարավոր անխոնջ ջանքերը չեն կարող սպառել բարեգործության անսահման հնարավորությունները, որոնք չեն սպառվի նույնիսկ մինչև աշխարհի ավարտը,— գոչեց Ուրվականը։ Չես հասկանում, որ ամեն մի քրիստոնյա, սիրով կատարելով իր փոքր գործերը, ինչ էլ որ դրանք լինեն, կտեսնի, որ իր կեանքը շատ կարճ է՝ բարեգործության անսահման հնարավորություններն օգտագործելու համար։ Չես հասկանում, որ ամենախորինզղջումն անգամ չի փոխհատուցի կյանքումդ բարիք գործելու բաց թողած առիթը։ Ես էլ չէի հասկանում։ Ա՛խ, չէի հասկանում։

—Բայց դու միշտ քո գործի լավ գիտակն ես եղել, Ջեյքոբ,— ասաց Սքրուօը, որն արդեն սկսել էր նրա խոսքերն իրեն վերագրել:

—Գո՛րծ,— գոչեց Ուրվականը՝ ձեռքերը նորից սեղմելով,— իմ գործը մարդկությանը պետք է լիներ:

Ընդհանուրի բարորությունը պետք է լիներ իմ գործը, բարեգործությունը, գթասրտությունը, համբերատարությունն ու առատաձեռնությունը պետք է լինեին իմ գործերը: Իմ առևտրական գործունեությունը մի կաթիլ էր իմ գործերի համապարփակ օվկիանոսում:

Ուրվականը բարձրացրեց շղթան ու պահեց ձեռքերի վրա, կարծես իր անօգուտ տրտմության պատճառն այդ լիներ, և ուժգնորեն նետեց գետնին:

—Տարվա այս օրերին ես ավելի շատ եմ տանջվում,— ասաց Ուրվականը,— ինչու՞ ես այքերս իջեցրած անցյալ մարդկանց բազմության միջով և երբեք չբարձրացրի հայացքս դեպի այն օրհնեալ աստղը, որն առաջնորդեց մոզերին դեպի աղքատ օթևան: Չէ՞ որ նրա լույսը կարող էր նաև ինձ ցույց տալ աղքատ տների ճանապարհը:

Սքրուօը, որ շատ էր վախեցել Ուրվականի այս խոսքերից, սկսեց սաստիկ դողալ:

—Լսի՛ր ինձ,— գոչեց Ուրվականը,— ժամանակս գրեթե սպառվել է:

—Ես լսում եմ,— ասաց Սքրուօը,— բայց խղճա ինձ, Ջեյքոբ, այդպես պաթետիկ մի՛ խոսիր: Պարզ խոսիր, խնդրում եմ:

—Ես չեմ կարող ասել, թե ինչպես տեսանելի դարձա քեզ: Օրեր շարունակ ես կողքիդ եմ եղել առանց երևալու: Սա հաճելի նորություն չէր Սքրուօի համար: Նա նորից դողաց ու սրբեց ճակատի սառը քրտինքը:

—Սա իմ ապաշխարանքի դյուրին մասը չե, — շարունակեց Ուրվականը,— այս գիշեր եկել եմ քեզ զգուշացնելու, որ դու դեռ հնարավորություն և յույս ունես խուսափելու իմ ճակատագրից, քանի որ ես հոգում եմ քեզ համար, Էբենիզր:

—Դու միշտ իմ լավ ընկերն ես եղել,— ասաց Սքրուօը, — շնորհակալ եմ:

—Քեզ երեք հոգիներ կայցելեն,— շարունակեց Ուրվականը:

Սքրուօի ծնոտը կախ ընկավ Ուրվականի ծնոտի պես:

—Ա՞յդ է այն հնարավորությունն ու հույսը, որի մասին ասացիր, Ջեյքոբ,— հարցրեց նա մեղավոր ձայնով:

—Այդ է:

—Ես... ես կնախընտրեի չհանդիպել նրանց,— ասաց Սքրուօը:— Եթե այդ հոգիները քեզ չայցելեն,— ասաց Ուրվականը,— դու չես կարող խուսափել այն ուղուց, որով ես եմ գնում հիմա: Առաջին հոգուն սպասիր վաղը, երբ զանգերն ազդարարեն գիշերվա ժամը մեկը:

—Իսկ չի՞ կարելի բոլորին միասին ընդունել ու միանգամից վերջացնել ամեն ինչ,— երկչոտությամբ հարցրեց Սքրուօը:

—Երկրորդին սպասիր հաջորդ գիշեր նույն ժամին: Երրորդին՝ մյուս գիշեր, երբ ժամը տասներկուսի վերջին զարկը կդադարի թրթռալ: Ինձ այլևս մի սպասիր և լավ հիշիր իմ խոսքերը քո իսկ փրկության համար:

Այս խոսքերն ասելով՝ Մարլիի հոգին սեղանից վերցրեց իր գլխաշորը և կրկին փաթաթեց գլխին: Սքրուջն հասկացավ այդ լսելով, թե ինչպես շրխկացին նրա ատամները, երբ գլխաշորով բարձրացուած ծնոտն ընկավ իր տեղը: Երբ նա համարձակվեց բարձրացնել աչքերը, իր առջև տեսավ հասակով մեկ կանգնած և շղթայով փաթաթված անդրաշխարհիկ եկվորին: Ուրվականը հետ—հետ գնալով՝ հեռացավ Սքրուջից, նրա ամեն մի քայլի հետ պատուհանը սկսեց դանդաղ բարձրանալ, ու երբ նա հասավ պատուհանին, այն լայնորեն բացվեց: Ուրվականը ձեռքի շարժումով Սքրուջին մոտ կանչեց: Սքրուջը մոտեցավ: Երբ նրանց միջև երկու քայլ էր մնում, Ուրվականը ձեռքը բարձրացրեց՝ զգուշացնելով նրան այլևս չմոտենալ:

Սքրուջը կանգ առավ: Նա կանգ առավ ոչ այնքան հնազանդությունից, որքան զարմանքից ու վախից: Երբ Ուրվականը ձեռքը բարձրացրեց, Սքրուջն օդի մեջ ձայներ լսեց՝ ողբի ու զոջման կցկտուր ձայներ, անասելի վշտով ու ինքնաքննադատությամբ լեցուն ծանր հոգոցներ:

Մի պահ լսելուց հետո Ուրվականն իր ձայնով միացավ այդ տխուր ձայնախմբին ու դուրս ճախրելով՝ անհետացավ ցուրտ գիշերվա խավարում: Սքրուջը, հետաքրքրությունից արիացած, մոտեցավ լուսամուտին և նայեց դուրս: Երկինքը լի էր ուրվականներով, որոնք անհանգիստ այս ու այն կողմ էին ճախրում ու հառաչում: Նրանք շղթայված էին Մարլիի Ուրվականի պես, իսկ մի քանիսը (գուցե պետական հանցավոր պաշտոնյանները) իրար էին շղթայված, ոչ ոք ազատ չէր:

Նրանցից շատերին Սքրուջն անձամբ ճանաչել էր կյանքում: Նա շատ լավ էր ճանաչում սպիտակ բաճկոնով մի ծեր ուրվականի, որի ոտքի կոճին ամրացված էր վիթխարի չիրկիզվող պահարան: Նա աղեկտուր լալիս էր, որ ի վիճակի չէ օգնել տան շեմին նստած աղքատ կնոջն ու երեխային:

Մի բան ակներև էր. բոլոր ուրվականները տանջվում էին, որովհետև ուզում էին միջամտել մարդկանց գործերին և օգնել նրանց, բայց ընդմիշտ կորցրել էին այդ հնարավորությունը:

Արդյոք այդ արարածն՝ ըն անհետացան մշուշի մեջ, թե՞ մշուշը նրանց ծածկեց, Սքրուջը չէր կարող ասել: Բայց նրանք անհետացան իրենց ցնորական ձայների հետ, և գիշերը դարձավ այնպիսին, ինչպիսին էր իր տուն վերադառնալու ժամին:

Սքրուջը փակեց պատուհանը և գննեց այն դուռը, որի միջով ներս էր մտել Մարլիի Ուրվականը: Այն կողպված էր բանալու երկու պտույտով, ինչպես որ ինքն էր կողպել, սողնակներն անխափան էին: Սքրուջն ուզում էր ասել. “Հիմարություն”, բայց առաջին իսկ վանկից լռեց: Գուցե իր հույզերի, օրվա փորձությունների, անդրաշխարհիկ եկվորներին տեսնելու, Ուրվականի հետ ունեցած ծանր զրույցի կամ պարզապես ուշ ժամի պատճառով էր, որ նա հանգստի մեծ կարիք զգաց, առանց շորերը հանելու նա մտավ անկողին ու վայրկյանապես քնեց:

Երկրորդ տուն Երեք Ոգիներից առաջինը Երբ Սքրուջն արթնացավ, այնքան մութ էր, որ անկողնու միջից շուրջը նայելով՝ հազիվ կարողացավ տարբերել թափանցիկ պատուհանն անթափանց պատից:

Նա իր կզաքիսի աչքերով փորձում էր ճեղքել մթությունը, երբ լսվեց մոտակա եկեղեցու զանգի դողանջը: Սքրուջն ակնաջ դրեց զանգի զարկերին, որ իմանա, թե ժամը քանիսն է: Ի զարմանս իր ծանր զանգը զարկեց վեց անգամ, հետո յոթ, ութ... և այդպես մինչև տասներկուսը:

Հետո լռեց: Ժամը տասներկուսն էր:

Երկուսն անց էր, երբ ինքը պառկեց քնելու: Եկեղեցու ժամացույցը սխալ էր աշխատում:
Հավանաբար սառցալեզվակ էր ընկել մեխանիզմի մեջ:

Տասներկուսն էր:

Սքրուջը սեղմեց գրպանի ժամացույցի զսպանակը, որ ուղղի եկեղեցու այդ անհեթեթ ժամացույցը:

Գրպանի ժամացույցի արագահար փոքրիկ զարկերակը տասներկու անգամ խփեց ու լռեց:

—Վա՛հ,— ասաց Սքրուջը,— անհնարին է, որ ես քնած լինեմ մի ամբողջ օր՝ մինչև հաջորդ գիշերը:
Անհնարին է, որ արևին ինչոր բան պատահած լինի. հիմա կեսօրվա ժամը տասներկուսն է:

Այս մտքից նա այնպես տազնապեց, որ վեր թռավ անկողնուց ու խարխափելով մոտեցավ պատուհանին: Նա ստիպված էր խալաթի թևքով սրբել ապակու եղյամբ, որ դրսում մի բան տեսնի, բայց գրեթե ոչինչ չտեսավ: Միայն հասկացավ, որ դեռ մառախուղ է, սոսկալի ցուրտ, և չեն լսում հետ ու առաջ վազվզող և խառնաշփոթի մատնված մարդկանց ձայները, որն անխուսափելի կլիներ, եթե պայծառ օրը պարտության մատնած լիներ գիշերին և տիրած լիներ աշխարհին:

Սքրուջը թեթևացած շունչ քաշեց, որովհետև եթե այլևս օրեր չլինեին, իր բոլոր մուրհակները կարծեգրկվեին, ինչպես ամերիկյան արժեթղթերը, և այն ձևակերպումը, թե՛ “Սոյնը ստանալուց երեք օր անց Դուք պարտավոր եք վճարել պարոն Էբենիզր Սքրուջին կամ նրա վարչությանը”, այլևս իմաստ չէր ունենա: Սքրուջը նորից մտավ անկողին ու մտածե՛ց, մտածե՛ց, նորի՛ց ու նորի՛ց մտածեց, բայց ոչինչ չհասկացա: Որքան շատ էր մտածում, այնքան շատ էր խճճվում, և որքան շատ էր փորձում չմտածել, այնքան շատ էր մտածում: Մարլիի Ուրվականը նրան հանգիստ չէր տալիս: Ամեն անգամ մանրամասն վերլուծելուց հետո, երբ որոշում էր, որ այդ ամենը երագում է տեսել, նրա միտքը պիրկ զսպանակի պես հետ էր թռչում դեպի իր սկզբնական դիրքը, և նույն հարցն էր ծառանում նրա առջև՝ երա՞զ էր, թե՞ իրականություն:

Սքրուջն այս վիճակում պառկած մնաց, մինչև եկեղեցու զանգը դարձյալ երեք քառորդ խփեց, և հանկարծ հիշեց Ուրվականի զգուշացումը, որ երբ զանգն ազդարարի ժամը մեկը, իրեն կայցելեն: Սքրուջը որոշեց արթուն մնալ, մինչև որոշված ժամը: Եթե հաշվի առնենք, որ հիմա նրա համար ավելի դժվար էր քնելը, քան երկինք համբարձվելը, ապա սա անշուշտ ամենախոհեմ որոշումն էր, որ նա կարող էր կայացնել: Քառորդ ժամն այնքան երկար տևեց, որ Սքրուջն սկսեց կասկածել՝ արդյո՞ք ննջել է և բաց է թողել ժամի զարկը: Վերջապես նրա լսողությանը հասավ զանգի առաջին հարվածը: “Դինգ—դոնգ”:

—Տասներկուսն անց քառորդ,— սկսեց հաշվել Սքրուջը: “Դինգ—դոնգ”:

—Տասներկուսն անց կես,— ասաց Սքրուջը: “Դինգ—դոնգ”:

—Մեկին քառորդ պակաս,— ասաց Սքրուջը:

“Դինգ—դոնգ”:

—Ժամը մեկն է,— հաղթանակած ասաց Սքրուջը,— և ոչ ոք չկա: Նա այս բառերն արտասանեց նախքան ժամը մեկի դողանջը, որն այժմ հնչեց թավ, միապաղաղ, խուլ ու տխուր՝ ՄԵՎ:

Նույն պահին սենյակում լույս առկայծեց, և նրա անկողնու վարագույրները մի կողմ քաշվեցին, ավելի ճիշտ՝ մի ձեռք հետ քաշեց անկողնու վարագույրները, ընդ որում ո՛չ ոտքերի մոտ, ո՛չ էլ մեջքի մոտ, այլ ուղիղ դեմքի մոտ:

Վարագույրները մի կողմ քաշվեցին, և Սքրուջն անկողնում վեր թռչելով՝ դեմ-հանդիման հայտնվեց վարագույրը բացող տարաշխարհիկ այցելուի առջև՝ նրան այնքան մոտ, որքան ես եմ ձեզ մոտ՝ լինելով ձեր կողքին կանգնած հոգու մեջ:

Սքրուջն իր առջև տեսավ տարօրինակ էակի, որը նման էր երեխայի, ավելի շուտ՝ ծերունու: Նա կարծես երևում էր ինչ—որ գերբնական ապակու միջով, որը, նրան տեսադաշտից հեռացնելով, երեխայի չափ էր դարձնում: Նրա ուսերին եւ մեջքին կախված մազերը ծերունու մազերի պես սպիտակ էին, բայց դեմքին կնճիռներ չկային, այտերը վարդագույն էին: Բազուկները շատ երկար էին ու մկանուտ, ձեռքերը՝ չափազանց ուժեղ, թվում էր, թե նրա բռնածից ազատվել չի լինի: Նրա նրբակազմ սրունքներն ու ոտքերը, ինչպես մարմնի վերին մասերը, մերկ էին: Նա հազել էր ճերմակ պարեգոտ՝ գոտևորված փայլուն գեղեցիկ գոտով: Ձեռքում բռնել էր փշարմավի թարմ ու կանաչ ճյուղ և, ի հակադրություն ձմռան այս խորհրդանիշի, զգեստը զարդարել էր ամառային ծաղիկներով:

Բայց ամենատարօրինակն այն էր, որ նրա գլխի գագաթից լույսի պայծառ շիթ էր դուրս գալիս ու նրան ամբողջովին լուսավորում: Ուրվականը գլխարկի նման կրակմարիչ էր պահում բազկի տակ, որն անկասկած դնում էր գլխին, երբ չէր ուզում լուսավորուել:

Երբ Սքրուջն ավելի ուշադիր նայեց ուրվականին, նկատեց, որ այդ դեռևս նրա ամենազարմանալի հատկությունը չէր: Որովհետև ինչպես նրա գոտին էր փայլվում ու կայծկլտում՝ մի տեղ բռնկվելով, մի տեղ՝ մարելով, այդպես էլ նա ինքն էր ձևափոխվում՝ դառնալով մերթ միձեռնանի, մերթ միոտանի, մերթ քսանոտանի, մերթ երկոտանի և անգլուխ, մերթ անմարմին՝ միայն գլխով: Ընդ որում, նրա մարմնի անհետացող մասերի ուրվագծերը չէին երևում անթափանց խավարում, այլ հայչում ու կորչում էին դրա մեջ: Եվ այս հրաշքի միջից նորից հայտնվում էր ուրվականը՝ առաջուկա պես պարզ ու հստակ:

—Դուք այն Ոգի՞ն էք, պարոն, որի գալստյան մասին ինձ ասվեց,— հարցրեց Սքրուջը:

—Այո:

Ոգու ձայնը մեղմ էր ու նուրբ և այնքան ցածր, որ կարծես հեռվից էր լսվում՝ չնայած Ոգին իր կողքին էր կանգնած:

—Դուք ո՞վ էք, ի՞նչ էք,— հարցրեց Սքրուջը:

—Ես Անցյալի Սուրբ Ծննդյան Ոգին եմ:

—Վա՞ղ անցյալի,— հարցրեց Սքրուջը՝ զննելով գաճաճ էակին:

—Ոչ, քո՛ անցյալի:

Յանկարծ Սքրուջի մեջ մեծ ցանկություն առաջացավ ուրվականին տեսնել կրակմարիչը գլխին:

Եթե նրան հարցնեին՝ ինչու՞, նա չէր կարողանա պատասխանել, և խնդրեց Ուրվականին հագնել գլխարկը:

—Ի՛նչ,— գոչեց Ոգին,— բավական չէ, որ մեկն ես նրանցից, որոնց կործանարար կրքերը ստեղծեցին այս կրակմարիչն ու ստիպեցին ինձ տարիներ շարունակ կրել այն աչքերիս վրա իջեցրած, և դեռ ուզում ես քո երկրային ձեռքերով այսքան շուտ հանգցնե՛լ իմ տված լույսը:

Սքրուջն հարգանք հավաստիացրեց Ոգուն, որ երբեք մտադրություն չի ունեցել վիրավորելու նրան կամ ստիպելու գլխարկ դնել: Հետո Սքրուջը համարձակվեց հարցնել, թե ինչու է Ոգին եկել իր մոտ:

—Քո բարօրության համար,— պատասխանեց Ոգին: Սքրուջն արտահայտեց իր երախտագիտությունը, բայց մտածեց, որ գիշերվա հանգիստ քունն ավելի լավ կլիներ իր բարօրության համար: Ոգին հավանաբար կռահեց նրա միտքը, որովհետև անմիջապես ասաց. — Այդ դեպքում՝ քո փրկության համար: Ուշադիր եղիր:

Այս խոսքերով նա իր ուժեղ ձեռքը մեկնեց դեպի Սքրուջը և նրբորեն բռնեց նրա բազկից:

—Վեր կաց և հետևիր ինձ: Չուր կլիներ, եթե Սքրուջն սկսեր համոզել Ոգուն, որ եղանակն ու ժամը հարմար չեն զբոսնելու համար, որ անկողնում տաք է, իսկ դրսում՝ սառնամանիք, որ ինքը շատ թեթև է հագնված՝ մաշիկներ, խալաթ ու գիշերային թասակ, և առանց այդ էլ մրսած է: Միննույն է՝ դժվար էր դիմադրել այն ձեռքին, որը կանացի քնքշությամբ բռնել էր իր բազկից:

Սքրուջը վեր կացավ անկողնուց, բայց տեսնելով, որ Ոգին գնում է դեպի լուսամուտը, վախեցած կառչեց նրա զգեստից:

—Ես հասարակ մահկանացու եմ,— ընդդիմացավ Սքրուջը,— և կարող եմ ընկնել:

—Ձեռքիս մի հպումով,— ասաց Ոգին՝ ձեռքը դնելով նրա սրտին,— դու քեզ ապահով կզգաս ավելի, քան երբևէ: Այս խոսքերով նրանք անցան պատի միջով և հայտնվեցին մի գյուղական ճանապարհի վրա, որի երկու կողմում դաշտեր էին ձգվում: Քաղաքն ամբողջովին անհետացավ՝ հետք անգամ չթողնելով:

Միաժամանակ անհետացան խավարն ու մշուշը՝ իրենց տեղը զիջելով ցուրտ ու պարզ կա ձմեռային օրվան ու ձյունածածկ ճանապարհներին:

—Տե՛ր Աստված,— ասաց Սքրուջը՝ շուրջը նայելով ու ձեռքերն իրար զարկելով,— մանկությունս այստեղ է անցել, այստեղ եմ մեծացել: Ոգին մեղմ հայացքով նայեց Սքրուջին: Նրա ձեռքի քնքուշ հպումը, չնայած թեթևակի ու ակնթարթային էր, բայց ծեր Սքրուջի սրտում ինչ—որ զգացումներ արթնացրեց: Նա ճանաչում էր օդում թևածող հազարավոր բույրեր և հիշում յուրաքանչյուրի հետ կապված հազարավոր խոհեր, հույսեր, երջանիկ պահեր ու վաղու՛ց—վաղու՛ց մոռացված հոգսեր:

—Շուրթերդ դողում են,— ասաց Ոգին,— այդ ի՞նչ է գլորվում այտիդ վրայով: Սքրուջն իր համար անսովոր խզված ձայնով մրթմրթաց, թե բշտիկ է, և խնդրեց Ոգուն ուղեկցել առաջ:

—Դու հիշու՛մ ես այս ճանապարհը,— հարցրեց Ոգին:

—Հիշու՛մ եմ,— տաքացած գոչեց Սքրուջը,— ես աչքերս փակ կարող եմ անցնել այս ճանապարհը:

—Տարօրինակ է, որ այսքան երկար տարիներ մոռացել էիր դրա մասին,— նկատեց Ոգին,— գնանք առաջ:

Նրանք քայլեցին ճանապարհով:

Սքրուջը ճանաչում էր յուրաքանչյուր դարպաս, սյուն ու ծառ:

Վերջապես հեռվում երևաց մի փոքրիկ ավան՝ իր կամրջով, եկեղեցիով և օձագալար գետով: Երևացին արագավազ, բրդոտ, փոքր ձիեր հեծած տղաներ, որոնք ձայն էին տալիս ագարակատերերի սայլերում ու կառքերում գտնվող տղաներին:

Տղաներն այնպես ոգևորված էին միմյանց կանչում, որ լայնատարած դաշտերում ուրախ աղմուկ էր թևածում, և ցրտաշունչ օդն այն լսելով՝ հրճվում էր:

—Այս ամենն անցյալում կատարվածի տեսիլներն են,— ասաց Ոգին,— նրանք տեղյակ չեն մեր ներկայությանը:

Խանդավառ ուղևորները մոտենում էին, ու երբ բոլորովին մոտեցան, Սքրուջը ճանաչեց նրանց բոլորին և հիշեց անունները:

Ինչու՞ նա ուրախացավ, երբ տեսավ նրանց: Ինչու՞ փայլեցին նրա սառը աչքերը, և ինչու՞ սիրտը վեր թռավ, երբ նրանք անցան իր մոտով: Ինչու՞ նրա հոգին գործվանքով լցվեց, երբ լսեց, թե տղաները տուն գնալիս՝ նախքան խաչմերուկներում բաժանվելը, ինչպես են շնորհավորում միմյանց Սուրբ Ծնունդը:

Ի՞նչ էր Սուրբ Ծնունդը Սքրուջի համար: Ու՞մ էր պետք այդ Սուրբ Ծնունդը:

Ի՞նչ օգուտ էր տվել այն իրեն:

—Դպրոցում դեռ մարդ կա,— ասաց Ոգին,— մի երեխա է մնացել՝ միայնակ և ընկերների կողմից արհամարհված:

Սքրուջն ասաց, որ գիտի, ու հեկեկաց:

Նրանք մայրուղուց թեքվեցին դեպի Սքրուջին քաջածանոթ մի արահետ ու քիչ հետո մոտեցան խամրած կարմիր աղյուսից կառուցված մի մեծ տան, որի գմբեթի ծայրին աքլորաձև հողմացույց կար, իսկ գմբեթի ներսում զանգ էր կախված:

Մի մեծ տուն էր այդ՝ դժբախտ ճակատագրով, որովհետև ընդարձակ սենյակները գրեթե չէին օգտագործվում, պատերը խոնավ էին ու մամռակալված, պատուհանները կոտրված էին, դռները՝ փտած: Հավերը կչկչում ու քուջուջ էին անում ումերում, կառասներն ու չորանոցները ծածկված էին խոտով:

Տունն իր երբեմնի վիճակը չէր հիշեցնում նաև ներսից: Սքրուջն ու Ոգին մտան մռայլ միջանցք և նայելով բազմաթիվ սենյակների բաց դռներից ներս՝ տեսան աղքատիկ կահավորված, ցուրտ ու հսկայական սենյակներ: Հողի հոտ էր գալիս, ու սարսռեցնող դատարկություն էր տիրում. ասես այդտեղ մոմի լույսով էին արթնանում ու չափազանց քիչ էին ուտում: Ուրվականն ու Սքրուջը միջանցքով գնացին դեպի տան ետնամասում գտնվող դուռը: Դուռը բացվեց նրանց առջև, ու երևաց երկար, դատարկ, մռայլ սենյակ՝ հասարակ, անգույն նստարանների շարքերով, որոնք ավելի շատ էին ընդգծում սենյակի դատարկությունը: Այս նստարաններից մեկին՝ բուխարու թույլ կրակի մոտ, մի տղա նստած գիրք էր կարդում:

Սքրուջը նստեց նստարանին և արտասովեց՝ տեսնելով իր խեղճ, մոռացված կերպարանքը, ինչպիսին որ եղել էր նախկինում: Այստեղ ամեն ինչ՝ և՛ տան ներսում թաքնված արձագանքը, և՛ պանելների հետևում մկների ծվծվոցն ու վազվզոցը, և՛ կիսահալ ջրհորդանի կաթկթոցը

կիսախավար բակում, և՛ միայնակ բարդու հուսահատ հառաչանքը, և՛ դատարկ ամբարի պարապ ճոճվող դռան ճռռոցը, և՛ բուխարիում փայտի ճարճատյունը մեղմացնում էին Սքրուջի հոգին ու ճանապարհ բացում արցունքների համար: Ուրվականը դիպավ Սքրուջի ձեռքին և ցույց տվեց ընթերցանությամբ տարված նրա պատանի ուրվապատկերը:

Հանկարծ պատուհանի առջև պարզորոշ երևաց օտարականի հագուստով մի մարդ՝ գոտու մեջ խրված կացնով և փայտով բեռնված էջի սանձից բռնած:

—Ախր դա Ալի—Բաբան է,— ոգևորված բացականչեց Սքրուջը,— դա իմ սիրելի, ազնիվ ծերունի Ալի—Բաբան է: Այո, այո, ես ճանաչում եմ նրան: Մի անգամ՝ Սուրբ Ծննդյան օրը, երբ բոլորից լքված այդ երեխան մենակ էր մնացել այստեղ, Ալի—Բաբան եկավ, ինչպես հիմա:

Խեղճ տղա: Ահա և Վալենտինն ու նրա վայրի եղբայրը՝ Օրսոնը, ահա նրանք:

Իսկ ի՞նչ է այն մեկի անունը, որին ներքնագգեստով քնած գցել էին Դամասկոսի դարպասի մոտ, տեսնու՞մ էք նրան: Ահա և Սուլթանի ձիապանը, որին Ջինը գլխիվայր կախեց: Ահա նա՝ գլխիվայր շրջված:

Տեղն է նրան: Ես շատ ուրախ եմ: Նա ի՞նչ իրավունք ուներ ամուսնանալ արքայադստեր հետ:

Քաղաքում Սքրուջի գործընկերները, անշուշտ, շատ կզարմանային, եթե լսեին, թե նա ինչպես էր իրեն հատուկ ողջ լրջությամբ և ամենաարտառոց ձայնով՝ ծիծաղի ու լացի միջև, խոսում նման թեմաներով, ու տեսնեին նրա խանդավառ և հուզված դեմքը:

—Ահա և թուրակը,— բացականչեց Սքրուջը,— մարմինը կանաչ, պոչը դեղին, գլխին՝ խոտի պես աճող փոմփոլիկ: Ահա նա:

“Խեղճ Ռոբինզոն Կրուզո,— ասաց թուրակն իր տիրոջը, երբ նա տուն եկավ կղզու շուրջ նավարկելուց հետո,— խեղճ Ռոբինզոն Կրուզո, որտե՞ղ էիր, Ռոբինզոն Կրուզո”: Ռոբինզոնին թվաց, թե երազ է տեսնում, բայց ոչ, թուրակն էր խոսում, դուք գիտեք: Ահա և Ուրբաթը, կյանքը փրկելու համար վազում է դեպի փոքրիկ ծովածոց:

—Է հե՛յ, հեյ—հե՛յ:

Հետո կտրուկ փոխված տրամադրությամբ, որն իրեն հատուկ չէր, Սքրուջը կարեկցանքով նայեց իր նախկին կերպարին և ասաց. “Խեղճ տղա”, ու նորից լաց եղավ:

—Ես ուզում եմ,— մրթմրթաց Սքրուջը՝ ձեռքը տանելով գրպանը: Հետո շուրջը նայեց ու աչքերը թևքով սրբելով՝ ավելացրեց. —Բայց արդեն ուշ է:

—Ի՞նչ էիր ուզում,— հարցրեց Ոգին:

—Ոչինչ,— պատասխանեց Սքրուջը,— ոչինչ: Անցած գիշեր մի տղա գրասենյակիս դռան մոտ Ծննդյան երգ էր երգում, կուզեի նրան մի բան տված լինել, ուրիշ ոչինչ:

Ուրվականը մտախոհ ժպտաց ու ձեռքով նշան արեց՝ կարծես ասելով. “Հիմա մի ուրիշ Սուրբ Ծնունդ տեսնենք”: Այս խոսքերի հետ Սքրուջի նախկին կերպարը մեծացավ, իսկ սենյակը դարձավ ավելի մութ ու կեղտոտ: Պանելները չորացան, պատուհանները ճաքեցին, առաստաղից ծեփի կտորտանք թափվեց, և փոխարենը երևացին տանիքի մերկ տախտակները: Բայց թե ինչպես կատարվեց այդ ամենը, Սքրուջը ձեզ պես չգիտեր: Նա միայն գիտեր, որ այդ ամենը ճիշտ էր, որ

ամեն ինչ եղել էր հենց այդպես, որ ինքը կրկին մենակ էր այդտեղ, որովհետև մյուս բոլոր տղաները տոների առիթով գնացել էին տուն:

Հիմա տղան չէր կարդում, այլ հուսահատ հետ ու առաջ էր քայլում: Սքրուջը նայեց Ուրվականին և գլխի տխուր շարժումով անհանգիստ նայեց դռանը: Այն բացվեց, և սենյակ ներխուժեց տղայից տարիքով փոքր մի աղջնակ: Նա ձեռքերով փարվեց տղային և անդադար նրան համբուրելով՝ ասաց. — Իմ սիրելի, շատ սիրելի եղբայր, եկել եմ քեզ տուն տանելու:

Հետո ծափ տալով իր փոքրիկ ձեռքերով ու ծիծաղից թեքվելով առաջ՝ շարունակեց. — Եկել եմ քեզ տուն տանելու, տու՛ն, տու՛ն:

— Տու՛ն, փոքրիկ Ֆեն, — հարցրեց տղան:

— Այո, — ասաց աղջիկը՝ ուրախությունից շողալով, — տու՛ն, ընդմիջտ և հավիտյան: Հայրիկը փոխվել է, նա այնքան է բարիացել, որ տունը կարծես դրախտ է դարձել: Մի գիշեր, երբ էս գնում էի քնելու, նա այնքան քնքշորեն խոսեց ինձ հետ, որ ես չվախեցա մեկ անգամ ևս հարցնել, թե կարելի՞ է, որ դու տուն գաս: Նա ասաց. “Այո, կարելի է”, և ինձ կառքով ուղարկեց քեզ մոտ: Հիմա դու տղամարդ էս դառնալու, — ասաց փոքրիկը՝ աչքերը լայն բացած, — ու երբեք չես գալու այստեղ: Մենք միասին ենք տոներու Սուրբ Ծնունդը և բոլորից լավ ենք ժամանակ անցկացնելու:

— Դու իսկական կին ես դարձել, փոքրիկ Ֆեն, — բացականչեց տղան: Աղջիկը ծափահարեց ու ծիծաղեց և փորձեց շոյել տղայի գլուխը, բայց այնքան փոքր էր, որ ձեռքը չհասավ գլխին, և կրկին ծիծաղելով՝ կանգնեց ոտնաթաթերի վրա ու գրկեց նրան: Հետո աղջիկն իր մանկական ոգևորությամբ սկսեց տղային քաշել դեպի դուռը, իսկ վերջինս առանց երկմտելու հետևեց նրան: Այդ պահին միջանցքում մի սարսափելի ձայն գոչեց. — Իջեցրեք աշակերտ Սքրուջի սնդուկը: Եվ միջանցքում հայտնվեց ինքը՝ ուսուցիչը, որն աշակերտ Սքրուջին նայեց վայրագ հեզանքով ու սեղմելով նրա ձեռքը՝ վերջինիս լիովին շփոթության մատնեց: Հետո նա երեխաներին տարավ ընդունարան, որն ավելի շուտ նման էր սառցակալած ջրհորի: Այստեղ պատերին կախված էին ցրտից կոշտացած քարտեզներ, նույն վիճակում էին պատուհաններին դրված երկրային ու երկնային գլոբուսները: Ուսուցիչն հանեց թույլ գինով լի մի սափոր և մի կտոր ծանր կարկանդակ և, որպես դելեկատես, հրամցրեց երեխաներին: Միաժամանակ նա նիհար ծառային կարգադրեց մի բաժակ “որևէ բան” մատուցել փոստատարին: Վերջինս պատասխանեց, որ շնորհակալ է պարոնից, բայց եթե այդ այն “որևէ բանն է”, որը մի անգամ համտեսել է, ապա ավելի լավ է՝ չխամի: Այդ ընթացքում պատանի Սքրուջի սնդուկն արդեն տեղավորել էին փոստային կառքի վերնամասում, և երեխաներն առանց հապաղելու հրաժեշտ տվեցին ուսուցչին: Նրանք կառք նստեցին և ուրախ դուրս սլացան բակից՝ արագընթաց կառքի անիվներով շաղ տալով մուգ կանաչ եղևնիների եղյամն ու ձյունը:

— Նա քնքուշ էակ էր, որին թեթև զեփյուռն անգամ կարող էր ընկճել, — ասաց Ուրվականը, բայց նա մեծ սիրտ ուներ:

— Այո, դու ճիշտ ես, Ոգի, — բացականչեց Սքրուջը, — Աստված վկա՝ դու ճիշտ ես:

— Նա ամուսնացել էր և, որքան գիտեմ, երեխաներ ուներ, — ասաց Ոգին:

— Մեկ երեխա, — ուղղեց Սքրուջը:

— Ճիշտ է, — ասաց Ոգին, — քո գարմիկը:

Սքրուջը կարծես անհարմար զգաց հոգու խորքում և կարճ պատասխանեց. — Այո:

Չնայած նրանք մեկ վայրկյան առաջ էին հեռացել դպրոցից, բայց արդեն կանգնած էին մարդաշատ փողոցում, և նրանց կողքով անցուդարձ էին անում մարդկանց տեսիլքները, ճանապարհի համար կռիվ էին տալիս սայլերի ու կառքերի տեսիլքները:

Մի խոսքով, առկա էր իրական քաղաքին հատուկ ողջ աղմուկն ու քաշքշուքը: Խանութների ձևավորումից պարզ երևում էր, որ այստեղ նոյնպես Ծննդյան տոներ էին:

Արդեն երեկո էր, և փողոցներում լույսեր էին վառվում: Ուրվականը կանգ առավ մի պատահական խանութի դռան մոտ և հարցրեց Սքրուջին, թե ճանաչու՞մ է այն:

— Ճանաչում եմ, — ասաց Սքրուջը, — ես այստեղ աշակերտ եմ եղել: Նրանք ներս մտան: Տեսնելով ուելյան կեղծամով ծեր պարոնին՝ նստած այնպիսի բարձր գրասեղանի հետևում, որը եթե երկու մատնաչափ էլ բարձր լիներ, նրա գլուխը կկպչեր առաստաղին, Սքրուջը մեծ ոգևորությամբ բացականչեց. — Վա՛հ, սա ծերունի Ֆեզիվիզն է: Աստված հոգին լուսավորի, Ֆեզիվիզը նորից ողջ է:

Ծերունի Ֆեզիվիզը գրիչը դրեց սեղանին և նայեց ժամացույցին. ժամը յոթն էր: Նա ձեռքերը շփեց, ուղղեց իր լայն ժիլետը, լիաթոք ծիծաղեց՝ ոտքից գլուխ ցնցվելով, և գոչեց հաճելի, թավ, բարեհունչ, ուրախ ձայնով. — Հե՛յ, Էբենի՛զը, Դի՛ք: Սքրուջի նախկին կերպարը, այժմ՝ հասուն երիտասարդ, արագ ներս վազեց իր հետ աշակերտող ընկերոջ հետ:

— Սա Դիք Ուիլկինսն է, անշուշտ, — ասաց Սքրուջը Ուրվականին: — Աստված իմ, նա է:

Իհարկե նա է: Նա այնքան կապված էր ինձ հետ: Խե՛ղճ Դիք, Իմ սիրելի՛, սիրելի՛ Դիք:

— Հե՛յ, տղաներ, — ասաց Ֆեզիվիզը, — բավական է այսօր աշխատեք: Մուրբ Ծննդյան նախօրե է, Դիք: Մուրբ Ծնունդ է, Էբենիզը: Եկեք պատուհանի փեղկերը փակենք, քանի դեռ որևէ մեկը չի հասցրել ասել՝ Ջեք Ռոբինզոն, — գոչեց ծերունի Ֆեզիվիզը՝ ուժեղ ծափ զարկելով:

Չեք պատկերացնի, թե տղաներն ինչ արագությամբ գործի անցան: Նրանք փեղկերն առած՝ նետվեցին փողոց՝ մեկ, երկու, երեք, փեղկերը դրեցին տեղը՝ չորս, հինգ, վեց, ձողեր անցկացրին և ամրացրին՝ յոթ, ութ, ինը, և նախքան դուք կհասցնեիք հաշվել մինչև տասներկուսը, նրանք վերադարձան՝ մրցույթի նժույզների պես հնալով:

— Հե՛յ, ջան, — գոչեց ծեր Ֆեզիվիզը՝ զարմանալի աշխուժությամբ ցատկելով իր բարձր նստարանից, — ամեն ինչ հաւաքեք, տղաներ, լայն տեղ բացեք այստեղ: Քեզ տեսնեմ, Դիք, զարթնիր, Էբենիզը: Հավաքել:

Ֆեզիվիզն հետևում էր, որ ամեն ինչ հավաքվի: Եվ մեկ բոպեում ամեն ինչ արվեց: Ինչ որ շարժական էր, այնպես անհետացավ, կարծես երբեք չէր էլ եղել: Հատակը լվացվեց ու մաքրուեց, լամպերի պատրույզների ծայրերը կտրվեցին, բուխարիում վառելիք ավելացվեց, և խանութը վերածվեց ընդարձակ, տաք, մաքուր ու պայծառ պարասրահի, ինչպիսին Դուք կերազեիք տեսնել ձմռան գիշերը:

Եկավ մի ջութակահար՝ նոտաների գրքով, կանգնեց բարձր գրասեղանի առջև, ինչպես նոտակալի մոտ, և սկսեց լարել իր ջութակը՝ փորացավով տառապողի ձայներ արձակելով: Եկավ տիկին Ֆեզիվիզը՝ իր բարեհոգի, լայն ժպիտով: Եկան երեք օրիորդ Ֆեզիվիզները՝ ժպտերես և հրապուրիչ: Եկան նրանց համակրող և նրանցից մերժված վեց երիտասարդներ: Եկան խանութում աշխատող

բոլոր երիտասարդ տղամարդիկ ու կանայք: Եկավ սպասուհին իր եղբորորդու՝ հացթուխի հետ: Եկավ խոհարարուհին իր եղբոր մտերիմ ընկերոջ՝ կաթնավաճառի հետ: Եկավ դիմացի խանութում աշխատող տղան, որի մասին շշուկներ էին պտտվում, թե տերը նրան սոված է պահում: Նա փորձում էր թաքնվել մի աղջկա հետևում, որը հարևան տան սպասուհին էր, և որի մասին ասում էին, թե տիրուհին քաշում է նրա ականջները:

Եկան բոլորը՝ մեկը մյուսի հետևից, ոմանք ամաչելով, ոմանք համարձակ, ոմանք նազանքով, ոմանք կոպտորեն, ոմանք հրելով, ոմանք քաշելով, մի խոսքով՝ այս կամ այն կերպ բոլորն էլ եկան: Եվ բոլորը՝ միանգամից քսան գույզ, նետվեցին պարելու: Զույգերը միմյանց հետևից շրջանաձև վազեցին՝ սկզբում մի կողմ, հետո՝ միյուս, գույզ—գույզ՝ դեպի սենեակի մեջտեղ և դեպի հետ: Պտտվեցին տարբեր կողմեր՝ ստեղծելով գեղեցիկ խմբեր: Շարքը գլխավորող նախկին գույզը, իր տեղը զիջելով նորին, չէր հասցնում տեղ զբաղեցնել շարքի վերջում, որովհետև առաջնորդող նոր գույզը ժամանակից շուտ էր գալիս, և այդպիսով բոլոր գույզերը դարձան առաջնորդող, ու ամեն ինչ վերջնականապես խառնվեց: Երբ հասան այդ երջանիկ արդյունքին, ծեր Ֆեզիվիզը ծափահարեց, որ պարը դադարեցնեն, և բարձրաձայն ասաց. — Հրաշալի պարեցիք: Նույն բուպեին ջութակահարն իր տաքացած դեմքն իջեցրեց նախապես պատրաստված գարեջրի բաժակի վրա: Բայց լինելով հանգստի հակառակորդ՝ նա անմիջապես դեմքը բարձրացրեց բաժակից ու, չնայած պարողներ չկային, այնպես ոգևորուած նվազեց, կարծես թե նախորդ՝ ուժասպառ ջութակահարին պատգարակով տարել էին տուն, իսկ ինքը բոլորովին նոր մարդ էր և որոշել էր կամ նախորդին թողնել ստվերում, կամ տեղում մեռնել:

Հետո կրկին պարեցին, ֆանտ խաղացին, նորից պարեցին, թխվածք կերան, տաք գինի խմեցին, տապակած ու խաշած սառը միս կերան, հետո ճաշակեցին մտով կարկանդակներ և առատ զարեջուր:

Բայց երեկոյի ամենատպավորիչ պահը տապակած մսից ու խաշած մսից հետո էր, երբ ջութակահարը (ի դեպ, խորամանկ աղվես էր նա, այն մարդկանցից, որոնք իրենց գործը լավ գիտեն, և դուք կամ ես չէ, որ պետք է նրան ասեինք, թե ինչ անի) նվազեց “Մըր Ռոջեր Քովերլեյը”:

Ծեր Ֆեզիվիզը պարի հրավիրեց տիկին Ֆեզիվիզին: Նրանք առաջնորդող գույզն էին, և այդ շատ պարտավորեցնող էր: Նրանց հետևեց քսաներեք թե քսանչորս պարային գույզ. մարդիկ, որոնց հետ չէր կարելի կատակել և որոնք կարող էին անդադար պարել՝ առանց հանգիստ առնելու:

Բայց եթե նրանք երկու, կամ թեկուզ չորս անգամ շատ լինեին, միևնույն է՝ ծեր Ֆեզիվիզը նրանցից հետ չէր մնա, նմանապես և տիկին Ֆեզիվիզը: Ինչ վերաբերում է տիկին Ֆեզիվիզին, նա արժանի էր լինել նրա գույզը՝ բառի բոլոր իմաստներով:

Եթե սա չէ ամենաբարձր գովասանքը, ապա ավելի բարձր գովասանք ասեք, և ես այն կօգտագործեմ: Ֆեզիվիզի սրունքներն ասես լույս էին արձակում: Պարի ընթացքում դրանք երկու լուսնի պես շողում էին մեկ այստեղ, մեկ այնտեղ, և անհնար էր կռահել, թե որտեղ կլինեն հաջորդ պահին: Երբ ծեր Ֆեզիվիզը և տիկին Ֆեզիվիզը կատարեցին պարային բոլոր ձևերը՝ ձեռք ձեռքի սոված վազքով առաջ ու վազքով հետ, խոնարհում ու ռևերանս, հետո պտույտներ ու ձեռքերի տակով անցում, և, վերջապես, վերադարձան իրենց տեղը, Ֆեզիվիզը վեր ցատկեց և օդում այնպես ճարպկորեն կրունկներն իրար զարկեց, ասես ոտքերն աչքով արեցին պարողներին, ու առանց ճոճվելու կանգնեց:

Երբ ժամը տասնմեկը եղավ, տնային պարահանդեսն ավարտվեց: Տեր և տիկին Ֆեզիվիզները զբաղեցրին իրենց տեղերը՝ ամեն մեկը դռան մի կողմում և, սեղմելով դուրս եկող յուրաքանչյուր հյուրի ձեռքը, նրանց մաղթեցին ուրախ Սուրբ Ծնունդ: Երբ բոլորը գնացին, նրանք նույն կերպ վարվեցին երկու աշակերտների հետ: Այդպիսով ուրախ ձայները լռեցին, և տղաներին թույլատրվեց մտնել իրենց անկողինները, որոնք գտնվում էին խանութի հետնամասի վաճառասեղանի տակ:

Այս ամբողջ ընթացքում Սքրուջը խելահեղի պես էր իրեն պահում: Նա հոգով ու սրտով պարահանդեսի տեսարանում էր՝ իր նախկին կերպարի հետ: Նա ամեն ինչին մասնակցեց, ամեն ինչ վերհիշեց, ամեն ինչ վայելեց և այդ ամենից անբացատրելի հուզմունք ապրեց: Ոգուն նա հիշեց միայն այն պահին, երբ իր նախկին կերպարի ու Դիքի պայծառ դեմքերը շրջվեցին, և նկատեց, որ Ոգին ուշադիր նայում է իրեն, ու նրա գլխին ջինջ լույս է վառվում: —Շատ քիչ բան է պետք այդ հիմար մարդկանց երախտապարտ դարձնելու համար,— ասաց Ոգին:

—Շա՛տ քիչ,— արձագանքեց Սքրուջը:

Ոգին նշան արեց նրան՝ լսելու երկու աշակերտների զրույցը, որոնք ամբողջ սրտով գովաբանում էին Ֆեզիվիզին, և ասաց. —Դե ի՛նչ, մի՞թե այդպես չէ: Նա մի քանի ֆունտ է ծախսել քո այդ մահկանացուի փողից, ընդամենը երեք—չորս ֆունտ: Մի՞թե դա այնքան շատ է, որ նա արժանանա այսպիսի գովասանքի:

—Դա՛ չէ կարևորը,— ասաց Սքրուջը՝ բորբոքված նրա դիտողությունից և ակամայից խոսելով ոչ թե իր ներկա, այլ նախկին կերպարին բնորոշ ձևով,— դա՛ չէ կարևորը, Ոգի: Ֆեզիվիզն ի գորու էր ուրախացնել կամ տխրեցնել մեզ, թեթևացնել կամ ծանրացնել մեր աշխատանքը, այն դարձնել հաճելի կամ տանջալի: Եթե նույնիսկ ասես, որ դա արվում է խոսքով կամ հայացքով, այնպիսի փոքր ու աննշան բաներով, որոնք անհնար է գումարել ու հաշվել, միևնույն է, նրա պարզևած ուրախությունը մի ամբողջ հարստություն արժե:

Սքրուջն զգաց Ոգու հայացքն ու լռեց:

—Ի՛նչ պատահեց,— հարցրեց Ուրվականը:

—Առանձնապես ոչինչ,— ասաց Սքրուջը:

—Բայց կարծես ինչ—որ բան է պատահել,— համառեց Ուրվականը:

—Ոչ,— ասաց Սքրուջը,— ոչինչ չի պատահել, պարզապես կուզեի հենց հիմա երկու խոսք ասել գրագրիս, ուրիշ ոչինչ:

Երբ նա ասաց իր ցանկությունը, նրա նախկին կերպարը հանգցրեց լամպը, և Սքրուջն ու Ոգին նորից կողք կողքի հայտնվեցին դրսում:

—Ժամանակս լրանում է,— նկատեց Ոգին,— շտապիր: Այս խօսքերը ո՛չ Սքրուջին էին ուղղված, ո՛չ էլ մեկ ուրիշի, ում նա կարող էր տեսնել: Բայց դրանք անմիջապես իրենց ազդեցությունն ունեցան, և Սքրուջը կրկին տեսավ ինքն իրեն: Հիմա նա մեծ էր՝ կյանքի շեմին կանգնած երիտասարդ: Դեմքին չկային հետագա տարիների խիստ ու դաժան գծերը, բայց հոգսերն ու ընչաքաղցությունն արդեն իրենց հետքն էին թողել: Աչքերն ազահ ու անհանգիստ փայլ էին ստացել, որից երևում էր այն կիրքը, որն արմատներ էր ձգել նրա հոգում, և որ այդ աճող ծառն իր ստվերով կարող էր ամբողջովին կլանել նրան: Նա մենակ չէր, այլ նստած էր սգո զգեստով մի չքնաղ աղջկա կողքին:

Նրա արցունքոտ աչքերը փայլեցին Անցյալ Սուրբ Ծննդյան Ուրվականից բխող լույսից:

—Այս ամենը քեզ համար արժեք չունի,— մեղմ ձայնով ասաց աղջիկը,— հիմա դու մեկ այլ պաշտամունք ունես, որն ինձ հանել է քո սրտից: Եվ եթե այն ապագայում կարող է քեզ ուրախացնել ու մխիթարել, ինչպես ես կուզեի անել, ուրեմն այլևս տխրելու պատճառ չունեմ:

—Ի՞նչ պաշտամունք է քեզ հանել իմ սրտից,— հարցրեց Սքրուշը:

—Ոսկու պաշտամունքը:

—Աշխարհում արդարություն չկա,— ասաց Սքրուշը,— մարդու համար ամենավատ բանը աղքատությունն է, բայց մարդիկ ոչինչ այնքան խստորեն չեն դատապարտում, որքան հարստության ձգտումը:

—Քո ամբողջ նպատակը եղել է հեռու մնալ կյանքի մատուցած բոլոր տհաճ անակնկալներից,— քնքշորեն խոսեց աղջիկը,— նկատել եմ, որ այլևս չունես այն վեհ երազանքները, որ շահամոլության գերին ես դարձել: Մի՞ թե ես ճիշտ չեմ:— Հետո ի՞նչ,— առարկեց Սքրուշը,— ի՞նչ վատ է, որ ես վերջապես խելքի եմ եկել: Բայց քո նկատմամբ իմ վերաբերմունքը չի փոխվել:

Աղջիկը տարուբերեց գլուխը:

—Մի՞ թե փոխվել է:

—Մենք շատ վաղուց ենք նշանվել: Այն ժամանակ երկուսս էլ աղքատ էինք, բայց գոհ մեր ունեցածով և հույս ունեինք, որ մի լավ օր մեր համար աշխատանքով կբարելավվի մեր վիճակն այս աշխարհում: Բայց դու շատ ես փոխուել, երբ մենք նշանվեցինք, դու բոլորովին այլ մարդ էիր:

—Ես շատ երիտասարդ էի,— անհամբեր պատասխանեց տղան:

—Ինքդ էլ գիտես, որ հիմա այն մարդը չես, ինչ նախկինում էիր,— ասաց աղջիկը, — իսկ ես նույնն եմ մնացել: Այն ամենն, ինչ մեզ երջանկություն էր խոստանում, երբ հոգեպես մոտ էինք, այժմ մեզ վիշտ է պատճառում, որովհետեւ այլևս հոգեպես մոտ չենք: Ես չեմ պատմի, թե քանի անգամ ու ինչ ցավով եմ մտածել այդ մասին: Միայն կ'ասեմ, որ որոշել եմ քեզ ազատ թողնել:

—Բայց ես երբևէ քեզ խնդրե՞լ եմ այդ անել:

—Բառերով՝ ոչ: Երբեք:

—Այդ դեպքում՝ ինչպե՞ս:

—Քո փոխված բնավորությամբ, փոխված հոգեբանությամբ, կյանքի նկատմամբ այլ վերաբերմունքով, և այլ Հոյսով՝ որպես կյանքի գլխավոր նպատակ: Այն ամենով, ինչը արժեզրկեց իմ սերը քո աչքում: Եթե մենք նշանված չլինեինք,— ասաց աղջիկը՝ մեղմ, բայց հաստատուն հայացքով նայելով տղայի աչքերին,— ասա ինձ, դու կփնտրեի՞ր ինձ, կփորձեի՞ր հիմա տիրանալ իմ սիրուն: Ա՛խ, ոչ:

Թ՛վաց, թե տղան, հակառակ իր կամքի, համաձայն էր ասվածի հետ, բայց ճիգ գործադրելով՝ ասաց. —Այդ դու ես այդպես մտածում: :—Ես ուրախ կլինեի, եթե կարողանայի այլ կերպ մտածել,— պատասխանեց աղջիկը: Աստված վկա, երբ ես հասկացա, որ սա է ճշմարտությունը, գիտակցեցի նաև, թե որքան ծանր ու անհերքելի է այն: Եթե անգամ ազատ լինեիր, մի՞ թե կարելի է հավատալ, որ կ'ամուսնանայիր ինձ նման անո՞թիտ աղջկա հետ, դու, որ այդքան մտերիմ լինելով ինձ հետ՝

ամեն ինչում Շահ եւ փնտրում: Իսկ եթե մի պահ շեղուէիր քո գլխավոր սկզբունքից և ընտրէիր այնպիսի աղջկա, ինչպիսին ես եմ, համոզված եմ, որ դրան անմիջապէս կհետևեն ավստասանքն ու զոջումը: Ես հասկանում եմ այդ և ազատում եմ քեզ քո տված խոսքից՝ ամբողջ հոգով սիրելով այն մարդուն, որ դու էիր նախկինում: Տղան ուզեց մի բան ասել, բայց աղջիկը դեմքը շրջած շարունակեց. — Հնարավոր է, որ դու... անցեալի հուշերն են ինձ ստիպում հավատալ, որ դու ցավ կզգաս՝ ինձնից բաժանվելով: Բայց կարճ ժամանակ անց դու ուրախությամբ ինձ կմոռանաս, ինչէս անշահութաբերերագ, որից ժամանակին արթնացար: Երջանիկ լինես այն կյանքում, որ ինքդ ես ընտրել:

Աղջիկը հեռացավ, և նրանք ընդմիջտ բաժանվեցին:

— Ոգի,— ասաց Սքրուջը,— այլևս չեմ ուզում որևէ բան տեսնել: Ինձ տուն տար: Մի՞ թե քեզ հաճելի է ինձ տանջելը:

— Դու կտեսնես ևս մի տեսիլք,— բացականչեց Ոգին:

— Ո՛չ, այլևս ոչ մի տեսիլք,— ճչաց Սքրուջը, — ոչ մի տեսիլք չեմ ուզում տեսնել: Այլևս ոչինչ ցույց չտաս: Բայց համառ Ոգին բռնեց նրա բազուկներից և ստիպեց նայել հետագա իրադարձություններին: Նրանք հայտնվեցին մեկ այլ վայրում, և նրանց առջև բացվեց նոր տեսարան. մի սենյակ՝ ոչ շատ մեծ ու ոչ հարուստ, բայց շատ հարմարավետ: Բուխարու մոտ, որի մեջ ցուրտ ձմռան մասին վկայող թեժ կրակ էր վառվում, նստած էր մի գեղեցիկ երիտասարդ աղջիկ՝ այնքան նման նախորդին, որ Սքրուջին թվաց, թե նա է, մինչև որ տեսավ հենց նրան՝ այժմ վայելչագեղ տիկին դարձած և իր դստեր դիմաց նստած:

Մենյակում անտանելի աղմուկ էր, որովհետև երեխաներն ավելի շատ էին, քան Սքրուջը կարող էր հաշվել իր հուզված վիճակում: Եվ ի տարբերություն հայտնի բանաստեղծության մեջ նկարագրված նախրի, որտեղ քառասուն կովերն իրենց մեկի պէս էին պահում, այստեղ յուրաքանչյուր երեխա իրեն պահում էր քառասունի պէս:

Արդյունքում անհավատալի աղմուկ էր տիրում: Բայց այդ ոչ մեկին կարծես չէր անհանգստացնում: Ընդհակառակը, մայր ու աղջիկ, երեխաներին նայելով, սրտանց ուրախանում էին ու ծիծաղում: Իսկ երբ վերջինս միացավ նրանց չարաճճիություններին, փոքրիկ ավագակներն սկսեցին անխնա քաշքշել նրան: “Ի՛նչ ասես որ չէի տա նրանցից մեկը լինելու համար: Չնայած ես երբեք այդպես կոպիտ չէի լինի, ոչ, ոչ: Ամբողջ աշխարհի հարստության համար անգամ ես չէի քաշի կամ խառնի նրա հյուսած մազերը: Ես չէի փախցնի նրա անգին, փոքրիկ կոշիկը նույնիսկ կյանքիս փրկության համար, Աստված վկա: Ես չէի հանդգնի գրկել նրա գոտկատեղը, ինչպես այդ համարձակ ճտերն են անում: Ես կմտածեի, որ իբրև պատիժ, ձեռքս կկպչի նրա գոտկատեղին և այլևս չի պոկվի: Բայց, խոստովանում եմ, ես շատ կուզեի հպվել նրա շուրթերին, հարցեր տալ նրան՝ տեսնելու, թե ինչպես է շուրթերը բացում՝ պատասխանելու համար, նայել նրա խոնարհված աչքերի թերթերունքներին՝ առանց նրան շիկնեցնելու, արձակել նրա մազերի ալիքները, որի ամեն մի խոպոպիկն անգին հուշ է ինձ համար: Մի խոսքով, չեմ թաքցնում՝ ես կուզեի օգտվել երեխայի ամենափոքր իրավունքից և միաժամանակ լինել չափահաս տղամարդ՝ դրա արժեքը հասկանալու համար”: Բայց ահա լավեց դռան թակոց, և մի այնպիսի հարձակում հետևեց դռան, որ երիտասարդ աղջիկը, ծիծաղկոտ դեմքով ու ճմռված շորով հայտնվելով ոգևորված ու փոթորկուն խմբի կենտրոնում, հասցրեց ժամանակին ողջունել հորը, որը տուն էր եկել Մուրբ Ծննդյան խաղալիքներով ու նովերներով ծանրաբեռնված բեռնակրի հետ: Նույն րոպեին անպաշտպան բեռնակիրը խլացուցիչ աղմուկի

տակ գերի վերցվեց: Երեխաներն աթոռներ դրեցին նրա կողքին՝ որպես աստիճաններ, և մագլցելով վրան՝ մտան գրպանները, խլեցին դարչնագույն փաթեթները, ամուր բռնեցին փողկապն ու փաթաթեցին վզին, բռունցքներով խփեցին մեջքին, ոտքերով հարվածեցին նրա սրունքներին՝ արտահայտելով իրենց անգուսպ սերը նրա նկատմամբ: Չարմանքի ու հիացմունքի ինչպիսի՛ աղաղակներով էր ուղեկցվում յուրաքանչյուր փաթեթի բացումը: Եվ ինչպիսի՛ տագնապ հետևեց այն սարսափելի հայտարարությանը, թե ամենափոքրիկին բռնել են այն պահին, երբ բերանն էր դրել տիկնիկի թավան, և համոզված էին, որ նա կուլ է տվել փայտե սկուտեղին սոսնձված խաղալիք հնդկահավը: Եվ որքա՛ն մեծ եղավ մխիթարությունը, երբ պարզվեց, որ տագնապը գուր է: Այդ տանը տիրող ուրախությունը, երախտագիտությունն ու ոգևորությունը հնարավոր չէ նկարագրել ամենայն ճշգրտությամբ: Ասեմ միայն, որ երեխաներն իրենց հույզերի առաջացրած աղմուկի հետ աստիճանաբար դուրս եկան հյուրասենյակից և, սանդուղքներով բարձրանալով վերին հարկ, մտան անկողին ու հանդարտվեցին: Երբ տանտերն իր տիկնոջ և գորովանքով իրեն հակված դստեր հետ նստեց բուխարու մոտ, Սքրուջն ավելի, քան երբևէ, ուշադիր նայեց: Իսկ երբ Սքրուջը մտածեց, որ նույնքան նրբագեղ ու նույնքան կենսուրախ և շնորհալի մի ուրիշ էակ կարող էր իրեն հայր անվանել և զարնան շնչով ջերմացնել իր կյանքի դաժան ձմեռը, նրա աչքերը մշուշվեցին:

—Բեյ,— ասաց ամուսինը՝ ժպտալով շրջվելով դեպի կինը,— այսօր քո վաղեմի բարեկամին տեսա:

—Ու՞մ ես տեսել:

—Ինքդ կռահիր:

—Ինչպե՞ս կռահեմ: Դէ իհա՛րկե, կռահեցի,— նույն պահին ավելացրեց նա՝ ամուսնու հետ ծիծաղելով,— պարոն Սքրուջին:

—Այո, պարոն Սքրուջին: Ես անցնում էի նրա գրասենյակի մոտով, պատուհանը բաց էր, ներսում մոմ էր վառվում, և ես կարողացա աղոտ կերպով տեսնել նրան: Լսել եմ, որ նրա գործընկերը մահամերձ է, դրա համար էլ մենակ էր: Ինձ թվում է՝ նա բացարձակապես մենակ է ամբողջ աշխարհում:

—Ոգի,— ասաց Սքրուջն ընկճված ձայնով,— տար ինձ այստեղից:

—Ես քեզ ասացի, որ այս ամենը կատարված իրադարձությունների ուրվապատկերներն են,— պատասխանեց Ոգին,— ամեն ինչ այնպես է, ինչպես եղել է, ինձ մի՛ մեղադրիր:

—Տար ինձ այստեղից,— բացականչեց Սքրուջը,— այլևս չեմ դիմանում: Նա շրջվեց դեպի Ոգին և տեսնելով, որ վերջինս իրեն է նայում մի դեմքով, որի վրա առեղծվածային կերպով միախառնվել են զծեր այն բոլոր դեմքերից, որոնք նա քիչ առաջ տեսավ, սկսեց գոտեմարտել նրա հետ:

—Հանգիստ թող ինձ: Ետ տար ինձ: Բավական է, հեռացիր ինձնից:

Պայքարի ընթացքում, եթե կարելի է պայքար անվանել այդ, որի ընթացքում Ուրվականը մնում էր անսասան, առանց իր հակառակորդին նկատելի դիմադրություն ցույց տալու, Սքրուջը նկատեց, որ նրա գլխավերևի լույսն ավելի բարձր ու պայծառ է վառվում: Աղոտ կապ տեսնելով այդ լույսի և Ոգու՝ իր վրա ունեցած ազդեցության միջև, Սքրուջը կորզեց կրակմարիչ գլխարկը և անակնկալ շարժումով այն դրեց Ոգու գլխին: Ոգին այնպես կուչ եկավ կրակմարիչի տակ, որ այն ամբողջովին

ծածկեց նրան: Եվ չնայած Սքրուջը մարիչն ամբողջ ուժով սեղմում էր Ոգու գլխին, բայց չէր կարողանում հանգցնել լույսը, որը, դուրս հորդելով մարիչի տակից, սփռվում էր հատակին:

Հանկարծ Սքրուջը սաստիկ հոգնածություն և քնի անհաղթահարելի կարիք զգաց, իսկ քիչ անց տեսավ, որ իր ննջարանում է: Մի վերջին անգամ նա սեղմեց գլխարկը, որից նրա ձեռքը թուլացավ, ապա օրորվելով մոտեցավ անկողնուն, պառկեց ու անմիջապես քնեց:

Երբորդ տուն Երեք Ոգիներից երկրորդը Սքրուջն արթնացավ իր բարձր խոմփոցից ու նստեց մահճակալում՝ փորձելով ի մի բերել իր մտքերը: Այս անգամ կարիք չկար նրան հիշեցնելու, որ եկեղեցու զանգը շուտով կխփի ժամը Մեկը: Նա զգում էր, որ ճիշտ ժամանակին է արթնացել, որպեսզի զրուցի Ջեյքոբ Մարլիի միջնորդությամբ իր մոտ առաքված երկրորդ բանբերի հետ: Բայց զգալով, որ իրեն տհաճ սառնություն է պատում, երբ փորձում է կռահել, թե այս նոր ուրվականը ո՞ր կողմից է բացվելու վարագույրը, նա մի կողմ քաշեց բոլոր վարագույրները: Հետո նորից պառկեց ու սուր հայացքով սկսեց հսկել մահճակալի շուրջբոլորը, որ դիմավորի Ոգուն նրա հայտնվելու պահին, քանզի չէր ուզում անակնկալի գալ ու նյարդայնանալ: Անվեհեր մարդիկ, որոնք պարծենում են իրենց ճարպիկ հնարներով և պատրաստ են ամեն ինչի, ի հաստատումն իրենց մեծ ընդունակությունների ասում են, թե կարող են ամեն բան լավ անել՝ զիր ու դուռ խաղալուց մինչև մարդասպանություն: Իսկ այդ երկու ծայրայեղությունների միջև, անշուշտ, ձգվում է տարաբնույթ արարքների բավական երկար ու ընդգրկուն շարք: Սքրուջից այդքան մեծ խիզախություն չակնկալելով՝ պետք է հավաստիացնեն ձեզ, որ նա պատրաստ էր դեմ առ դեմ հանդիպել ամենատարօրինակ երևույթի, և նրան չէր կարող զարմացնել ոչինչ՝ երեխայից սկսած մինչև ոնգեղջյուրը:

Այժմ պատրաստ լինելով գրեթե ամեն ինչի՝ Սքրուջը բնավ պատրաստ չէր այդ ամենի չլինելուն: Այդ պատճառով էլ, երբ եկեղեցու զանգն ազդարարեց ժամը Մեկը, և ոչ մի տեսիլք չհայտնվեց, նա սկսեց սաստիկ դողալ: Անցավ հինգ րոպե, տասը րոպե, քառորդ ժամ, բայց ոչինչ չէր հայտնվում: Նա պառկել էր անկողնում՝ կարմրավուն լույսի ճաճանչների ճիշտ մեջտեղում, որոնք նրա վրա տարածվեցին այն պահին, երբ ժամացույցն ազդարարեց ժամը Մեկը: Եվ քանի որ Սքրուջն անգոր էր պարզելու, թե այդ լույսը որտեղից հայտնվեց և ինչ էր նշանակում, այդ նրան ավելի էր սարսափեցնում, քան եթե մի դյուժին ուրվականներ լինեին: Նրան թվաց, թե յուրահատուկ դեպք է կատարվում իր հետ՝ ինքն այրվում է՝ առանց այդ մասին գիտակցելու: Վերջապես նա սկսեց մտածել, ինչպես սկզբում կմտածեինք դուք կամ ես, քանզի փորձանքից հեռու մարդն է, որ գիտի ինչ անել և, անտարակույս, այդպես էլ վարվում է. ինչպես արդեն ասացի, նա սկսեց մտածել, որ այս ոգեղեն լույսի աղբյուրն ու գաղտնիքը կարող են լինել հարևան սենյակում, և ուշադիր նայելուց հետո նրան թվաց, թե հենց այնտեղից էլ շողարձակում է:

Երբ նա համոզվեց, որ ճիշտ է կռահել, հանգիստ վեր կացավ անկողնուց ու, մաշիկները քստքստացնելով, ուղղվեց դեպի դուռը: Հենց որ Սքրուջի ձեռքը դիպավ դռան բռնակին, մի տարօրինակ ձայն հրամայեց նրան ներս մտնել:

Սքրուջը ենթարկվեց:

Իր սեփական սենյակն էր այդ: Դրանում կասկած չկար: Բայց այն զարմանալիորեն փոխված էր. առաստաղն ու պատերը պատած էին մշտադալար ճյուղերով, սենյակը նման էր իսկական պուրակի, որի տարբեր մասերում շողողում էին պայծառ հատապտուղներ: Փշարմավի, մզամուրձի ու բաղեղի թարմ տերևներն այնպես էին անդրադարձնում լույսը, որ կարծես փոքրիկ

հայելիներ լինեին: Իսկ ծխնելույզի միջով բվոցով բարձրանում էր այնպիսի հզոր բոց, ինչպիսին երբեք չէր եղել այդ քարացած բուխարիում ո՛չ Սքրուջի օրօք, ո՛չ էլ Մարլիի: Հատակին մեծ կույտով, որ նման էր գահի, կիտված էին տապակած հնդկահավեր, սագեր, վայրի բադեր, հավեր, ապխտած խոզի միս, մեծ կտորներով տավարի միս, խոճկորներ, նրբերշիկի երկար շարաններ, մտով կարկանդակներ, սալորով պուդինգներ, ուտրեններով լի տակառներ, տաք շագանակներ, կարմրաթուշ խնձորներ, հյութեղ նարինջներ, անուշահամ տանձեր, տոնական հսկայական թխվածքներ և տաք փունջով լի գավաթներ, որոնց բուրավետ գուրբշին մշուշի պես տարածվել էր սենյակում:

Ուտեստների այս բլրի վրա հանգիստ նստել էր մի զվարթ, փառահեղ Հսկայ: Նա ձեռքում բոցավառ ջահ էր պահել, որը նման էր Առատության եղջյուրին: Հսկան այն բարձրացրեց գլխից վեր՝ Սքրուջի վրա լույս սփռելու համար, երբ վերջինս կիսաբաց դռնից ներս նայեց:

—Նե՛րս արի,— գոչեց Ոգին:

— Նե՛րս արի, մարդ, ծանոթանանք:

Սքրուջը երկյուղով ներս մտավ ու գլխիկոր կանգնեց Ոգու առջև: Նա այլևս նախկին համառ Սքրուջը չէր: Նա չէր համարձակվում աչքերը բարձրացնել և նայել Ոգու պարզ ու բարի աչքերին:

—Ես Ներկա Սուրբ Ծննդյան Ուրվականն եմ,— ասաց Ոգին,— նայիր ինձ:

Սքրուջը հարգալից ենթարկեց:

Ոգին հագել էր մուգ կանաչ պարզ պատմուճան՝ եզերված սպիտակ մորթով:

Այս հագուստն այնքան առատությամբ էր թափվում նրա ուսերից, որ նրա ծավալուն կուրծքը մերկ էր, կարծես նա կարիք չունենար իրեն որևէ արհեստական բանով ծածկելու: Հագուստի լայն ծալքերի տակից երևացող նրա ոտքերը նույնպես մերկ էին: Գլխին էլ ծածկոց չկար, բացի փշարմավի պսակից, որի վրա տեղ տեղ երևում էին փայլուն սառցալույլաներ: Նրա մուգ դարչնագույն երկար խոպոպներն արձակ էին, անկաշկանդ, ինչպես նրա կենսուրախ դեմքը, շողշողուն աչքերը, գթառատ ձեռքը, զվարթ ձայնը, ինչպես նրա պահուածքն ու երջանիկ տեսքը: Նրա գոտկատեղին կապված էր մի հնագույն թրի պատյան, բայց դատարկ ու ժանգոտ:

—Դու երբեք չե՞ս տեսել ինձ նման մեկին,— բացականչեց Ոգին:

—Երբեք,— պատասխանեց Սքրուջը:

—Երբեք չե՞ս շփվել իմ ընտանիքի երիտասարդ անդամների հետ, ուզում եմ ասել՝ իմ ավագ եղբայրների հետ, որոնք ծնվել են վերջին տարիներին (քանզի ես ամենաերիտասարդն եմ),— շարունակեց Ուրվականը:

—Իմ կարծիքով՝ ոչ,— ասաց Սքրուջը, — վախենում եմ, որ չեմ շփվել: Իսկ դու շա՞տ եղբայրներ ունես, Ոգի:

—Ավելի քան հազար ութ հարյուր,— պատասխանեց Ուրվականը:

—Հսկայական ընտանիք է, դե արի ու պահիր,— քրթմնջաց Սքրուջը:

Ներկայի Սուրբ Ծննդյան Ուրվականը վեր կացավ:

—Ոգի,— հնազանդորեն ասաց Սքրուջը,— տար ինձ, ուր որ պետք է տանես: Անցած գիշեր ես հարկադրաբար գնացի, բայց օգտակար դաս ստացա: Եթե այս գիշեր դու էլ ինձ մի բան սովորեցնես, ես պատրաստ եմ դրանից օգտակար դասեր քաղել:

—Ձեռքդ հպիր պատմուճանիս:

Սքրուջն արագ բռնեց նրա պատմուճանը:

Ակնթարթորեն անհետացավ ամեն ինչ՝ փշարմավը, մզամուրճը, կարմիր հատապտուղները, բաղեղները, հնդկահավերը, սագերը, վայրի բաղերը, հավերը, ապխտած խոզի միսը, տավարի միսը, խոճկորները, նրբերշիկները, ոստրենները, կարկանդակները, պուդինգները, միրգը և փունջը: Դրանց հետ միասին անհետացան նաև սենյակը, բուխարին, ջահի կարմրավուն լույսը, գիշերը, և Ոգին ու Սքրուջը հայտնվեցին քաղաքի փողոցներում: Այստեղ Սուրբ Ծննդյան առավոտ էր, սառնամանիք, և մարդիկ, երգելով աշխույժ ու ոչ շատ տհաճ երգ, մաքրում էին իրենց տան առջևի սալահատակի ձյունը, տանիքներից ձյունը թափում ներքև՝ խելահեղ հաճույք պատճառելով տղեկներին, որոնք նայում էին, թե ինչպես են հսկայական ձնակույտերը, գետնին թրմփալով, առաջացնում արհեստական փոքր ձյունամրրիկ:

Տների ճակատային հատվածները բավական գորշ տեսք ունեին, իսկ պատուհաններն ավելի գորշ էին՝ ի հակադրություն տանիքների ողորկ ու սպիտակ ձնածածկույթի և նույնիսկ գետնի կեղտոտ ձյան, որի վրա երկանիվ ու քառանիվ սայլերի ծանր անիվները խոր ակոսներ էին փորել: Մեծ փողոցների ճյուղավորումներում այդ ակոսները, հարյուր անգամ խաչաձևելով, առաջացրել էին դեղին հաստ տիղմով ու սառցաջրով լեցուն առվակներ, որոնք այնպես էին խճճվել, որ դժվար էր տարանջատել միմյանցից: Երկինքը մռայլ էր, և քաղաքի կարճ փողոցները սուզվել էին գոլորշու և սառը օդի աղտոտ մշուշի մեջ, որի ծանր մասնիկները մրոտ հյուլենների տարափի պես իջնում էին գետնին, ասես Մեծ Բրիտանիայի բոլոր բուխարիները, խոսքները մեկ արած, որոշել էին բոցավառվել և իրենց ուզածի չափ ծխարձակել: Ո՛չ քաղաքը, ո՛չ եղանակը առանձնապես չէին տրամադրում ուրախության, բայց փողոցներում ուրախություն էր տիրում, որպիսին չի լինում անգամ ամառային պարզկա օրերին, երբ ամենապայծառ արևն ի գորու չե ստեղծելու նման տրամադրություն: Պատճառն այն էր, որ մարդիկ, որոնք թիակներով մաքրում էին տանիքների ձյունը, ուրախ էին ու ցնծությամբ լի: Նրանք կանչում էին մեկմեկու և ժամանակ առ ժամանակ կատակով ձնագնդի նետում միմյանց վրա. ավելի անվտանգ արկ, քան այն խոսքերը, որոնք երբեմն դուրս են թռչում բերանից: Եթե ձնագնդին իր նշանակետին դիպչում էր, նրանք սրտանց ծիծաղում էին, իսկ եթե ոչ, ավելի էին ծիծաղում:

Մսավաճառների խանութները դեռ կիսով չափ բաց էին, իսկ մրգավաճառների խանութները շքեղությունից փայլում էին: Այստեղ կային շագանակով լեցուն հսկայական կլոր զամբյուղներ, որոնք նման էին կերած—խմած տարեց պարոնների ժիլետներին: Այդ պարոնները ծուլորեն կանգնում էին դռների մոտ և իրենց գիրությունից կաթուածահար՝ գլորվում փողոց: Այստեղ կային կարմրավուն, թուխ, հաստափոր իսպանական սոխեր՝ նման իսպանացիվանականների՝ ճարպից փայլվող այտերին: Դրանք դարակների վրայից անպարկեշտ խորամանկությամբ աչքով էին անում կողքով անցնող աղջիկներին, որոնք ամոթխածությամբ նայում էին առաստաղից կախված մզամուրճի ճյուղին: Կային բուրգի ձևով դասառված տանձ ու խնձոր: Կային խաղողի ողկույզներ, որոնք խանութպանի բարեհոգությամբ ուշագրավ կերպով կախված էին կեռիկներից, որպեսզի անցորդները կարողանային թուք կուլ տալով անվճար նայել: Կային ընկույզի կույտեր՝ թավշոտ ու շագանակագույն, որոնց բուրմունքը հիշեցնում էր երբեմնի անտառային զբոսանքները, երբ

խշխշոցով քայլում էիր մինչև կոճերդ հասնող չորացած տերևների միջով: Կային խորոված հաստլիկ ու թուխ խնձորներ, որոնք հատկապես գեղեցիկ էին նարնջի ու կիտրոնի դեղինի հակադրությամբ և իրենց հյութեղ տեսքով համառորեն խնդրում ու աղերսում էին՝ թղթե տոպրակով տանել տուն և ուտել ճաշից հետո: Այս ընտիր մրգերի կենտրոնում դրված թասի մեջ լողացող ոսկեգույն և արծաթագույն ձկները, թեև պատկանում էին սառնարյունների դասին, բայց կարծես հասկանում էին, թե ինչ— որ բան է կատարվում, և բերանները բացած՝ անկիրք հուզմունքով դանդաղ պտտվում էին իրենց փոքրիկ աշխարհում:

Նպարեղենի խանութը, օ՛հ, այդ նպարեղենի խանութը: Այն գրեթե փակ էր, մեկ կամ երկու փեղկ էր բաց, բայց այդ բացվածքներից ինչէ՛ր ասես, որ չէին երևում:

Կշեռքի նժարներն իջնելով վաճառասեղանի վրա՝ ուրախ գրնգում էին, առասանակն ու գլանակը արագ բաժանվում էին, թեյի և սուրճի մետաղե տուփերը աճապարարի գնդակների պես շխկշխկոցով թռչում էին վեր ու վար և հաճելի բուրմունք էին տարածում, չամիչն առատ էր ու լավագույն տեսակի, նուշը անթերի սպիտակ էր, դարչինի ձողիկները՝ երկար և ուղիղ, ու բոլոր համեմունքները սքանչելի էին, շաքարապատ մրգերն օշարակից այնպես էին ամրացել ու բծերով պատվել, որ ամենաանտարբեր նայողն անգամ չէր կարող չզգալ դրանց համն ու հոտը: Թուրք հյութեղ էր ու մսալի, ֆրանսիական սալորաչրերը համեստորեն շիկնում էին շքեղ զարդարված տուփերում, և ամեն ինչ շատ համեղ ու գեղեցիկ էր երևում Սուրբ Ծննդյան տոնական ձևավորման մեջ: Բայց գնորդներն այնքան էին շտապում ու այնպիսի խանդավառությամբ ու հոյսերով էին սպասում խոստումնալից այդ օրվան, որ դռան մոտ հրմշտում էին միմյանց՝ կոպտորեն վայր գցելով իրենց հյուսածո զամբյուղները, գնումները մոռանում էին վաճառասեղանի վրա, քիչ հետո զվազքով վերադառնում դրանց հետևից. և հարյուրավոր այդպիսի սխալներ էին գործում ամենաբարձր տրամադրությամբ:

Իսկ խանութի տերն ու գործակատարներն այնքան անմիջական էին ու զվարթ, որ սրտաձև փայլուն ճարմանդները, որոնցով ամրացրել էին գոգնոցներն իրենց հետևում, կարելի էր նրանց սեփական սրտի տեղ ընդունել, որ կրում էին արտաքինից՝ ի տես բոլորի և ի ուրախություն Սուրբ Ծննդեան օրվա ազոավների, որոնք ցանկության դեպքում կարող էին դրանք կտցահարել: Բայց շուտով զանգակատան զանգի դողանջը բոլոր բարի մարդկանց կոչեց եկեղեցի ու աղոթարան, և տօնական հագնված ուրախ բազմությունը խուժեց փողոցները: Միաժամանակ բոլոր նրբանցքներից, խուլ անկյուններից եւ անանուն խաչմերուկներից անթիվ-անհամար մարդիկ դուրս եկան, որոնք իրենց տոնական ճաշերը տանում էին հացի փուռ՝ եփելու:

Ինջույքի պատրաստվող այս աղքատ մարդկանց տեսքը կարծես շատ հետաքրքրեց Ոգուն, որովհետև նա Սքրուջի հետ միասին կանգնեց փռի դռան մոտ և, բարձրացնելով տարվող կաթասանների կափարիչները, սկսեց իր ջահից խունկ ցանել նրանց ճաշերի վրա: Իսկ ջահը սովորական չէր, որովհետև երբ ճաշ տանողներն իրար դիպչելիս վիրավորում էին միմյանց, Ոգին իր ջահից մի քանի կաթիլ էր ցանում նրանց վրա, և անմիջապես վերականգնվում էր նրանց լավ տրամադրությունը: “Ամոթ է վիճել Սուրբ Ծննդյան օրը”,— ասում էին նրանք:

Եվ այդ այդպես էր: Աստված չի սիրում գժտություն:

Սահմանված ժամին զանգերը լռեցին, փռերը փակվեցին, բայց դրանց վերնամասում ձյան հալոցքից առաջացած թաց բշտիկները և առջևի մայթից բարձրացող գոլորշին, որից կարծես

եփվում էին նաև մայթի սալիկները, հաճելիորեն վկայում էին, որ տոնական ճաշերն արդեն եփվում էին:

—Այն, ինչ ցանում ես քո ջահից, յուրահատուկ հա՞մ է տալիս ճաշին,— հարցրեց Սքրուջը:

—Այո, յուրահատուկ:

—Այսօրվա բոլո՞ր ճաշերին է այն ավելացվում,— հարցրեց Սքրուջը:

—Սիրով տրված բոլոր ճաշերին, հատկապես աղքատիկ ճաշին: —Ինչո՞ւ հատկապես աղքատիկ ճաշին:

—Որովհետև դրա կարիքն այն շատ ունի:

—Ոգի,— մի պահ մտորելով՝ ասաց Սքրուջը,— զարմանում եմ, որ դու, լինելով մեզ շրջապատող աշխարհի էակներից մեկը, ուզում ես զրկել այս մարդկանց իրենց անմեղ հաճույքներից:

—Ե՛ս,— գոչեց Ոգին:

—Դու ուզում ես նրանց զրկել շաբաթվա յուրաքանչյուր յոթերորդ օրը ճաշելու հնարավորությունից, իսկ շատերի համար, կարելի է ասել, այդ միակ օրն է, երբ իրենք իսկապես ճաշում են, ճի՞շտ է,— ասաց Սքրուջը:

—Ե՛ս,- գոչեց Ոգին:

—Զե՞ որ դու ուզում ես փակել փռերը Յոթերորդ օրը,— ասաց Սքրուջը,— իսկ դա նույն բանն է:

—Ե՛ս եմ ուզում,— բացականչեց Ոգին:

—Ներիր, եթե ես սխալվում եմ, բայց այդ արվել է քո անունից կամ, ամեն դեպքում, քո ընտանիքի անունից,— ասաց Սքրուջը:

—Ձեր այս աշխարհում շատերն են պնդում, թե ճանաչում են մեզ,— պատասխանեց Ոգին,— և մեր անունից բազում վատ գործեր են անում կրքի, մեծամտության, չարակամության, ատելության, նախանձի, խտրականության ու եսասիրության թելադրանքով: Բայց այդ մարդիկ այնքան օտար են մեզ և մեր բոլոր ազգակիցներին ու բարեկամներին, որ կարծես երբեք գոյություն չեն էլ ունեցել: Հիշիր այդ և նրանց արարքների համար միայն նրանց մեղադրիր, ոչ թե մեզ: Սքրուջը խոստացավ, որ այդպես էլ կանի, և նրանք, առաջվա պես անտեսանելի, տեղափոխվեցին քաղաքի արվարձանները: Ոգին մի ուշագրավ հատկություն ուներ, որը Սքրուջը նկատել էր դեռ փոքի մոտ. չնայած իր վիթխարի հասակին, նա կարողանում էր հեշտությամբ հարմարվել ցանկացած տեղում. ամենացածր տանիքի տակ նա այնպես վեհորեն էր կանգնում, ինչպես կարելի էր կանգնել որևէ շքեղ դահլիճում: Գուցե բարի Ոգուն հաճելի էր ցուցադրել իր այս կարողությունը, կամ գուցե նրա բարի, վեհանձն, անկեղծ բնույթն ու աղքատների նկատմամբ նրա կարեկցանքն էին, որ նրան տարան ուղիղ Սքրուջի գրագրի տուն: Նա իր հետ տարավ Սքրուջին, որը կառչել էր նրա պատմուճանից: Ոգին ժպտաց դռան շեմին ու կանգ առավ, որ իր ջահի խունկով օրհնի Բոբ Քրեչիթի կացարանը: Պատկերացնու՞մ էք, Բոբը ստանում էր շաբաթական տասնհինգ “բոբ”, այսինքն՝ շաբաթ օրերին իր քրիստոնեական անունը կրող տասնհինգ մետաղադրամ էր դնում գրպանը, բայց և այնպես Ներկա Սուրբ Ծննդյան Ոգին օրհնեց նրա չորս սենեկանոց տունը: Այդ ժամանակ հայտնվեց տիկին Քրեչիթը՝ Բոբ Քրեչիթի կինը, երկու անգամ շուտ տված աղքատիկ զգեստով, բայց զարդարված վեց պենսանոց ժապավեններով, որոնք չնայած էժան էին, բայց

գեղեցիկ տեսք էին տալիս: Նա սփռոցը փռեց իր երկրորդ դասեր՝ Բելինդա Քրեչիթի օգնությամբ, որի զգեստը նույնպես զարդարված էր ժապավեններով: Այդ ընթացքում պատանի Փիթեր Քրեչիթը պատահաբաղն ընկղմեց կարտոֆիլի կաթսայի մեջ, ու երբ նրա վերնաշապիկի (դա Բոբի սեփականությունն էր, որն այդ օրվա պատվին շնորհվել էր իր որդուն ու ժառանգին) հսկայական օձիքի ծայրերը մտան բերանը, նա ուրախացավ՝ իրեն զգալով վայելուչ հագնված, և շատ ցանկացավ ցուցադրել իր հագուստը շքեղ զբոսայգիներում:

Այդ պահին երկու կրտսեր Քրեչիթները սրընթաց ներս մտան՝ բացականչելով, թե փռի մոտ տապակած սագի հոտ են առել ու հոտից ճանաչել են, որ իրենցն է, և հրճվելով եղեսպակով ու սոխով համեմված սագի մասին վառ պատկերացումներով՝ նրանք սկսեցին պարել սեղանի շուրջը ու գովաբանել պատանի Փիթեր Քրեչիթին՝ նրան հասցնելով երկինք: Փիթերն այդ ընթացքում (թեև օձիքը գրեթե խեղդում էր նրան, բայց նա չէր պարծենում) փչելով բորբոքում էր կրակը, մինչև անշարժ կարտոֆիլները, վեր-վեր բլթբլթացնելով, սկսեցին թակել կաթսայի կափարիչը, որ հանեն իրենց ու կեղևը մաքրեն:

—Այս ո՞ր են ձեր թանկագին հայրիկը,— ասաց տիկին Քրեչիթը,— ձեր եղբայրը՝ Պատիկ Թիմն ու Մարթան: Անցած Սուրբ Ծննդյան օրն այսքան չուշացան, կես ժամ առաջ արդեն պետք է տանը լինեին:

—Մարթան այստեղ է, մայրիկ,— ներս մտնելով ասաց երիտասարդ աղջիկը:

—Մարթան այստեղ է, մայրիկ,— ճչացին երկու փոքրիկ Քրեչիթները,— ուռա՛, Մարթա, մենք այնպիսի՛ սագ ունենք:

—Աստված քեզ պահի, սիրելիս, ինչու՞ այսքան ուշացար,— ասաց միսիս Քրեչիթը՝ անդադար համբուրելով նրան և հոգատարությամբ հանելով նրա շալն ու գլխարկը:

—Շատ գործ ունեինք, մայրիկ, երեկ ամբողջ գիշեր աշխատեցինք, որ վերջացնենք,— պատասխանեց աղջիկը,— իսկ այսօր առավոտյան ստիպված էինք հավաքել:

—Ոչի՛նչ, լավ է, որ արդեն տանն ես,— ասաց միսիս Քրեչիթը,— նստիր կրակի մոտ, սիրելիս, ու տաքացիր, ի սեր Աստծո:

—Ոչ, ոչ, հայրիկն է գալիս,— ճչացին երկու փոքրիկ Քրեչիթները, որոնք հասցնում էին ամեն տեղ լինել,— թաքնվիր, Մարթա, թաքնվիր:

Մարթան թաքնվեց, և Պատիկ Թիմին ուսերին դրած՝ ներս մտավ փոքրամարմին Բոբը՝ հայրիկը, ամենաքիչը երեք մետրանոց բրդեա շարֆով՝ չհաշված առջնից կախված ծոպերը, մաշված, բայց տոնական երևալու համար կարկատված ու մաքրված հագուստով:

Ավա՛ դ, Պատիկ Թիմի ձեռքում փոքրիկ հենակ կար, իսկ ոտքերին երկաթե ձողեր էին ամրացված:

—Իսկ որտե՞ղ է մեր Մարթան,— գոչեց Բոբ Քրեչիթը՝ շուրջը նայելով:

—Նա չի գալու,— ասաց տիկին Քրեչիթը:

—Չի գալու,— կրկնեց Բոբը, և նրա բարձր տրամադրությունն հանկարծակի ընկավ:

Չէ՞ որ ինքը, որպես Թիմի ազնվացեղ նժույգ, սլացել էր եկեղեցուց մինչև տուն:

—Չի՞ գալու Սուրբ Ծննդյան օրը:

Մարթան չէր սիրում հորը տխուր տեսնել անգամ կատակով և ժամանակից շուտ դուրս եկավ պահարանի դռան հետևից ու վազեց նրա գիրկը: Այդ ժամանակ երկու փոքրիկ Քրեչիթները Պատիկ Թիմին տարան լվացքատուն, որ նա լսի, թե ինչպես է պղնձե կաթսայի մեջ երգում պուղինգը:

— Իսկ ինչպե՞ս իրեն պահեց Պատիկ Թիմը, — Բոբի դուրսահավատության վրա կուշտ ծիծաղելուց հետո հարցրեց տիկին Քրեչիթը, երբ Բոբը գորովանքով գրկել էր դստերը:

— Նա ոսկու պես երեխա է, — ասաց Բոբը, — դեռ ավելին. երկար ժամանակ մենակ նստելով՝ նա մտածկոտ է դառնում ու զարմանալի բաներ մտածում:

Տուն գալիս նա ինձ ասաց, թե հուսով է, որ եկեղեցում մարդիկ տեսան իրեն. չէ՞ որ ինքը հաշմանդամ է, և նրանց հաճելի կլինի Սուրբ Ծննդյան օրը հիշել, թե Ով է օգնել կաղ մուրացկաններին քայլել և կույրերին՝ տեսնել:

Բոբի ձայնը դողում էր, երբ պատմում էր այս պատմությունը, և անելի շատ դողաց, երբ ասաց, որ Պատիկ Թիմը մեծանալով՝ դառնում է ուժեղ ու առույգ: Բոբն ընդհատեց իր խոսքը, երբ լավեց փոքրիկ հենակի թխկոցը հատակին: Պատիկ Թիմը վերադարձավ եղբոր ու քրոջ ուղեկցությամբ և նստեց կրակի մոտ դրուած իր աթոռակին: Բոբը ծավեց թևերը (խե՛ղճ մարդ, կարծես թե դրանք կարող էին ավելի շատ մաշվել), խառնեց սափորում եղած օղիով ու կտրտած կիտրոնով տաք հեղուկը ու դրեց ջեռոցին, որ մեղմ եռա: Պատանի Փիթերն ու երկու փոքրիկ Քրեչիթները, որոնք հասցնում էին լինել ամենուր, գնացին սազը բերելու և քիչ հետո սազը ձեռքներին մեծ հանդիսավորությամբ վերադարձան: Սազի հայտնուելը այնպիսի իրարանցում առաջացրեց, որ կարելի էր մտածել, թե դա մի հազվագյուտ թռչուն է, մի փետրավոր հրաշք, որի համեմատությամբ սև կարապը սովորական բան է:

Եվ իսկապես սազը դրա նման մի բան էր այդ տանը:

Տիկին Քրեչիթը փոքրիկ կաթսայում նախապես պատրաստված կերակրահյուրը տաքացրեց, մինչև թշնոցի լավելը: Պատանի Փիթերը անհավատալի եռանդով սկսեց տրորել կարտոֆիլը: Օրիորդ Բելինդան շաքար ավելացրեց խնձորի խյուսին: Մարթան սրբեց տաք ափսեները: Բոբը Պատիկ Թիմին նստեցրեց իր կողքին՝ սեղանի անկյունում: Երկու փոքրիկ Քրեչիթները աթոռներ դրեցին բոլորի համար՝ չմոռանալով նաև իրենց համար դնել և, սեղանի մոտ պահակության կանգնելով, գդալները դրեցին բերանները, որ մինչև իրենց հերթը հասնելը չաղաղակեն, թե սազ են ուզում:

Վերջապես սեղանը պատրաստ էր, ասվեց գոհության աղոթքը: Դրան հաջորդեց քար լռություն, որովհետև տիկին Քրեչիթը, մսի դանակը ծայրից ծայր դանդաղ գննելով, պատրաստվում էր այն խրել սազի կուրծքը: Երբ այդ արվեց ու դուրս թափվեց երկար սպասված լցոնը, հիացմունքի միահամուռ ալիք բարձրացավ սեղանի շուրջը:

Նույնիսկ Պատիկ Թիմը, երկու փոքրիկ Քրեչիթների հորդորներով դանակի կոթը սեղանին թխկթխկացնելով, թույլ ճչաց՝ ուռա: Այդպիսի սազ չի եղել երբեք:

Բոբն ասաց, որ չի հավատում, թե երբևէ այդպիսի համեղ սազ պատրաստված լինի:

Դրա փափկությունն ու բուրմունքը, մեծությունն ու էժանությունը համընդհանուր հիացմունք էին առաջացրել: Խնձորի ու կարտոֆիլի խյուսի հետ այն բավարարեց ողջ ընտանիքին: Իրոք, ինչպես տիկին Քրեչիթը հիացմունքով նկատեց (ափսեում մի փոքրիկ ոսկոր հայտնաբերելով), նրանք լրիվ չէին կերել: Բայցևայնպես բոլորը կուշտ էին, հատկապես ամենափոքրիկ Քրեչիթները, որոնք մինչև

հոնքերը թաթախվել էին եղեսպակի ու սոխի լցոնով: Իսկ հիմա, երբ օրիորդ Բելինդան փոխեց ափսեները, տիկին Քրեչիթը մենակ դուրս եկավ սենյակից՝ պուդինգը կաթսայից հանելու և ներս բերելու համար: Նա այնքան հուզված էր, որ ուզում էր այդ անել առանց վկաների:

Իսկ եթե այն կիսաեփ լինի:

Իսկ եթե հանելիս այն փշրուի՞:

Իսկ եթե որևէ մեկը բարձրացել է ետնաբակի պատի վրայով ու գողացել է այն, մինչ նրանք ուրախանում էին սագով:

Այս վերջին ենթադրությունից փոքրիկ Քրեչիթները գունատվեցին: Ի՛նչ սարսափելի ենթադրություն ասես, որ չէր անցնում նրանց մտքով:

Ուշադրություն: Գոլորշու մեծ ամպ բարձրացավ: Պուդինգն էր հանվել պղնձե կաթսայից: Լվացքի հոտ էր գալիս: Անձեռոցիկից էր, որ դրված էր կաթսայի բերանին՝ կափարիչի տակ: Հոտն հիշեցնում էր պանդոկ, որի կողքին հրուշակագործի տունն է, իսկ նրա հարևանությամբ՝ լվացարարուհու տունը: Այդ պուդինգն էր:

Կես բուլեից ներս մտավ տիկին Քրեչիթը՝ շառագունած, բայց հպարտ ժպտալով, ձեռքին՝ պուդինգը, որը նման էր պտավոր ռումբի, կարծր ու ամուր, չորս կողմից բրենդիով բոցավառված և զարդարված զագաթին խրված Սուրբ Ծննդյան փշարմավի ճյուղով: Օ՛, հրաշալի պուդինգ է: Բոբ Քրեչիթը մեղմ ձայնով հայտարարեց, որ տիկին Քրեչիթի ամենամեծ հաջողությունն է այդ իրենց ամուսնության օրվանից:

Տիկին Քրեչիթն ասաց, որ իր սրտից մի ծանր քար ընկավ, և խոստովանեց, որ վախենում էր՝ այլուրը չբավարարի: Բոլորն ուզում էին ինչ—որ բան ասել պուդինգի մասին, բայց ոչ ոք չասաց կամ չնտածեց էլ, որ այն շատ փոքր պուդինգ էր այդքան մեծ ընտանիքի համար. այդ ուղղակի հերետիկոսություն կը լիներ:

Քրեչիթներից յուրաքանչյուրը կշիկներ, եթե նման բան ակնարկեր:

Վերջապես ճաշկերույթն ավարտվեց, սփռոցը մաքրեցին, բուխարու ներսն ավլեցին ու կրակ վառեցին:

Երբ համտեսվեց սափորի պարունակությունն ու անթերի գնահատվեց, սեղանին դրվեցին խնձոր ու նարինջ, իսկ բուխարու մեջ գոգաթիակով շագանակներ դրվեցին: Հետո Քրեչիթների ամբողջ ընտանիքը հավաքվեց բուխարու շուրջը, որը Բոբ Քրեչիթը, նկատի ունենալով կիսաշրջանը, անվանում էր շրջան կազմել: Բոբ Քրեչիթի արմունկի մոտ դրված էր ընտանեկան ապակեղենի հավաքածուն՝ երկու բաժակ և մի գավաթ՝ առանց բռնակի: Այդ բաժակներով նույնքան լավ կարելի էր ըմպել սափորի տաք խմիչքը, որքան և ոսկյա գավաթներով:

Բոբն այն մատուցեց պայծառ դեմքով, այդ ընթացքում շագանակները կրակի մեջ աղմուկով ճթճթում էին ու ճաքում: Այնուհետև Բոբը կենաց առաջարկեց. —Ուրախ

Սուրբ Ծնունդ լինի, սիրելիներս, Աստված մեզ օրհնի:

Ամբողջ ընտանիքը կրկնեց նրա խոսքերը:

—Աստված մեզ օրհնի,— վերջում ասաց Պատիկ Թիմը:

Նա նստել էր փոքրիկ աթոռին՝ ամուր սեղմված հորը:

Բոբը գորովանքով բռնել էր նրա թույլ ձեռքը, կարծես վախենում էր, որ փոքր որդուն կտանեն իր կողքից, և ուզում էր իր մոտ պահել նրան:

—Ոգի,— ասաց Սքրուշը այնպես մտահոգված, ինչպես երբեք չէր եղել,— ասա ինձ, Պատիկ Թիմը կապրի՞:

—Ես դատարկ աթոռ եմ տեսնում այդ աղքատիկ օջախի անկյունում,— պատասխանեց Ուրվականը,— և մի հենակ՝ առանց տիրոջ, բայց խնամքով պահպանված: Եթե Ապագան փոփոխություն չմտցնի դեպքերի ընթացքի մեջ, ապա երեխան կմեռնի:

—Ո՛չ, ո՛չ,— ասաց Սքրուշը,— օ՛, ո՛չ, բարի Ոգի: Ասա՛, որ ճակատագիրը կլինայի նրան:

—Եթե Ապագան փոփոխություն չմտցնի դեպքերի ընթացքի մեջ,— պատասխանեց Ուրվականը,— իմ տոհմից ոչ ոք այլևս նրան այստեղ չի գտնի: Հետո՞ ինչ, եթե նա մեռնելու է, թող մեռնի և կրճատի բնակչության ավելորդ քանակը:

Լսելով, որ Ոգին մեջբերում է իր իսկ բառերը, Սքրուշը գլուխը խոնարհեց՝ զղջման ու վշտի դառը զգացումով:

—Մարդ,— ասաց Ուրվականը,— եթե կրծքիդ տակ սիրտ է, այլ ոչ թե քար, խուսափիր այդ չարամիտ բառերից, քանի դեռ չես հասկացել, թե Ինչն է ավելորդ, և Որտեղ է այն: Դու՞ ես որոշողը, թե ով պետք է ապրի, և ով՝ մեռնի: Գուցե Աստծո առաջ դու ավելի անարժան ես և ավելորդ՝ ապրելու համար, քան այս աղքատմարդու երեխայի նման միլիոնավորները: Տե՛ր Աստված, տերևի վրայի Միջատը խոսում է փոշու մեջ ապրող իր սոված եղբայրների՝ չափից շատ լինելու մասին:

Ուրվականի այս կշտամբանքից Սքրուշը գլուխն իջեցրեց և դողալով՝ հայացքը նետեց գետնին, բայց լսելով իր անունը՝ աչքերն արագ բարձրացրեց:

—Պարոն Սքրուշի կենացը,— ասաց Բոբը,— խմենք պարոն Սքրուշի կենացը, որն այս ճաշկերույթի հովանավորն է:

—Դե իհա՛րկե, այս ճաշկերույթի հովանավորն րն է,—բացականչեց տիկին Քրեչիթը շառագունելով,— շատ կուզեի, որ այստեղ լինեք:

Ես մի երկու խոսք կհրամցնեի նրան՝ որպես ճաշկերույթ, որի համար, կարծում եմ, լավ ախորժակ կունենար:

—Սիրելիս,— ասաց Բոբը,— երեխանե՛րը, Սուրբ Ծնունդը:

—Անշուշտ, պետք է Սուրբ Ծննդյան օր լինի, որ մարդ խմի այդպիսի գարշելի, ժլատ, անխիղճ, անզգա անձնավորության կենացը, ինչպիսին պարոն Սքրուշն է,— ասաց տիկինը,— դու գիտես, որ նա այդպիսին է, Ռոբերտ: Ոչ ոք այնպես լավ չգիտի այդ, ինչպես դու, ինե՛ղճ մարդ:

—Սիրելիս,— մեղմ ձայնով խոսեց Բոբը,— Սուրբ Ծննդյան օր է:

—Ես կլիմեմ նրա կենացը հանուն քեզ և հանուն Ծննդյան օրվա,— ասաց տիկին Քրեչիթը,— բայց ոչ հանուն նրա: Երկար կյանք եմ մաղթում նրան: Ուրախ Սուրբ Ծնունդ լինի և ուրախ Նոր Տարի: Չեմ կասկածում, որ նա շատ ուրախ ու երջանիկ կլինի:

Երեխաները նույնպես խմեցին նրա կենացը: Դա առաջին բանն էր, որ անկեղծ չարվեց նրանց կողմից: Պստիկ Թիմը խմեց վերջում, բայց նրա համար այդ կենացն արժեք չունեց: Սքրուջն այդ ընտանիքի հրեշն էր: Նրա անվան հիշատակությունը սև ստվեր նետեց տոնախմբության վրա, որը տևեց ամբողջ հինգ ժամ: Երբ այդ ստվերը ցրվեց, նրանք տասն անգամ ավելի ուրախ էին, քան առաջ, լոկ այն զգացումից, որ Չար Սքրուջի վերջը տվեցին: Բոբ Քրեչիթը պատմեց, թե մի աշխատանք է գտել Փիթերի համար, որը հաջողվելու դեպքում նա շաբաթական հինգ շիլինգ և վեց պենս կրերի տուն: Երկու փոքրիկ Քրեչիթները բարձրաձայն ծիծաղեցին Փիթերի՝ գործարար մարդ դառնալու մասին մտքից: Իսկ Փիթերը իր օձիքի մեջտեղից մտախոհ նայում էր կրակին, կարծես խորհում էր, թե հատկապես ինչ ներդրումներ կանի, երբ ստանա այդ ցնցող եկամուտները: Հետո Մարթան, որն աղքատ աշակերտ էր կանացի գլխարկների արհեստանոցում, պատմեց, թե ինչ աշխատանք է անում ու քանի ժամ է լարված աշխատում, և որ որոշել է վաղն առավոտյան երկար պատկել անկողնում ու լավ հանգստանալ, որովհետև վաղը տոն է, և ինքն ամբողջ օրը տանն է լինելու: Պատմեց նաև, թե մի քանի օր առաջ տեսել է մի կոմսուհու ու լորդի, և որ լորդը “մոտավորապես նույնհասակն ուներ, ինչ Փիթերը”: Այս բառերը լսելիս Փիթերն այնքան բարձրացրեց օձիքը, որ եթե դուք այնտեղ լինեիք, նրա գլուխը չէիք տեսնի: Այդ ընթացքում շագանակներն ու սափորն արդեն մի քանի անգամ շրջանաձև ձեռքից ձեռք էին անցել:

Քիչ հետո Պստիկ Թիմն իր բարակ, թախծոտ ձայնով երգեց ձյան մրրիկի մեջ կորած երեխայի մասին և, իհարկե, շատ լավ երգեց:

Այս ամենի մեջ բարձրակարգ ոչինչ չկար: Այս ընտանիքում ոչ ոք գեղեցկությամբ չէր փայլում, ոչ ոք լավ չէր հագնված, նրանց կոշիկները կորցրել էին անջրանցիկությունը, զգեստներն աղքատիկ էին: Իսկ Փիթերը, ինչպես երևում էր, արդեն ծանոթ էր գրավատանը: Բայց նրանք երջանիկ էին, միմիջանցից գոհ և բախտից շնորհակալ:

Երբ նրանց ուրուապատկերներն սկսեցին խամրել ու անհետանալ, նրանք ավելի երջանիկ էին երևում Ոգու ջահի պայծառ շողերի ներքո, որը նա սփռեց բաժանման պահին: Սքրուջը վերջ հայացքը չէր կտրում նրանցից, հատկապես Պստիկ Թիմից:

Արդեն մթնում էր, և բավական առատ ձյուն էր տեղում:

Երբ Սքրուջն ու Ոգին անցնում էին փողոցներով, ամեն մի տան բոլոր սենյակներում՝ խոհանոցից մինչև հյուրասենյակ, բոցկլտում էին բուխարիները, և պատուհաններին գայթակղիչ կերպով առկայծում էր նրանց ուրախ բոցը: Կրակի բոցկլտոցը վկայում էր ընտանեկան ճաշկերույթի պատրաստության մասին, բուխարու առջև չորանում էին ավսենները, պատուհանները ծածկվում էին մուգ կարմիր վարագույրներով՝ պատսպարելու ցրտից ու խավարից: Երեխաները տնից դուրս էին գլորվում ձյան մեջ՝ դիմավորելու իրենց ամուսնացած քույրերին, եղբայրներին, զարմիկներին ու զարմուհիներին, քեռիներին ու մորաքույրերին՝ յուրաքանչյուրը ձգտելով առաջինը ողջունել նրանց: Ահա այնտեղ վարագույրների վրա երևացին հյուրերի ստվերները: Մեկ այլ տեղ տաք գլխարկներով ու մորթե կոշիկներով մի խումբ գեղեցիկ աղջիկներ, միաժամանակ շաղակրատելով և արագ քայլելով, գնում էին մոտակա հարևանի տուն: Եվ վա՛յ այն ամուրի տղամարդուն, որն իր տանը կտեսներ այդ կարմրաթուշ աղջիկներին (խորամանկ դիցուհիները լավ գիտեին այդ):

Դատելով ընկերական հավաքությունների շտապող մարդկանց թվից՝ կարելի էր կարծել, թե տանը ոչ ոք չի մնում՝ հյուրերին ընդունելու համար: Բայց այդպես չէր. յուրերի սպասում էին բոլոր տներում՝ թեժացնելով բուխարու կրակը՝ նրա բոցը հասցնելով ծիսնելույզի կես բարձրությանը:

Ինչպիսի՛ երանություն, ինչպե՛ս էր Ուրվականը ցնծում, ինչպե՛ս էր նա իր լայն կուրծքը մերկացրած ու ձեռքերի մեծ ափերը բացած՝ առաջ սավառնում՝ գթառատ ձեռքով տարածելով իր լուսավոր ու անմեղ ուրախությունն այն ամենի վրա, ինչին ձեռքը դիպչում էր: Նույնիսկ ճրագակիրը, որը մութ փողոցում վազելով՝ հետևից լույսի կետեր էր թողնում և հագնվել էր տոնական՝ երեկոն մի տեղ անցկացնելու համար, բարձրաձայն ծիծաղեց, երբ Ոգին անցավ իր կողքով: Բայց նա գլխի չընկավ, որ հենց ինքը՝ Սուրբ Ծնունդն էր իրեն ուղեկցում: Իսկ այժմ (առանց Ուրվականի նախազգուշացման) նրանք հայտնվեցին մռայլ ու ամայի ճահճուտի վրա, ուր ահռելի քարակույտեր էին սփռված, և որն ասես հսկաների գերեզմանոց լիներ: Անուր ջուր էր հոսում, ավելի ճիշտ՝ կոսուեր, եթե այն սառցակալած չլիներ: Այստեղ ոչինչ չէր աճում, բացի մամուռից, որոճից, անմշակ փարթամ խոտից: Արևմուտքում մայր մտնող արևը հորիզոնի վրա թողել էր հրե շերտագիծ, որը խոժոռ աչքի պես մի պահ նայեց ամայությանը, հետո ավելի ու ավելի իջեցնելով դժգոհ հայացքը՝ անհետացավ սև գիշերվա թանձր աղջամուղջում:

—Այս ի՞նչ տեղ է,— հարցրեց Սքրուջը:

—Այստեղ հանքափորներ են ապրում, որոնց աշխատանքը երկրի ընդերքում է,— պատասխանեց Ոգին, —բայց նրանք ճանաչում են ինձ. հապա նայիր: Մի խրճիթի պատուհանում լույս երևաց: Նրանք արագ մոտեցան և, անցնելով ցեխից ու քարից կառուցված պատի միջով, տեսան բոցավառվող օջախի շուրջը հավաքված մի խումբ ուրախ մարդկանց: Մի ձեր մարդ ու կին էին՝ շրջապատված իրենց երեխաներով, թոռներով ու ծոռներով, և բոլորը՝ տոնական զգեստներով: Ծերունին Սուրբ Ծննդյան երգ էր երգում, որը մերթընդմերթ էր լսվում այդ ամայի վայրում թևածող քամու աղմուկի միջից: Շատ հին երգ էր այդ՝ մանկուց իրեն ծանոթ, որը ժամանակ առ ժամանակ խմբովին էին երգում: Երբ ձերունին լսում էր նրանց ձայները, ոգևորվում էր ու ավելի հնչեղ էր երգում, իսկ երբ նրանց ձայները լսում էին, նրա ոգևորությունը կրկին մարում էր:

Ոգին երկար չմնաց այստեղ: Հրամայելով Սքրուջին բռնել իր պատմուճանից՝ անցավ ճահճուտի վրայով և սլացավ առաջ: Դեպի ու՞ր, դեպի ծո՞վ: Այո, դեպի ծով:

Երբ Սքրուջը հետ նայեց, ի սարսափ իրեն տեսավ վերջին հողակտորը և ժայռերի մի ահռելի շղթա: Ջրի աղմուկը նրան խլացրեց: Փոթորկոտ ծովի մուլեզնած ալիքները դողդոջունով մխրճվում էին ավեհարվածներից գոյացած անձավների մեջ և վայրագորեն ջանում կործանել ցամաքը: Ափից մի քանի մղոն հեռու՝ ստորջրյա ժայռերի մռայլ խութի վրա, որին տարին բոլոր ուժգնորեն բախվում էին ալիքները, կանգնած էր մի մենավոր փարոս: Ծովային ջրիմուռները հսկայական կույտերով փաթաթվում էին նրա հիմքին, իսկ մրրկահավերը, որոնք ասես քամուց ծնված լինեին, ինչպես ջրիմուռները՝ ջրից, վեր ու վար էին թռչում փարոսի շուրջը, ինչպես այն ալիքները, որոնց հավելով՝ սլանում էին առաջ: Նույնիսկ այստեղ փարոսին հետևող երկու մարդ կրակ էին վառել, որը հաստ քարե պատի սողանցքի միջից լույսի պայծառ շող էր նետել ահարկու ծովի վրա: Խորդուբորդ սեղանի շուրջ նստած, նրանք սեղմեցին միմյանց կոշտացած ձեռքերը և զարեջրով լի թիթեղյա թասերով ուրախ Սուրբ Ծնունդ մաղթեցին իրար: Նրանցից մեկը՝ ավագը, որի դեմքը ամբողջովին վնասված էր ու սպիներով ծածկված, ինչպես հին նավի առաջնամասի քանդակ, սկսեց փոթորիկ հիշեցնող խրոխտ երգ երգել:

Ուրվականը սև ու ավեկոճ ծովի վրայով կրկին սլացավ առաջ, առաջ ու առաջ, մինչև հեռանալով բոլոր ափերից (ինչպես ինքն ասաց Սքրուջին)՝ իջավ մի նավի վրա: Ոգին և Սքրուջն անցան պահակակղտերում կանգնած մի քանի աղստ ուրվապատկերների, դեկանիվի մոտ կանգնած նավավարի, նավաքթին կանգնած դիտակալի, հերթապահող նավաստիների կողքով, որոնցից

յուրաքանչյուրը կա՛մ Սուրբ Ծննդյան երգ էր մրմնջում, կա՛մ Սուրբ Ծննդյան մասին մտածում, կա՛մ ընկերոջը շշուկով պատմում անցած Սուրբ Ծննդյան մի օրվա մասին՝ հույս փայփայելով հաջորդ Սուրբ Ծնունդը դիմավորել տանը: Նավում գտնվող յուրաքանչյուր մարդ՝ քնած թե արթուն, լավ թե վատ, այդ օրը ջերմ խոսք գտավ՝ ասելու իր կողքինին, քիչ թե շատ կիսեց իր ուրախությունը, հիշեց իրենից հեռու և իրեն սիրելի մարդկանց՝ համոզված, որ նրանք էլ սիրով իրեն են հիշում: Ի՛նչ մեծ եղավ Սքրուջի զարմանքը, երբ լսելով քանու ոռնոցը և խորհելով, թե որքան սարսափելի է մթության միջով անհատակ վիհերի վրայով գնալը, որոնց հորձանուտները մահվան պես անխմանալի ու խորհրդավոր են, նա լսեց մի ուրախ ու վարակիչ ծիծաղ: Սքրուջի զարմանքը շատ ավելի մեծ եղավ, երբ ճանաչեց իր զարմիկի ծիծաղը և իրեն գտավ լուսավոր, պայծառ, տաք սենյակում, կանգնած Ոգու կողքին, որը քաջալերող ժպիտով նայում էր այդ նույն զարմիկին:

—Հա՛, հա՛, հա՛,— ծիծաղում էր Սքրուջի զարմիկը,— հա՛, հա՛, հա՛:

Եթե դուք երբևէ առիթ ունենաք ճանաչել մի մարդու, որն օժտված լինի ավելի զվարթ և առույգ ծիծաղով, քան Սքրուջի զարմիկն է, ապա մի բան կարող եմ ասել. ես նույնպես կուզեի նրան ճանաչել: Ծանոթացրեք ինձ նրա հետ, և ես կամրապնդեմ այդ ծանոթությունը:

Գոյություն ունի երևույթների այսպիսի հրաշալի, արդար ու ազնիվ կարգավորում. ինչքան էլ վարակիչ լինեն հիվանդությունն ու վիշտը, շատ ավելի վարակիչ են ծիծաղն ու ուրախ տրամադրությունը:

Երբ Սքրուջի զարմիկը ծիծաղում էր կողերը բռնած, գլուխը ցնցելով և դեմքն արտառոց կերպով ծամածոեցնելով, Սքրուջի զարմուհին՝ զարմիկի կինը, նույնպես լիաթոք ծիծաղում էր: Նրանց հյուրերը, մի փոքր անգամ հետ չմնալով տան տերերից, բարձրաձայն քրքջում էին:

—Հա՛, հա՛, հա՛, հա՛:

—Նա ասաց, որ Սուրբ Ծնունդը հիմարություն է, ազնիվ խոսք,—բացականչեց Սքրուջի զարմիկը,— և այդ ասաց ամենայն լրջությամբ:

—Ինչպե՛ս չի ամաչում, Ֆրեդ,— զայրացած ասաց Սքրուջի զարմուհին:

Օրհնյալ լինեն այդ կանայք. նրանք երբեք ոչինչ կիսատ չեն թողնում և ամեն ինչին լուրջ են մոտենում: Սքրուջի զարմուհին գեղեցիկ էր, չափազանց գեղեցիկ: Այտփոսիկներով, զարմացած հայացքով հմայիչ դեմք ուներ: Նրա փոքրիկ ուռուցիկ շուրթերը կարծես ստեղծված էին համբույրի համար, և այդ, անկասկած, այդպես էր: Երբ նա ծիծաղում էր, կզակի վրա սիրուն կետիկներ էին առաջանում ու անհետանում, և աշխարհում ուրիշ ոչ մի էակ չունեիր այդպիսի լուսաշող աչքեր: Մի խոսքով, նա այնպիսին էր, որ դուք կանվանեիք ցանկալի: Օ՛հ, անչափ ցանկալի:

—Նա ծիծաղելի ծերուկ է,— ասաց Սքրուջի զարմիկը,— ճիշտ եմ ասում, ու ոչ այնքան սիրալիր, ինչպիսին կարող էր լինել: Ինչ որ է, իր զանցանքներն իր համար կատարյալ պատիժ են, ու ես ոչինչ չունեմ ասելու նրա դեմ:

—Ես համոզված եմ, որ նա շատ հարուստ է, Ֆրեդ,— ակնարկեց Սքրուջի զարմուհին,— համենայն դեպս, դու միշտ այդպես ես ասում:

— Հետո ինչ, սիրելիս,— ասաց Սքրուջի զարմիկը,— նրա հարստությունն իրեն ոչ մի օգուտ չի տալիս: Նա իր փողով ոչ մի բարիք չի գործում: Նա չի վայելում փողը: Նա գուրկ է այն հաճելի զգացումից, հա՛, հա՛, հա՛, թե կարող է մեզ երբևէ օգնել իր հարստությամբ:

—Ես ատում եմ նրան,— ասաց Սքրուջի զարմուհին:

Վերջինիս քույրերը և բուր մյուս տիկնայք նույն կարծիքին էին:

—Իսկ ես նրան խղճում եմ,— ասաց Սքրուջի զարմիկը,— եթե նույնիսկ ցանկանամ, չեմ կարող բարկանալ նրա վրա. ո՞վ է տառապում նրա հիմար կամակորություններից, միշտ ինքը: Ահավասիկ նա գլուխն է մտցրել, թե մեզ չի սիրում, և չեկավ մեզ հետ ճաշելու: Իսկ ինչի՞ հանգեցրեց այդ: Նա զրկվեց ճաշից, որը մեծ բան չէ:

—Իսկ ես կարծում եմ, թե նա շա՛տ լավ ճաշից զրկվեց,— ընդհատեց Սքրուջի զարմուհին: Բուրըրը նույնն ասացին, և նրանց թույլատրելի էր լինել լիիրավ գնահատողներ, որովհետև հենց նոր էին ճաշել և, անուշեղենը սեղանին դրած, լամպի լույսի ներքո հավաքվել էին բուխարու շուրջ:

—Դե ինչ, ես շատ ուրախ եմ լսել այդ,— ասաց Սքրուջի զարմիկը,— որովհետև այնքան էլ չեմ վստահում այս երիտասարդ տնտեսուհիներին: Դու՞ք ինչ կասեք, Թոփեր: Թոփերը, որն ակնհայտորեն աչք էր դրել Սքրուջի զարմուհու քույրերից մեկին, պատասխանեց, թե ամուրի տղամարդը անտուն թշվառական է, որն իրավունք չունի կարծիք հայտնելու նման հարցերի շուրջ: Այս խոսքերը լսելով՝ Սքրուջի զարմուհու քույրը՝ Ժանյակե օձիքով թմբլիկը, ոչ թե վարդերով զարդարվածը, շիկնեց:

—Դե շարունակիր, Ֆրեդ,— ասաց Սքրուջի զարմուհին՝ ձեռքի ափերն իրար զարնելով,— նա միշտ կիսատ է թողնում պատմածը: Ի՛նչ անմիտ մարդ է: Սքրուջի զարմիկը նորից սկսեց ծիծաղել, և քանի որ անհնար էր դիմադրել նրա ծիծաղի վարակին, բուրըրը հետևեցին նրա օրինակին, թեև թմբլիկ քույրը անվերջ փորձում էր հակադրվել այդ վարակին՝ հոտոտելով բուրավետ քացախը:

—Ես ուզում էի ասել,— շարունակեց Սքրուջի զարմիկը,— որ մեզ ասելու և մեզ հետ չուրախանալու հետևանքն այն է, որ նա զրկվեց մի քանի հաճելի պահերից, որոնք նրան չէին վնասի: Ես համոզված եմ, որ նա զրկվեց ամենահաճելի գրուցակիցներից, որոնց նա չի գտնի ո՛չ իր հնամաշ գրասենյակում, ո՛չ էլ իր փոշոտ բնակարանում՝ մենակ մնալով ինքն իր հետ: Ես մտադիր եմ ամեն տարի նրան նույն հնարավորությունը տալ, անկախ այն բանից՝ նրան դուր գալի՞ս է այդ, թե՞ ոչ, որովհետև ես խղճում եմ նրան:

Նա կարող է պարսավել Սուրբ Ծննունդը մինչև իր կյանքի վերջը, բայց եթե ես, անտեսելով նրա քամահրանքը, ամեն տարի ուրախ տրամադրությամբ գնամ նրա մոտ և ասեմ. “Ինչպե՞ս ես, քեռի Սքրուջ”, ապա նա ավելի լավ կվերաբերվի այդ տոնին:

Եվ եթե այդ նրան տրամադրի գոնե հիսուն ֆունտ կտակել իր խեղճ գրագրին, ապա ես շատ գոհ կլինեմ: Երեկ ինձ թվաց, թե իմ խոսքերը հուզեցին նրան:

Այն միտքը, թե նրա խոսքերը կարող են հուզած լինել Սքրուջին, ծիծաղ առաջացրեց հյուրերի մոտ: Բայց լինելով միանգամայն բարեհոգի մարդ և շատ չմտածելով, թե ինչի վրա են հյուրերը ծիծաղում, միայն թե ծիծաղեն, նա քաջալերեց նրանց զվարճությունը և ուրախ—ուրախ փոխանցեց շիշը: Թեյելուց հետո նրանք զբաղվեցին երգ ու նվագով: Նրանք երաժշտասեր ընտանիք էին, և երբ սկսում էին բազմաձայն երգել, հավատացնում եմ ձեզ, լավ գիտեին իրենց անելիքը: հատկապես Թոփերը, որը կարող էր որոտալ թավ ձայնով՝ առանց այտուցելու ճակատի երակներն ու առանց շառագունելու: Սքրուջի զարմուհին լավ էր նվագում տավիղ, և մի քանի երգերի շարքում նա նվագեց մի պարզ մեղեդի (այնքան պարզ, որ երկու բոլակում կարող էիք սովորել այն սուլել): Ժամանակին այդ երգում էր այն աղջնակը, որը Սքրուջին գիշերօթիկ դպրոցից տուն տարավ:

Այս հուշը Սքրուջի հոգում արթնացրել էր Անցած Սուրբ Ծննդյան Ոգին, և հիմա, երբ նա լսեց այդ մեղեդին, անցյալի պատկերները նորից հարություն առան նրա հիշողության մեջ: Նրա հոգին ավելի ու ավելի քնքշացավ, և մտածեց, որ եթե տարիներ առաջ ավելի հաճախ լսեր այդ մեղեդին, գուցեև իր իսկ ձեռքերով բարին շատացներ կյանքում, և Ջեյքոբ Մարլիի հոգին ստիպված չէր լինի դուրս գալ գերեզմանից:

Նրանք ամբողջ երեկոն երաժշտությանը չնվիրեցին: Խաղացին նաև ֆանտ:

Չէ՛ որ հաճելի է երբեմն երեխայություն անել, և այդ լավ է ստացվում Սուրբ Ծննդյան օրը, որի մեծագույն հիմնադիրն ինքը երեխա է: Սպասեք: Նախ աչքակապուկ խաղացին: Դե իհարկե խաղացին: Եվ ես չեմ հավատում, որ Թոփերը ոչինչ չէր տեսնում: Ավելի շուտ կհավատայի, որ նրա կոշիկների վրա աչքեր կային: Ինձ թվում է, թե նա և Սքրուջի զարմիկը նախապես պայմանավորվել էին, և Ներկա Սուրբ Ծննդյան Ոգին այդ գիտեր: Ժանյակ է օձիքով թմրիկ քրոջ հետևից նրա գնալու ձևը կատարյալ անարգանք էր մարդկային դյուրահավատության նկատմամբ:

Վայր զգելով բուխարու ունեյիները, դիպչելով աթոռներին, բախվելով դաշնամուրին, խճճուելով վարագույրների մեջ ու շնչահեղձ լինելով՝ նա կրնկակոխ հետևում էր թմրիկ քրոջը: Նա միշտ գիտեր, թե որտեղ է թմրիկ քույրը, և նրանից բացի ոչ մեկին չէր բռնում: Եթե հայտնվեիք նրա դիմաց և տեղում կանգնեիք, նա կձևացներ, թե փորձում է ձեզ բռնել (որին հավատալ, կնշանակեր վիրավորել սեփական ընկալունակությունը), և անմիջապես կսլանար թմրիկ քրոջ հետևից:

Վերջինս մի քանի անգամ ճչաց, թե այդ արդար չէ, և իսկապես այդպես էր: Բայց որքան էլ նա իր մետաքսե շրջագգեստի խշշոցով սրընթաց ճախրում էր Թոփերի կողքով, Թոփերը նրան բռնեց ու տարավ մի անկյուն, որտեղից փախչելու տեղ չկար:

Հետո Թոփերը իրեն նողկալի պահեց: Նա ձևցրեց, թե չի ճանաչում բռնվածին, և դրա համար շօշափեց նրա գլխազարդը, այնուհետև ինքնությունը պարզելու համար սեղմեց նրա ձեռքի մատանին և վզի շղթան՝ մի զագրելի ու հրեշավոր արարք:

Անշուշտ թմրիկ քույրն այդ մասին իր կարծիքը հայտնեց Թոփերին, երբ սենյակում արդեն մեկ ուրիշն էր աչքերը կապած վագում, իսկ իրենք վարագույրի հետևում մտերմիկ կերպով գաղտնիքներ էին փոխանակում:

Սքրուջի զարմուհին աչքակապուկ չէր խաղում: Նա մի հանգիստ անկիւնում, փոքրիկ աթոռ դրած ոտքերի տակ, յարմարաւէտ նստել էր մեծ աթոռին, իսկ նրա յետևում կանգնած էին Ուրվականն ու Սքրուջը: Բայց նա մասնակցեց ֆանտին և “Միրում եմ սիրածիս” խաղին, ուր հիացրեց այբուբենի բոլոր տառերով բառեր կազմելու իր հնարամտությամբ: Նա հոյակապ էր նաև “Ինչպե՞ս, ե՞րբ, որտե՞ղ” խաղում և, ի ուրախություն Սքրուջի զարմիկի, գերազանցեց իր թեթևամիտ քույրերին՝ չնայած նրանք նոյնպես ճարպիկ աղջիկներ էին, ինչպես կ’ասեր Թոփերը: Հյուրերը մոտ քսան հոգի էին, և բոլորը՝ երիտասարդ թե տարեց, մասնակցում էին խաղին:

Սքրուջը նոյնպես խաղաց և խաղի ոգևորությունից մոռանալով, որ իր ձայնը լսելի չէր նրանց, մի քանի անգամ բարձրաձայն հայտնեց իր կռահած բառը, որը գրեթե միշտ ճիշտ էր լինում. չէ՛ որ Ուայթչեփլ ֆաբրիկայի արտադրած ամենասուր ասեղները, որոնց անցքը երբեք չէր կոտրվում թելից, չէին կարող համեմատուել Սքրուջի սուր մտքի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ նա բթամիտ էր ձևանում:

Ուրվականին մեծ բավականություն պատճառեց Սքրուջին այդ տրամադրությամբ տեսնելը, և նա այնպես բարեհաճորեն նայեց Սքրուջին, որ վերջինս երեխայի պես թույլտվություն խնդրեց՝ մնալու մինչև հյուրերի գնալը: Բայց Ոգին ասաց, որ դա հնարավոր չէ:

—Նրանք նոր խաղ են սկսել,— ասաց Սքրուջը,— միայն կես ժամ, Ոգի, կես ժամ:

Խաղը կոչվում էր “Այո կամ ոչ”: Սքրուջի զարմիկը պետք է մի բանի մասին մտածեր, իսկ մյուսները հարցերով պետք է գուշակեին, թե ինչ է այն: Հարցերին նա պետք է պատասխաներ ըստ թեմայի՝ միայն “այո” կամ “ոչ”: Հարցերի աշխույժ կրակահերթով հաջողվեց պարզել, որ նա մտածում էր կենդանու մասին: Գոյություն ունեցող կենդանի էր այդ, բավական տհաճ կենդանի, վայրի, մի կենդանի, որը երբեմն մոնչում էր ու խոնչում, իսկ երբեմն էլ՝ խոսում, ապրում էր Լոնդոնում, քայլում էր փողոցներում, չէր ցուցադրվում, վզափոկով չէր ուղեկցվում մարդու կողմից, գազանանոցում չէր պահվում, շուկայում երբեք չէր մորթվում՝ որպես վաճառքի միս, և ոչ ձի էր այն, ոչ էջ, ոչ կով, ոչ ցուլ, ոչ վագր, ոչ շուն, ոչ խոզ, ոչ կատու, ոչ էլ արջ: Յուրաքանչյուր նոր հարցի ժամանակ Սքրուջի զարմիկն այնպես էր փոթկում ծիծաղից ու զվարճանում, որ ստիպուած էր վեր կենալ բազմոցից ու ոտքերով դռփել: Ի վերջո թմբիկ քույրը, հայտնվելով նոյնանման վիճակում, բացականչեց. —Ես գտա՛ : Ես գիտեմ, թե ինչ է այդ, Ֆրեդ, ես գիտե՛մ:

—Ի՞նչ է այդ,— գոչեց Ֆրեդը:

—Դա քո քեռի Սքրու՛ —ու—ու—ուջն է:

Իհարկե ճիշտ էր:

Հրճվանքի համընդհանուր ալիք բարձրացավ՝ չնայած մի քանիսն առարկեցին, թե՛ “Դա ա՛րջ է” հարցին պետք էր պատասխանել՝ այո, քանի որ բացասական պատասխանը նրանց շեղել էր պարոն Սքրուջի մասին մտածելուց (կարծես թե նրանք երբևէ մտածել էին այդ ուղությամբ):

—Նա մեզ շատ ուրախություն պարգևեց, իրավ,— ասաց Ֆրեդը,— և այժմ ապերախտություն կլինի նրա կենացը չլսմել: Վերցրեք, խնդրում եմ, համեմունքներով լի այս տաք գինու բաժակները, և խմենք քեռի Սքրուջի կենացը:

—Քեռի Սքրուջի կենացը,— բացականչեցին նրանք:

—Ուրախ Սուրբ Ծնունդ ու երջանիկ Նոր տարի ձերուկին, ինչ էլ որ լինի նա,— ասաց Սքրուջի զարմիկը, — նա չուզեց ինձնից ընդունել այս մաղթանքները, բայց թող դրանք իրականանան: Քեռի Սքրուջի կենացը:

Իսկ Քեռի Սքրուջն այդ պահին այնքան էր ուրախացել ու հոգեպես թեթևացել, որ ի պատասխան ուզում էր խմել իր ներկայությանն անտեղյակ այդ մարդկանց կենացը և շնորհակալություն հայտնել իր անլսելի ձայնով, բայց Ուրվականը ժամանակ չտվեց:

Զարմիկի արտասանած վերջին բառի հետ ուրվապատկերն անհետացավ, և Սքրուջը Ոգու հետ կրկին ճանապարհ ընկավ:

Երկար ճանապարհ անցան, շատ բան տեսան, շատ տներ այցելեցին և ամենուր ուրախություն բերեցին: Ոգին կանգնում էր հյուանդանների մահճակալների կողքին, և նրանք աշխուժանում էին, մոտենում էր օտարերկրացիներին, և նրանք իրենց տանն էին զգում, մոտենում էր մարտնչող մարդկանց, և նրանք համառությամբ էին զինվում իրենց գերնպատակի ճանապարհին, մոտենում

էր աղքատներին, և նրանք հոգով հարստանում էին: Անկէլանոցում, հիվանդանոցում, բանտում, չքավորների բոլոր ապաստարաններում, ուր փառասեր մարդն իր կարճատև փոքր իշխանությամբ դուռը չէր գոցել Ոգու առաջ, նա իր օրհնությունն էր թողնում և սովորեցնում Սքրուջին իր պատվիրանները:

Երկարուձիգ գիշեր էր, եթե միայն մի գիշեր էր այդ, որին Սքրուջը խիստ կասկածում էր, քանզի նրան թվում էր, թե Ծննդյան տոները խտացել են այն ժամանակի մեջ, որ նա անցկացնում էր Ոգու հետ: Տարօրինակ էր նաև, որ թեև Սքրուջն արտաքննապես չէր փոփոխվում, բայց Ուրվականը զգալիորեն ծերանում էր:

Սքրուջը վաղուց էր նկատել Ուրվականի այս փոփոխությունը, բայց երբեք չէր խոսում այդ մասին:

Եվ ահա, Ծննդյան տոների ավարտման Տասներկուերորդ Գիշերվան նվիրված երեխաների տոնախմբությունից հետո, երբ նրանք հայտնվեցին բացատում, Սքրուջը նկատեց, որ Ուրվականի մազերը ճերմակել են:

—Մի՞ թե ոգիների կյանքն այդքան կարճ է,— հարցրեց Սքրուջը:

—Իմ կյանքն այս մոլորակի վրա շատ կարճ է,— պատասխանեց Ուրվականը,— այն ավարտվում է այս գիշեր:

—Այս գիշե՞ր,— գոչեց Սքրուջը:

—Այսօր կեսգիշերին: Ականջ դիր, ժամանակը մոտենում է: Այդ պահին եկեղեցու զանգերն ազդարարում էին տասնմեկն անց երեք քառորդը:

—Ներիր, եթե արդարացի չէ իմ հարցը,— ասաց Սքրուջը, ուշադիր նայելով Ոգու պատմուճանին,— բայց ես փեշերիդ տակից դուրս ցցված մի տարօրինակ բան եմ տեսնում, որը քեզ չի պատկանում, ո՞տք է այդ, թե՞ թռչնի ճանկ:

—Պետք է որ թռչնի ճանկ լինի, եթե դատենք դրա վրա եղած մսից,— տխուր պատասխանեց Ոգին, — նայիր այստեղ:

Նա իր պատմուճանի ծայքերի միջից երկու երեխա դուրս բերեց՝ թշվառ, նվաստ, տգեղ, խղճուկ ու սարսափելի: Նրանք ծնկի իջան Ոգու ոտքերի մոտ ու կառչեցին նրա հանդերձանքից:

—Օ՛, Մարդ, նայի՛ր այստեղ: Նայի՛ր, նայի՛ր նրանց,— գոչեց Ուրվականը:

Աղջիկ ու տղա էին՝ գունատ, վտիտ, ցնցոտիներով, խոժոռված, գայլանման, բայց հնազանդորեն կռացած Ոգու ոտքերի մոտ: Այն ժամանակ, երբ նրբագեղ պատանեկությունը պետք է լցներ նրանց դիմագծերն ու թարմ երանգներ հաղորդեր, մի գառամյալ ու խորշումած ձեռք, ինչպես ժամանակի ձեռքը, ճմլել ու աղավաղել էր նրանց դեմքերը և լաթի պես ճմռթել: Այնտեղ, ուր հրեշտակները պետք է գահակալէին, սատանաներն էին դարանակալել ու սպառնալից նայում էին աշխարհին:

Զարմանահրաշ արարչագործության առեղծուածներով լի ողջ պատմության ընթացքում մարդկության գործած ոչ մի օրինախախտում, ոչ մի ստորություն, ոչ մի այլասերում նույնիսկ կիսով չափ չի ունեցել այսչափ ահավոր ու սարսափելի հրեշներ:

Սքրուօը վախեցած հետ—հետ գնաց: Երբ նա տեսավ այդ դժբախտ արարածներին, ուզեց ասել, որ նրանք սքանչելի երեխաներ են, բայց բառերը խեղդվեցին կոկորդում՝ չհասցնելով մասնակցել այդ մեծագույն ստին:

—Ոգի, նրանք քո՞ երեխաներն են,— Սքրուօն ավելին չկարողացավ ասել:

—Նրանք Մարդունն են,— պատասխանեց Ոգին՝ հայացքն իջեցնելով նրանց վրա,— նրանք կառչել են ինձնից՝ ապա տան փնտրելով իրենց ծնողների անտարբերությունից: Տղան Տգիտությունն է, աղջիկը՝ Աղքատությունը: Զգուշացիր նրանցից և այն ամենից, ինչ նրանց հետ է կապված:

Բայց ավելի շատ զգուշացիր այս տղայից, որի ճակատին գրված է Դատաստան, մինչև որ ջնջվի այդ գրությունը: Ժխտիր այդ,— գոչեց Ոգին՝ ձեռքը պարզելով դեպի քաղաք,— զրպարտիր նրանց, ովքեր քեզ կասեն այդ մասին: Ընդունիր այդ քո շահելու նպատակների համար և ավելացրու վատթար գծերդ: Ու սպասիր վերջին:

—Նրանք չունե՞ն որևէ ապաստան կամ ապրելու միջոցներ,— բացականչեց Սքրուօը:

—Մի՞ թե բանտեր չկան: Մի՞ թե ուղղիչ գաղութներ չկան,— ասաց Ոգին՝ վերջին անգամ պատասխանելով Սքրուօին նրա իսկ բառերով:

Զանգը խփեց կեսգիշերվա տասներկուսը: Սքրուօը նայեց իր շուրջը՝ փնտրելով Ուրվականին, բայց չգտավ նրան: Երբ դադարեց հնչել զանգի վերջին դողանջը, նա հիշեց ծերունի Ջեյքոբ Մարլիի կանխատեսումը և, բարձրացնելով աչքերը, տեսավ թիկնոցով ու վեղարով մի փառահեղ Ուրվականի, որը գետնի վրա սահող մշուշի պես մոտենում էր իրեն:

Չորրորդ տուն Վերջին Ոգին Ուրվականը մոտենում էր դանդաղ, հանդիսավոր, անձայն: Երբ բոլորովին մոտեցավ, Սքրուօը ծնկի իջավ նրա առաջ, քանզի նա քայլելիս կարծես մռայլություն ու խորհրդավորություն էր սփռում իր շուրջը: Ուրվականը փաթաթված էր սև ծածկոցով, որը թաքցրել էր նրա գլուխը, դեմքը, մարմինը, ու նրա կերպարանքից ոչինչ տեսանելի չէր, միայն առաջ պարզած ձեռքն էր երեւում: Առանց այդ ձեռքի դժուար կը լինէր զանազանել նրա ուրուապատկերը գիշերից և շրջակա խավարից: Սքրուօն զգաց, որ նա բարձրահասակ է, փառահեղ, և որ նրա խորհրդավոր ներկայությունից իրեն սարսափ է համակում: Ուրիշ ոչինչ նա չգիտեր, որովհետև Ոգին ոչ խոսում էր, ոչ շարժվում:

—Ես արժանացել եմ Գալիք Սուրբ Ծննդյան Ոգու ներկայությա՞նը,— հարցրեց Սքրուօը:

Ոգին չպատասխանեց, այլ միայն մատնացույց արեց դեպի ներքև:

—Դու պատրաստվում ես ինձ ցույց տալ այն դեպքերի ուրվապատկերները, որոնք չեն կայացել, բայց ապագայում կ'իրականանան,— շարունակեց Սքրուօը,— ճի՞շտ է, Ոգի:

Ոգու հագուստի վերնամասը մի պահ սեղմվեց ծալքերի մեջ, կարծես նա գլխով դրական շարժում արեց:

Այդ միակ պատասխանն էր, որ Սքրուօն ստացավ:

Չնայած Սքրուօի համար արդեն սովորական էր դարձել ուրուականների ընկերակցությունը, բայց նա այնքան էր վախեցել այդ լուռ տեսիլքից, որ ոտքերը դողում էին, եւ երբ պատրաստուեց հետևել նրան, զգաց, որ հագիւ է ոտքի վրայ կանգնում:

Նկատելով Սքրուջի վիճակը՝ Ոգին մի պահ հապաղեց, որ ժամանակ տա նրան սթափուելու: Բայց Սքրուջի վիճակն ավելի վատացավ: Նա սարսուռաց այն անորոշ մտքից, թե մթին ծածկոցի հետևում Ուրվականի աչքերը սևեռուն նայում են իրեն՝ չնայած նա որքան էլ լարեց տեսողությունը, ոչինչ չկարողացավ տեսնել, բացի ուրվականի ձեռքից ու հսկայական սև գանգվածից:

—Ապագայի Ոգի,—բացականչեց Սքրուջը,— ես քեզնից ավելի շատ եմ վախենում, քան իմ տեսած մյուս ուրվականներից: Բայց որովհետև գիտեմ, որ նպատակդ ինձ բարություն անելն է, և ես էլ հույս ունեմ կյանքում ուրիշ մարդ դառնալ, ահավասիկ պատրաստ եմ ընդունել քո ընկերակցությունը և այդ անել շնորհակալական զգացումով: Չե՞ս խոսելու ինձ հետ:

Ոգին չպատասխանեց: Նրա ձեռքն ուղղված էր դեպի առաջ:

—Առաջնորդի՛ր ինձ,— ասաց Սքրուջը,— առաջնորդի՛ր: Գիշերն արագ է անցնում, և ես գիտեմ, որ ամեն րոպեն թանկ է ինձ համար: Առաջնորդի՛ր ինձ, Ոգի:

Ուրվականը շարժվեց առաջ ճիշտ այնպես, ինչպես եկել էր: Սքրուջը հետևեց տեսիլքին՝ նրա զգեստի ստվերում, որն իրեն պահում էր վեր ու տանում առաջ:

Նրանք մտան քաղաք, ավելի շուտ կարծես քաղաքն ինքը հայտնվեց նրանց շուրջը՝ պարփակելով իր առօրյա կյանքով: Նրանք քաղաքի կենտրոնում էին՝ բորսայում, վաճառականների մեջ, որոնք այս ու այն կողմ էին շտապում, գրպաններում մանրադրամ գնգացնում, խմբերով զրուցում, նայում իրենց ժամացույցներին, ձեռքում մտածկոտ խաղացնում իրենց ոսկե մեծ կնիքները, և այդպես շարունակ, ինչպես նրանց հաճախ տեսել էր Սքրուջը:

Ոգին կանգ առավ գործարար մարդկանց մի փոքրիկ խմբի մոտ:

Նկատելով, որ Ուրվականի ձեռքը նրանց կողմն է ցույց տալիս, Սքրուջն առաջ շարժվեց, որ լսի նրանց խոսակցությունը:

—Ոչ,— ասաց ահռելի կզակով մի հսկա, գեր տղամարդ,— ես շատ բան չգիտեմ այդ մասին: Միայն գիտեմ, որ նա մահացել է:

—Ե՞րբ է մահացել,— հարցրեց մյուսը:

—Կարծեմ անցյալ գիշեր:

—Ինչու՞, ի՞նչ էր պատահել նրան,— հարցրեց երրորդը՝ մեծ քանակությամբ քթախոտ հանելով իր հսկայական քթախոտատուփից,— ինձ թվում էր, թե նա երբեք չի մեռնի:

—Աստոված գիտի,— հորանջելով ասաց առաջինը:

—Իսկ ի՞նչ է արել նա իր փողերը,— հարցրեց կարմրադեմ պարոնը, որի քթի ծայրին հավելյալ միս էր աճել և ճոճվում էր, ինչպես հնդկաքաղաղի կլոփկը:

—Չեմ լսել,— ասաց մեծ կզակով մարդը նորից հորանջելով,— հավանաբար իր գրասենյակին է թողել: Ինձ փող չի թողել, այդ ես հաստատ գիտեմ:

Այս կատակն ընդունվեց ընդհանուր ծիծաղով:

—Երևում է՝ շատ էժան թաղում է լինելու,— շարունակեց նույն զրուցակիցը,— քանզի, կյանքս վկա, ես չգիտեմ որևէ մեկին, որ գնա նրա թաղմանը: Գուցե մե՞նք հավաքվենք ու գնանք:

—Ես դեմ չեմ գնալուն, եթե նախաճաշն ապահովվի,— ասաց կլիկոկո քիթ ունեցող պարոնը, — եթե գնամ, ինձ կերակրել է պետք:

Նորից ծիծաղեցին:

—Լա՛վ, ինչպես տեսնում եմ՝ ձեզնից ամենաանշահախնդիրը ես եմ,— ասաց առաջին խոսակիցը,— որովհետև ես երբեք սև ձեռնոցներ չեմ կրում և երկու անգամ չեմ նախաճաշում: Բայց եթե որևէ մեկը գնա, ես պատրաստ եմ միանալ: Երբ մտածում եմ այդ մասին, ինձ թվում է՝ նրա ամենամոտ ընկերը ես եմ եղել, որովհետև հանդիպելիս մենք միշտ կանգնում ու զրուցում էինք: Ցտեսություն:

Զրուցակիցները հեռացան տարբեր կողմեր ու խառնվեցին այլ խմբերի: Սքրուջը ճանաչում էր այդ մարդկանց և նայեց Ոգուն՝ բացատրություն ստանալու ակնկալիքով: Ուրվականը շարժվեց դեպի փողոց: Նա մատով ցույց տվեց իրար հանդիպող երկու մարդու: Սքրուջն ունկնդրեց նրանց զրույցը՝ ենթադրելով, թե բացատրությունն այստեղ կգտնի: Այս մարդկանց նա նույնպես լավ էր ճանաչում: Նրանք շատ հարուստ ու ազդեցիկ գործարարներ էին: Սքրուջի համար միշտ կարևոր է եղել նրանց կարծիքն իր մասին, անշուշտ, գործարարության տեսանկյունից, զուտ գործարարության տեսանկյունից:

—Բարի օր,— ասաց մեկը:

—Բարի օր,— պատասխանեց մյուսը:

—Դե՛ ինչ,— ասաց առաջինը,— վերջապես սատանան ստացավ իր բաժինը:

—Այո, գիտեմ,— պատասխանեց երկրորդը,— բավական ցուրտ է:

—Ճիշտ և ճիշտ Սուրբ Ծննդյան եղանակ է: Կարծում եմ՝ չմուշկներով չեք սահում:

—Ոչ, ոչ, առանց այդ էլ գործերս շատ են: Մնաք բարով: Ուրիշ ոչ մի բառ: Հանդիպեցին, զրուցեցին և բաժանվեցին:

Սքրուջը սկզբում զարմացած էր, որ Ոգին կարող է նշանակություն տալ այդքան դատարկ զրույցներին, բայց համոզված լինելով, որ դրանցում կարող է մի թաքնված նպատակ լինել, սկսեց մտածել, թե որն է այդ: Հազիվ թե այդ խոսակցությունները որևէ կապ ունենային իր հին գործընկերոջ՝ Ջեյքոբի մահվան հետ, քանի որ այն Անցյալ էր, իսկ այս Ոգու բնագավառը Ապագան էր: Նա չէր էլ կարողանում հիշել իր հետ անմիջականորեն առնչվող մեկին, որին կարողանար վերագրել այդ զրույցները: Բայց ում էլ վերաբերեին այդ զրույցները, անկասկած դրանցում մի թաքնված բարոյախեսություն կար՝ ուղղված իր անձնական կատարելագործմանը: Եվ որոշեց որպես գանձ մտապահել իր լսած յուրաքանչյուր բառը և այն ամենը, ինչ տեսնելու էր, հատկապես ուշադիր հետևել իր ուրվապատկերին, երբ այն հայտնվի, քանզի հույս ուներ, որ իր ապագա անձի գործելակերպը կդառնա բանալի՝ հեշտորեն լուծելու այդ հանելուկները:

Սքրուջը նայեց բորսային՝ փնտրելով իր պատկերը, բայց ուրիշ մարդ էր կանգնած իր մշտական տեղում: Ու չնայած այդ ժամին Սքրուջն ըստ սովորության պետք է լիներ բորսայում, բայց նա չտեսավ իր նման որևէ մեկին նաև մուտքի մոտ խոնաված բազմության մեջ: Այդ նրան քիչ զարմացրեց, որովհետև նա որոշել էր փոխել իր ապրելակերպը և հավատացած էր, որ տեսնում է իր նորածին որոշումների իրագործումը:

Լռակյաց ու մռայլ Ուրվականը, ձեռքն առաջ պարզած, կանգնել էր Սքրուջի կողքին: Երբ Սքրուջը սթափվեց իր խոհերից ու տեսավ դեպի իրեն շրջված Ուրվականի ձեռքը և նրա ընդունած դիրքը, մտածեց, որ անտեսանելի աչքերը խստորեն իրեն են նայում: Սքրուջը ցնցվեց ու սառնություն զգաց: Նրանք հեռացան գործարար շրջանից և գնացին քաղաքի խուլ անկյունները, որտեղ Սքրուջը նախկինում երբեք չէր եղել, չնայած գիտեր այդ վայրերն ու դրանց վատ համբավը:

Այստեղ կեղտոտ ու նեղիկ փողոցներ էին, տներն ու խանութները՝ խղճուկ, մարդիկ՝ կիսամերկ, հարբած, թափթփված, զազրելի: Նրբանցքներից ու բակամուտքերից, ինչպես աղբահորերից, դեպի հոգևարք ապրող փողոցներն էին ժայթքում գարշահոտություն, աղտոտություն և անառակություն: Ամբողջ թաղամասն ընկղմված էր հանցանքի, աղտեղության ու թշվառության մեջ:

Այս խայտառակ կացարանների որջում կար մի ցածրիկ, միաթեք տանիքով խանութ, որտեղ վաճառվում էին երկաթյա իրեր, հին շորեր, շեր, ոսկորներ և ճարպի մնացորդներ: Խանութի հատակին կոյտերով դիզված էին ժանգոտ բանալիներ, մեխեր, շղթաներ, ծխնիներ, խարտոցներ, կշռանժարներ, կշռաքարեր ու երկաթյա զանազան թափոններ: Անվայելուչ հնտիների, հոտած ճարպի և ոսկրի կույտերում բազում գաղտնիքներ էին թաքնված, որոնք հազիվ թե մեկին հետաքրքրեին:

Առքուվաճառքի ենթակա այս իրերի մեջ՝ հին աղյուսից շինված փայտածխի վառարանի կողքին, նստել էր յոթանասուն ամյա մի ալեհեր խաբեբա: Նա ցրտից պատսպարվել էր պարանին կախված խառնիխուռն ցնցոտիների կեղտոտ վարագույրով և ծխամորձ էր ծխում՝ վայելելով իր խաղաղ մենությունը: Սքրուջն ու Ուրվականը մոտեցան այդ մարդուն հենց այն պահին, երբ մի կին՝ ծանր կապոցը ձեռքին, գողունի մտավ խանութ:

Նոր էր նա մտել, երբ մի ուրիշ կին հայտնվեց՝ նույնպես ձեռքին կապոց, իսկ վերջինիս անմիջապես հետևեց խունացած սև հագուստով մի տղամարդ: Երեքն էլ ապշեցին՝ իրար տեսնելով: Կարճատև շփոթմունքից հետո, որին միացա նաև ծխամորձով ծերունին, բոլորը բարձրաձայն ծիծաղեցին:

—Առաջինը հավաքարարուհու հերթն է,— բացականչեց առաջինը եկած կինը,— երկրորդը լվացարարուհու հերթն է, իսկ երրորդը՝ դագաղագործի: Տես, թե ինչ լավ առիթ է, ծերունի Ջո: Ախր, առանց պայմանավորվելու հանդիպեցինք:

—Հանդիպման համար ավելի լավ տեղ չէիք գտնի,— ասաց ծերունի Ջոն՝ ծխամորձը բերանից հանելով,— եկեք ընդունարան: Դե համարձակ, դու հո առաջին անգամ չե՞ս այստեղ, այդ երկուսդ էլ օտար չեք:

Սպասեք, խանութի դուռը փակեմ: Ա՛խ, ո՛նց է ճռռում: Ամբողջ խանութում երևի չի գտնվի մի այնպիսի ժանգոտ մետաղի կտոր, ինչպես այս դռան ծխնիներն են, և, հավատացած եմ, չկան ավելի ծեր ոսկորներ, քան իմն են: Հա՛, հա՛: Բոլորս համապատասխանում ենք մեր գործին, մենք իրար լավ սագում ենք: Եկեք ընդունարան, եկեք ընդունարան:

Ընդունարան համարվում էր ցնցոտիներով վարագույրի հետևի մասը:

Ծերունին սանդուղքի գորգի երկաթածողով վառարանի ածուխն իրար վրա բերեց և, ծխամորձի կոթով մաքրելով ծխացող լամպի պատրույգը, ծխամորձը նորից դրեց բերանը: Այդ ընթացքում առաջինը եկած կինը իր կապոցը նետեց հատակին ու, ցուցադրաբար նստելով այթոռակին, արմունկները հենեց ծնկներին և մարտական տեսքով համարձակ նայեց մյուս երկուսին:

—Դե ի՛նչ, տիկին Դիլբր, ի՞նչ է պատահել,— ասաց նա,— ամեն մարդ իրավունք ունի հոգալ իր մասին: Նա միշտ իր մասին էր հոգում:

—Դա ճիշտ է, իհարկե,— ասաց լվացարարուհին,— ոչ ոք նրա պես լավ չէր այդ հարցում:

—Դե որ այդպես է, ինչու՞ ես վախեցած աչքերդ չուել, ա՛յ կին: Ո՞վ կիմանա: Մենք հո չե՞նք մատնի իրար:

—Իհարկե ոչ,— միաժամանակ պատասխանեցին տիկին Դիլբրն ու տղամարդը:

—Հուսանք, որ ոչ:

—Շատ լավ, ուրեմն է՛լ չխոսենք այդ մասին,— գոչեց կինը,— ո՞վ կտուժի, եթե այսպիսի մի քանի բան կորչի: Հանգուցյալը, կարծում եմ, դրանից չի տուժի:

—Իհարկե ոչ,— ծիծաղելով ասաց տիկին Դիլբրը:

—Եթե այդ չարամիտ ծեր ժլատն ուզում էր, որ իր մահից հետո ամեն ինչ պահպանվի,— շարունակեց կինը,— ինչու՞ մյուս մարդկանց նման չէր ապրում: Եթե մարդավարի ապրեր, գոնե մեկը մահվան ժամին կողքին կլիներ, ոչ թե վերջին շունչը կփչեր՝ սենյակում մեն—մենակ պառկած:

—Դա ամենաճիշտ խոսքն է, որ երբևէ ասվել է,— ասաց տիկին Դիլբրը, — դա նրա հատուցումն է իր մեղքերի համար:

—Ես կուզեի, որ ավելի ծանր լիներ նրա հատուցումը,— պատասխանեց կինը,— ու, հավատացեք, այդպես էլ կլիներ, եթե կարողանայի էլի մի բան ձեռքս գցել: Բաց այդ կապոցը, ծերուկ Ջո, ու ասա ինձ դրա արժեքը: Անկեղծորեն ասա, ես չեմ վախենում առաջինը ցույց տալ իմ ապրանքը, ոչ էլ վախենում եմ, որ նրանք կտեսնեն: Նախքան այստեղ հանդիպելը շատ լավ գիտեինք, որ մենք ենք հոգում մեր մասին: Դրանում վատ բան չկա: Բայց կապոցը, Ջո:

Բայց նրա ընկերների բարեկրթությունը թույլ չտվեց անելու այդ, և խունացած սև հագուստով տղամարդը, նախաձեռնությունն իր ձեռքը վերցնելով, ցուցադրեց իր ավարը:

Այն մեծ չէր. մեկ—երկու կնիք, գրչատուփ, մի գույգ ճարմանդ և էժանագին զարդասեղ, ահա և բոլորը:

Ծերուկ Ջոն մի քանի անգամ այդ ամենը զննեց ու արժևորեց, պատի վրա կավճով գրեց յուրաքանչյուրի գինը ու երբ տեսավ, որ այլևս ոչինչ չկա ավելացնելու, հանրագումարի բերեց:

—Սա է քո հաշիվը,— ասաց Ջոն,— ու ոչ մի փենի ավելի, թեկուզ ինձ այրեն դրա համար: Ո՞վ է հաջորդը:

Հաջորդը տիկին Դիլբրն էր: Նա ցույց տվեց սավաններ ու սրբիչներ, մի քանի շոր, արծաթե երկու հնաոճ թեյի գդալ, մի գույգ շաքարի ունեղի և մի քանի կոշիկ:

Այդ ամենի գումարը նույնպես կավճով հաստատվեց պատի վրա:

—Ես միշտ ավելի եմ վճարում կանանց: Դա իմ թուլությունն է, դրա համար էլ սնանկանում եմ,— ասաց ծերուկ Ջոն,— սա է քո հաշիվը: Եթե մի փենի ավելի ուզես ու սկսես սակարկել, ես կափտասամ, որ առատաձեռն եմ եղել, ու կես կրոն կիջեցնեմ գինը:

—Իսկ հիմա քանդիր իմ կապոցը, Ջո,— ասաց առաջինը եկած կինը: Ջոն ծնկի իջավ, որ հարմար լինի այն բացելը և, արձակելով բազմաթիվ կապեր, հանեց բրդյա սև կտորի մի մեծ ու ծանր թուփ:

—Ի՞նչ է սրա անունը,— հարցրեց Ջոն,— անկողնու վարագու՞յր:

—Ա՛հ,— ծիծաղելով բացականչեց կինը՝ հենվելով իր խաչաձևած բազուկներին,— անկողնու վարագույր:

—Ուզում ես ասել՝ այս ամենը օղերի հետ միասին հանել ես, երբ դեռ նա պտակած էր,— ասաց Ջոն:

—Այո, ի՛նչ կա որ,— պատասխանեց կինը:

—Դու ծնված ես հարստության մեջ ապրելու համար,— ասաց Ջոն,— ու դու անպայման կհասնես դրան: Հավատացնում եմ քեզ, Ջո, հանուն այդպիսի մարդու ես ձեռքս հետ չեմ պահի, եթե առաջ ձգելով կարող եմ մի բան վերցնել,— սառնասրտորեն պատասխանեց կինը,— հիմա զգույշ եղիր, որ այդ ձեթը չթափես վերմակի վրա:

—Նրա՞ վերմակն է,— հարցրեց Ջոն:

—Բա քո կարծիքով՝ էլ ո՞ւմը,— պատասխանեց կինը,— հիմա էլ հո չի՞ մրսի առանց վերմակի:

—Ինչի՞ց մահացավ, հո վարակիչ չէ՞ր,— հարցրեց ծերուկ Ջոն՝ դադարեցնելով իր գործն ու նայելով կնոջը:

—Մի՛ վախենա,— պատասխանեց կինը,— եթե նա վարակիչ լիներ, ես նրա հետ ժամանակ չէի կորցնի ես տեսակ բաների համար: Ա՛, այդ վերնաշապիկը կարող ես այնքան նայել, մինչև աչքերդ հոգնեն, բայց վրան ոչ ծակ կգտնես, ոչ էլ մաշված տեղ: Նրա լավագույն վերնաշապիկն է ու ամենապիրունը: Եթե ես չլինեի, կորչելու էր:

—Ի՞նչ է նշանակում՝ կորչելու էր,— հարցրեց ծերուկ Ջոն:

—Հագցրել էին, որ դրանով թաղեն,— ծիծաղելով պատասխանեց կինը,— չգիտեմ, թե որ հիմարն էր այդ արել, ես էլ հանեցի վրայից:

Եթե բամբակե կտավը թաղման համար լավ չէ, բա էլ ինչի՞ համար է լավ: Նրան շատ հարմար էր ուրիշ բանի մեջ այդքան սոգեղ չէր լինի:

Մքրուջը սարսափած լսում էր այս խոսակցությունը: Նա նայում էր այդ մարդկանց, որոնք ծերունու լամպի թույլ լույսի ներքո խմբվել էին իրենց ավարի շուրջը, և այնպիսի նողկանք ու գարշանք էր զգում, կարծես նայում էր դիակի շուրջն առևտուր անող պիղծ դների:

—Հա՛, հա՛,— ծիծաղեց նույն կինը, երբ ծերուկ Ջոն հանեց բամբակից գործած իր փողի տոպրակը ու գետնի վրա հաշվեց նրանց հասանելիք գումարները,— տեսա՞ք, թե վերջն ինչ եղավ: Նա ամբողջ կյանքում բոլորին վանեց իրենից, որ մահից հետո մեզ օգուտ բերի: Հա՛, հա՛, հա՛ :

—Ոգի,— ասաց Մքրուջը՝ ոտքից գլուխ դողալով,— ես հասկացա, հասկացա: Այս դժբախտ մարդու ճակատագիրը կարող էր և իմը լինել: Իմ կյանքը հիմա այդ հունով է ընթանում: Ողորմած Աստված, ի՞նչ է սա:

Նա վախեցած ընկրկեց, որովհետև շուրջն ամեն ինչ փոխվեց, և հիմա նա կանգնած էր մի մահճակալի մոտ, որն առանց ծածկոցի էր, առանց վարագույրի, և որի պատառոտված սավանի

տակ պառկած էր ինչ—որ մեկը ու անձայն, բայց սարսռեցնող լեզվով իր մասին էր պատմում: Մենյակում շատ մութ էր, այնքան մութ, որ ոչինչ հնարավոր չէր տեսնել, բայց Սքրուջը մի ներքին մղումով նայում էր շուրջը՝ փորձելով հասկանալ, թե ինչ սենյակ էր այդ:

Դրսից աղոտ լույս էր ընկնում ուղիղ մահճակալի վրա, որտեղ այդ մարդու մարմինն էր հանգչում՝ թալանված, անխնամ, և կողքին ոչ մի սգացող: Սքրուջը նայեց Ուրվականին: Նրա անհողողող ձեռքը ցույց էր տալիս հանգուցյալի գլուխը:

Ծածկոցն այնպես անփութորեն էր գցած դիակի վրա, որ եթե Սքրուջը մատի շարժումով թեթևակի այն բարձրացներ, կարող էր բացել նրա դեմքը: Սքրուջն հասկանում էր այդ, զգում էր, թե ինչքան հեշտ է այդ անել և շատ էր ուզում տեսնել հանգուցյալի դեմքը, բայց անգոր էր դա անել, ինչպես անգոր էր ազատվել իր կողքին կանգնած Ուրվականից:

Օ՛, սառը, սառը, անողոք, ահարկու Մահ, կանգնեցրու քո գոհասեղանն այստեղ և պարուրի՛ր այն քեզ ենթակա սարսափներով, քանզի սա քո թագավորությունն է: Բայց եթե մարդն իր կյանքի ընթացքում եղել է սիրված, հարգված ու մեծարված, ապա քեզ չի հաջողվի նրա մի մազն անգամ շրջել դոպի քո սարսափազդու նպատակները կամ մի դիմագիծ աղավաղել: Կարևոր չէ, որ նրա ձեռքն այժմ ծանր է ու բաց թողնելիս ընկնում է, կամ որ նրա սիրտն ու զարկերակն անշարժ են, այլ կարևորն այն է, որ այդ ձեռքը եղել է բաց, գթառատ և հուսալի, սիրտը՝ խիզախ, ջերմ ու քնքուշ, և զարկերակը՝ մարդկային:

Խփի՛ր, Տեսիլք, խփի՛ր: Եվ տես, թե նրա բարի արարքներն ինչպես են ծլարձակում վերքից ու սփռվում աշխարհով մեկ՝ որպես հավերժական կյանքի սերմեր:

Այս բառերն Սքրուջի ականջներում հնչեցին առանց որևէ ձայնի, և դեռ հնչում էին, երբ նայում էր հանգուցյալի մահճակալին: Սքրուջը մտածեց, որ եթե այդ մարդը կարողանար վեր կենալ մահճից, ինչի՞ մասին կմտածեր առաջին հերթին՝ ազահուրթյա՞ն, հաջող գործարքների՞, հավիշտակելու՞: Անկասկած դրանք փառահեղ վախճան բերեցին նրան:

Նա պառկել էր դատարկ, մութ տան մեջ, ուր չկար որևէ տղամարդ, կին կամ երեխա, որ ասեր, թե նա բարի է եղել իր հանդեպ այս կամ այն հարցում, և ի հիշատակ նրա բարի խոսքի՝ ինքը բարությանը կհատուցի նրան: Միայն կատուն էր ճանկոռոտում դուռը, և սալօջախի տակից լսվում էր առնետների կրծտոցը:

Ի՞նչն էր նրանց ձգում հանգուցյալի սենյակ, և ինչու՞ էին նրանք այդպես անդադրում ու անհանգիստ: Սքրուջը չէր համարձակվում այդ մասին մտածել:

—Ոգի,— ասաց նա,— սա սարսափելի տեղ է, գնանք այստեղից: Հավատա ինձ, որ չեմ մոռանա այստեղ ստացած իմ դասը: Գնանք, խնդրում եմ:

Բայց Ուրվականի անհողողող ձեռքն առաջվա պես ցույց էր տալիս հանգուցյալի գլուխը:

—Ես հասկանում եմ քեզ,— շարունակեց Սքրուջը,— և ես դա կանեի, եթե կարողանայի: Բայց ես անգոր եմ, Ոգի: Ես անգոր եմ:

Ուրվականը շարունակում էր նայել հանգուցյալի կողմը:

—Եթե քաղաքում կա մեկը, որին հուզել է այս մարդու մահը,— ասաց Սքրուջը բոլորովին ուժասպառ,— ցույց տուր ինձ այդ մարդուն, Ոգի, աղաչում եմ քեզ:

Ուրվականն իր սև թիկնոցը թևի նման տարածեց նրա առջև ու մի րոպե հետո, երբ այն հետ քաշեց, երևան եկավ ցերեկային լույսով ողողված սենյակ, որտեղ մայր ու երեխաներ էին:

Մայրն անհամբեր սպասում էր մեկին: Նա քայլում էր անկյունից անկյուն, ցնցվում էր ամեն մի ձայնից, նայում էր մերթ ժամացույցին, մերթ լուսամուտից դուրս, փորձում էր զբաղվել կարով, բայց ապարդյուն, և հազիվ էր դիմանում խաղով տարված երեխաների աղմուկին: Վերջապես լսվեց երկար սպասված թակոցը: Նա շտապեց դեպի դուռը ու դիմավորեց իր ամուսնուն՝ մի մարդու, որը թեև երիտասարդ էր, բայց դեմքը մտահոգ էր ու ընկճված: Այդ օրը նրա դեմքին մի անսովոր արտահայտություն կար: Դա մի տեսակ գոհունակություն էր, որից նա ամաչում էր ու ամեն կերպ փորձում էր այն ճնշել:

Նա նստեց ճաշի, որը պատրաստ դրված էր ջեռոցին: Երկար լռությունից հետո երբ կինն անվստահ հարցրեց, թե ինչ նորություններ կան, ամուսինը կարծես շփոթվեց՝ չիմանալով ինչ պատասխանել:

—Ասա միայն՝ լա՞վ,— նորից հարցրեց կինը՝ փորձելով օգնել ամուսնուն:

—Վատ,— հետևեց պատասխանը:

—Մենք բոլորովին կործանվա՞ծ ենք:

—Ոչ, դեռ հույս կա, Քերոլայն:

—Եթե նրա հոգում խիղճ արթնանա,— զարմացած ասաց կինը,— ապա հույս կա:

Եթե նման հրաշք կատարվի, ուրեմն դեռ հույսը կորած չէ:

—Նրա խիղճն արդեն չի արթնանա,— ասաց ամուսինը,— նա մահացել է:

Կինը համեստ ու համբերատար էակ էր, եթե նայեինք նրա դեմքին: Բայց հոգու խորքում նա շնորհակալ էր այդ լուրը լսելու համար և իր այդ զգացումն արտահայտեց ձեռքերն իրար սեղմելով: Հաջորդ իսկ պահին նա ներում հայցեց ու զղջաց, բայց նրա առաջին զգացումը սրտանց էր:

—Պարզվում է, որ այն կիսահարբած կինը, որի մասին քեզ պատմեցի երեկ, ինձ ճիշտ էր ասում, երբ ուզում էի այցելել նրան ու մի շաբաթով հետաձգել պարտքս: Իսկ ես կարծում էի, թե դա սուկ պատրվակ է՝ ինձնից խուսափելու համար: Նա ոչ միայն ծանր հիվանդ էր, այլև մահամերձ:

—Հիմա մենք ու՞մ ենք տալու մեր պարտքը:

—Չգիտեմ, բայց մինչ այդ մենք պետք է հասցնենք փողը հավաքել: Իսկ եթե նույնիսկ չհասցնենք, ապա չեմ կարծում, որ հաջորդ պարտքատերը հանգուցյալի պես անգութ կլինի: Այս գիշեր կարող ենք թեթև սրտով քնել, Քերոլայն:

Այո, ինչպես իրենք մեղմացրած կասեին՝ իրենց սրտները թեթևացան:

Երեխաները, որոնք հավաքվել էին ծնողների շուրջն ու լուռ լսում էին իրենց համար գրեթե անհասկանալի խոսքեր, ավելի պայծառ դեմք էին ստացել:

Այդ մարդու մահը ուրախություն էր բերել նրանց տանը: Այդ դեպքի հետ կապված միակ զգացումը, որ կարող էր Ուրվականը ցույց տալ Մքրուօին, ուրախության զգացումն էր:

—Ոգի, ցույց տուր ինձ ավելի բարի զգացումներ՝ կապված այդ մարդու վախճանի հետ,— ասաց Մքրուօը,— թե չէ այն մութ սենյակը, որտեղից հենց նոր հեռացանք, միշտ աչքիս առաջ կլինի:

Ուրվականը Սքրուջին առաջնորդեց իրեն քաջաձանոթ փողոցներով, և այդ ընթացքում Սքրուջն այս ու այն կողմ էր նայում իր կերպարանքը գտնելու հույսով, բայց ոչ մի տեղ չէր տեսնում: Նրանք մտան խեղճ Բոբ Քրեչիթի տուն, ուր մի անգամ նա արդեն եղել էր, և տեսան օջախի շուրջ նստած մորն ու երեխաներին: Լուռ էին, չափազանց լուռ: Աղմկարար փոքրիկ Քրեչիթները արձանների պես լուռ ու անշարժ նստել էին մի անկյունում ու նայում էին Փիթերին, որի ձեռքում բացված գիրք կար: Մայրն ու աղջիկները զբաղված էին կարով: Իսկապես, չափազանց լուռ էին: “Եվ նա վերցրեց երեխային ու կանգնեցրեց նրանց մեջտեղում”:

Որտե՞ղ էր Սքրուջը լսել այդ բառերը: Դա երագում չէր: Տղան կարդաց այդ բառերը, երբ ինքն ու Ոգին ներս մտան շեմից: Ինչու՞ նա չի շարունակում կարդալ: Մայրը կարը դրեց սեղանին և ձեռքով փակեց դեմքը:

—Սև գույնը ազդում է աչքերիս վրա,— ասաց նա: Սև գու՞յնը: Ա՛խ, խե՛ղճ Պստիկ Թիմ:

—Հիմա աչքերս հանգստացան,— ասաց Քրեչիթի կինը,— աչքերս ցավում են մոմի լույսից: Պետք չէ, որ հայրդ ինձ տեսնի կարմրած աչքերով: Արդեն նրա գալու ժամանակն է:

—Վաղուց ժամանակն է,— պատասխանեց Փիթերը՝ գիրքը փակելով,— իմ կարծիքով, մայրիկ, վերջերս նա սկսել է սովորականից ավելի դանդաղ քայլել:

Նրանք նորից չափազանց լուռ էին: Վերջապես մայրը խոսեց հաստատուն ու զվարթ ձայնով, որը մեկ անգամ միայն դողաց. —Ես հիշում եմ, թե նա... Ես հիշում եմ, թե նա ինչ արագ էր քայլում՝ Պստիկ Թիմին ուներին դրած:

—Ես էլ եմ հիշում,— բացականչեց Փիթերը,— ես հաճախ եմ տեսել:

—Ես էլ եմ հիշում,— գոչեց մեկ ուրիշը:

Բոլորն էին հիշում:

—Բայց նա շատ թեթև էր՝ զրկելու համար,— շարունակեց մայրը՝ կարով տարված,— և հայրդ այնքան էր սիրում նրան, որ այդ դժվար չէր նրա համար, բոլորովին դժվար չէր: Ահա և ձեր հայրիկը:

Նա շտապեց ամուսնուն դիմավորելու: Բոբը ներս մտավ՝ բրոյա շարժով փաթաթված, որի կարիքը խեղճ մարդը շատ ուներ: Նրա թեյը պատրաստ դրված էր ջեռոցին, և բոլորն ուզում էին առաջինը թեյ մատուցել նրան:

Հետո երկու փոքրիկ Քրեչիթները բարձրացան հոր ծնկներին, և յուրաքանչյուրն իր այտը հպեց հոր դեմքին, կարծես ուզում էին ասել՝ “Մի՛ հիշիր, հայրիկ: Մի՛ տխրիր”:

Բոբն իրեն շատ ուրախ էր զգում երեխաների հետ և սիրալիք զրուցում էր ընտանիքի բոլոր անդամների հետ: Նկատելով սեղանին դրված կարի աշխատանքները՝ նա գովեց տիկին Քրեչիթին և աղջիկներին՝ նրանց ջանասիրության ու հմտության համար: Բոբն ասաց, որ նրանք ամեն ինչ կավարտեն մինչև կիրակի:

—Կիրակի՛ :

Իսկ դու այսօր գնացի՞ր, Ռոբերտ,— հարցրեց կինը:

—Այո, սիրելիս,— պատասխանեց Բոբը,— կուզեի, որ դու էլ գնայիր: Քեզ համար լա կլիներ տեսնել, թե դա ինչ կանաչ տեղ է: Բայց դու այն հաճախ կտեսնես: Ես նրան խոստացա, որ ամեն կիրակի կգնամ: Իմ փոքրիկ, փոքրիկ գավակ,— հառաչեց Բոբը,— իմ փոքրիկ գավակ: Նա սկսեց արտասովել: Նա չկարողացավ իրեն զսպել: Միգուցե ավելի երկար ժամանակ էր պահանջում, մինչև որ նա ընտելանար իր գավակի կորստին:

Նա գնաց վերնահարկի սենյակ, որը պայծառ լուսավորված էր ու զարդարված փշարմավի ճյուղերով: Երեխայի մահճակալի կողքին աթոռ էր դրված, ամեն ինչից երևում էր, որ այստեղ ընդամենը մեկ բոպե առաջ ինչ— որ մեկը եղել է:

Խեղճ Բոբը նստեց աթոռին ու մի փոքր խորհելուց հետո պատկերացրեց, թե համբուրում է փոքրիկի դեմքը:

Հետո, հաշտվելով կատարվածի հետ, խաղաղվեց և ուրախ տրամադրությամբ իջավ ներքև:

Բոլորը հաւաքվեցին կրակի շուրջն ու սկսեցին զրուցել: Մայրն ու աղջիկները շարունակեցին կարը: Բոբը նրանց պատմեց պարոն Սքրուջի զարմիկի արտակարգ բարության մասին, որին ընդամենը մեկ անգամ էր տեսել, և նա, այդ օրն իրեն փողոցում հանդիպելով և տեսնելով, որ ինքը տխուր է (դե գիտես, պարզապես մի փոքր անտրամադիր էի), հարցրել է, թե ինչու է նա վշտացած:

—Ես ամեն ինչ պատմեցի, որովհետև նրանից ավելի բարեհամբուրյ պարոնի դեռ չեմ հանդիպել,— ասաց Բոբը: “Սրտանց ցավակցում եմ Ձեզ, պարոն Քրեչիթ, և Ձեր բարեսիրտ տիկնոջը”,— ասաց նա, — ի դեպ, որտեղի՞ց նա գիտի այդ, չեմ հասկանում:

—Ի՞նչ գիտի, սիրելիս:

—Ղե, որ դու բարեսիրտ տիկին ես,— պատասխանեց Բոբը:

—Այդ բոլորը գիտեն,— ասաց Փիթերը:

—Շատ ճիշտ ասացիր, տղաս,— բացականչեց Բոբը,— հուսով եմ, որ բոլորն այդ մասին գիտեն: “Սրտանց ցավակցում եմ Ձեր բարեսիրտ տիկնոջը: Եթե կարող եմ Ձեզ օգտակար լինել որևէ բանով, խնդրում եմ գաք ինձ մոտ: Ահա իմ հասցեն”,— ասաց նա և տվեց իր այցետոմսը: Կարևորն այն չէ, որ նա կարող է մեզ որևէ բանով օգնել,— շարունակեց Բոբը,— կարևորն այն է, որ նա շատ սիրալիկ էր, ահա թե ինչն է հրաշալի: Ինձ իսկապես թվաց, թե նա ճանաչում էր մեր Պատիկ Թիմին ու մեզ հետ ցավում էր:

—Ես համոզված եմ, որ նա բարեհոգի մարդ է,— ասաց տիկին Քրեչիթը:

—Դու ավելի կհամոզվեիր, սիրելիս, եթե նրան տեսնեիր ու զրուցեիր հետը,— պատասխանեց Բոբը,— ես բոլորովին չեմ զարմանա, եթե նա Փիթերի համար մի լավ աշխատանք գտնի, հիշիր իմ խոսքը:

—Միայն թե լսիր, Փիթեր, ինչ է ասում հայրդ,— ասաց տիկին Քրեչիթը:

—Իսկ հետո,— բացականչեց աղջիկներից մեկը,— Փիթերը կսիրահարվի մեկին և ընտանիք կկազմի:

—Ղե, վերջացրու՛, — քմծիծաղով ընդդիմացավ Փիթերը:

—Դա այնքան հաճելի օր կլինի, որպիսին դեռ չի եղել,— ասաց Բոբը,— չնայած դեռ շատ ժամանակ կա, մինչև այդ օրը, սիրելիս: Բայց ինչ ձևով ու երբ էլ մենք բաժանվենք, ես համոզված եմ, որ մեզմիջև ոչ մեկը չի մոռանա խեղճ Պատիկ Թիմին կամ մեր ընտանիքի առաջին բաժանումը: Կոռնանա՞նք:

—Երբե՛ք, հայրիկ,—բացականչեցին բոլորը միասին:

—Եվ ես գիտեմ,— ասաց Բոբը,— ես գիտեմ, սիրելիներս, որ եթե մենք հիշենք, թե նա որքա՛ն հեզ ու համբերատար էր՝ չնայած իր փոքր տարիքին, ապա մենք չենք վիճի հասարակ առիթներով, որը կնշանակի մոռանալ խեղճ Պատիկ Թիմին:

—Ո՛չ, երբե՛ք, հայրիկ,— նորից բացականչեցին բոլորը միասին:

—Շատ ուրախ եմ,— ասաց Բոբը,— ես շատ ուրախ եմ:

Տիկին Քրեչիթը համբուրեց ամուսնուն, հետո դուստրերը համբուրեցին նրան, հետո՝ երկու փոքրիկ Քրեչիթները, իսկ Փիթերը սեղմեց հոր ձեռքը: Պատիկ Թիմ, քո մանկական հոգում ամփոփվում էր աստվածային էություն:

—Ոգի,— ասաց Սքրուջը,— ինչ—որ բան ինձ հուշում է, որ մեր բաժանվելու պահը մոտեցել է: Ես այդ գիտեմ, բայց չեմ հասկանում, թե ինչպես: Ասա ինձ, ո՞վ էր այդ հանգուցյալը, որին մենք տեսանք:

Ապագա Սուրբ Ծննդյան Ոգին նրան տարավ առաջ և, ինչպես թվաց Սքրուջին, տեղափոխեց մեկ այլ ժամանակաշրջան: Անշուշտ, այս վերջին ուրվապատկերների մեջ կարծես հաջորդականություն չկար, նրանց միջև ընդհանրությունն այն էր, որ տեղի էին ունենում Ապագայում: Ոգին նրան կրկին տարավ գործարար մարդկանց շրջան, բայց այստեղ էլ Սքրուջն իր կերպարանքը չտեսավ: Ոգին չմնաց այստեղ և գնաց ուղիղ դեպի առաջ՝ դեպի կարծես հենց նոր ցանկալի դարձած վերջը, մինչև որ Սքրուջն աղաչեց մի ըոպե կանգ առնել:

—Այս բակում, որով հիմա անցնում ենք, իմ գրասենյակն է,— ասաց Սքրուջը,երկար ժամանակ է, ինչ աշխատում եմ այստեղ: Ահա այն շենքում է: Թույլ տուր տեսնեմ, թե ինչպիսին եմ լինելու գալիք օրերին:

Ոգին կանգ առավ, բայց ձեռքն ուրիշ կողմ էր ուղղված:

—Գրասենյակն այստեղ է,—բացականչեց Սքրուջը,— ինչու՞ ես ուրիշ կողմ ցույց տալիս:

Ոգու անողոք ցուցամատի դիրքը չփոխվեց:

Սքրուջը շտապեց իր գրասենյակի լուսամուտի մոտ և նայեց ներս: Դա նախկինի պես գրասենյակ էր, բայց իրենը չէր: Կահավորանքը նույնը չէր, և աթոռին նստած կերպարանքն ինքը չէր:

Ուրվականը շարունակում էր այլ կողմ ցույց տալ: Սքրուջը նորից միացավ Ուրվականին և զարմանալով, թե ուր և ինչու է գնացել իր կերպարը, հետևեց նրան, մինչև որ հասան մի երկաթե դարպասի: Նախքան ներս մտնելը Սքրուջը կանգ առավ և շուրջը նայեց:

Գերեզմանատուն: Ահա թե որտեղ է հանգչում մարմինն այն դժբախտ մարդու, որի անունը վերջապես նա կիմանա:

Դա հարմար տեղ էր: Տներով շրջափակված, ամբողջովին ծածկված մոլախոտերով, որոնց աճն ապացուցում էր բուսականության մահը և ոչ թե կյանքը, չափից շատ գերեզմաններից խեղդված, կուշտ կերածի պես ուռած: Հարմար տեղ էր:

Ոգին կանգնեց գերեզմանների միջև և ցույց տվեց դրանցից Մեկը: Սքրուջը դողալով մոտեցավ այդ շիրմին: Ուրվականի տեսքը բացարձակապես նույնն էր, բայց Սքրուջը սարսափեց, երբ նրա վեհաշուք կերպարանքում նոր իմաստ տեսավ:

—Նախքան ես կմոտենամ քո ցույց տված տապանաքարին,— ասաց Սքրուջը,— պատասխանիր իմ մի հարցին: Սրանք այն ամենի ուրվապատկերներն են, որ Պետք է կատարվեն, թե՛ այն ամենի ուրվապատկերներն են, որ Կարող են կատարվել:

Ուրվականը շարունակում էր ցույց տալ այն տապանաքարը, որի մոտ կանգնած էր:

—Մարդու ապրելակերպը կանխորոշում է նրա կյանքի վախճանը: Եթե նա համառում և մնում է իր իր կենսակերպի մեջ, ապա այն նրան բերում է կանխորոշված այդ վախճանին,— ասաց Սքրուջը,— բայց եթե նա հրաժարվի իր կենսակերպից, կփոխի նաև նրա կյանքի վախճանը:

—Ոգի՛, ասա, որ այն, ինչ ցույց ես տալիս ինձ, կարո՞ղ է փոխվել:

Ոգին, ինչպես միշտ, լուռ ու անշարժ էր:

Սքրուջը դողալով ծնկաչոք մոտեցավ Ոգուն և, հետևելով նրա ցուցամատին, խոտով ծածկված տապանաքարի վրա կարդաց իր անունը՝ ԷԲԵՆԻՋԸ ՍՔՐՈՋ:

—Մահճակալում պառկած այդ մարդը ե՞ս եմ,— ճչաց նա ծնկաչոք:

Ուրվականի մատը շիրմաքարից ուղղվեց դեպի նա և նորից դեպի շիրմաքարը:

—Ո՛չ, Ոգի: Օ՛հ, ո՛չ, ո՛չ:

Ցուցամատը շարունակում էր նույն դիրքում մնալ:

—Ոգի՛,— գոչեց Սքրուջը՝ ամուր կառչելով նրա պատմուճանից,— լսիր ինձ: Ես այլևս նախկին մարդը չեմ: Այլևս չեմ լինի այնպիսի մարդ, ինչպիսին լինելու էի, եթե չհանդիպեի քեզ: Ինչու՞ ես ինձ ցույց տալիս այս ամենը, եթե փրկության յույս չունեմ:

Ձեռքն առաջին անգամ, կարծես, ցնցվեց:

—Բարի Ոգի,— շարունակեց Սքրուջը՝ ընկնելով նրա առաջ,— քո էությունդ դու միջնորդում ես ինձ համար և կարեկցում ես ինձ: Հավաստիացրու, որ ես դեռ կարող եմ իմ նոր կենսակերպով փոխել այն ուրվապատկերները, որ ցույց տվեցիր ինձ:

Բարեգութ ձեռքը դողաց:

—Ես ամբողջ հոգով կպատուեմ Սուրբ Ծնունդը և ամբողջ տարին կ'ապրեմ այդ զգացումով: Ես կ'ապրեմ Անցեալով, Ներկայով ու Ապագայով՝ իմ մեջ արթուն պահելով Երեք Ոգիների հուշը: Ես չեմ մոռանա նրանց տված դասերը: Օ՛հ, ասա ինձ, որ ես կարող եմ մաքրել այս տապանաքարի գրությունը:

Սքրուջը տազնապահար բռնեց Ուրվականի ձեռքը: Ուրվականը փորձեց ազատվել նրանից, բայց Սքրուջն աղերսանքի պահին ամուր բռնեց նրա ձեռքը և բաց չթողեց:

Ոգին ավելի ուժեղ գտնվեց ու հետ հրեց Սքրուջին: Սքրուջը, ձեռքերը վեր պահած, վերջին անգամ աղերսելով փոխել իր ճակատագիրը՝ տեսավ, թե ինչպես ձևափոխվեցին Ուրվականի վեղարն ու պատմուճանը: Դրանք կուչ եկան, ցած թափվեցին ու փոքրանալով՝ վերածվեցին մահճակալի ձողի:

Հինգերորդ տուն Վերջին մաս Այո, այդ իր սեփական մահճակալի ձողն էր: Մահճակալն իրենն էր, սենյակն իրենն էր: Իսկ ամենալավն ու ամենաուրախալին այն էր, որ Ժամանակն էր իրենը, և նա կարող էր ի բարին փոխել այն:

—Ես կ'ապրեմ Անցյալով, Ներկայով ու Ապագայով,— կրկնեց Սքրուջը՝ անկողնուց դուրս սողալով,— ես իմ մեջ արթուն կպահեմ Երեք Ոգիների հուշը: Օ՛, Ջեյքոբ Մարլի: Փառաբանյալ լինեն Աստված և Սուրբ Ծննդյան տոնը: Ես այդ ասում եմ ծնկաչոք, ծերունի Ջեյքոբ, ծնկաչոք:

Նա այնքան հուզված էր ու ոգևորված իր բարի նպատակներով, որ նրա խոպոտ ձայնը չէր ենթարկվում իրեն: Նրա դեմքը դեռ թաց էր արցունքներից, քանի որ շատ էր հեկեկացել Ոգուց գթություն աղերսելու պահին:

—Սրանք պոկված չեն,— գոռաց Սքրուջը՝ գրկելով մահճակալի վարագույրներից մեկը,— օղակները նույնպես պոկված չեն, ամեն ինչ իր տեղում է: Ամեն ինչ այստեղ է, ես այստեղ եմ, և թող անհետանան այն ուրվապատկերները, որոնք կարող էին իրականություն դառնալ:

Նրանք կ'անհետանան, ես գիտեմ՝ կ'անհետանան:

Այդ ամբողջ ժամանակ նա իր զգեստներն էր շուռումուռ տալիս. ներսի կողմը շրջում էր դուրս ու շրջված հագնում, պատառոտում, խառնում իրար, մի շարք անհեթեթ շարժումներ անում:

—Չգիտեմ, թե ինչ անեմ,— բացականչեց Սքրուջը՝ միաժամանակ ծիծաղելով ու լալով, և շուրջը թափված գուլպաներով իրեն դարձնելով կատարյալ Լաոկոոն,— ես փետուրի պես թեթև եմ, հրեշտակի պես երջանիկ, դպրոցականի պես ուրախ: Ես հարբածի պես գլխապտույտ եմ զգում: Ուրախ Սուրբ Ծնունդ բոլորին: Ուրախ Ամանոր ողջ աշխարհին: Էհե՛յ, հոպլա՛, էհե՛յ:

Նա ցատկոտելով գնաց հյուրասենյակ ու շնչակտուր կանգ առավ:

—Ահա այն կաթսան, որի մեջ վարսակի շիլա կար,— բացականչեց Սքրուջը և սկսեց ցատկոտել բուխարու շուրջը,— ահա այն դուռը, որտեղից մտավ Ջեյքոբ Մարլիի Ուրվականը, ահա այն անկյունը, ուր նստել էր Ներկա Սուրբ Ծննդյան Ուրվականը, ահա այն լուսամուտը, որտեղից տեսա դեգերող Ոգիներին: Ամեն ինչ ճիշտ է, ամեն ինչ իրական է, ամեն ինչ իսկապես եղել է, հա՛, հա՛, հա՛:

Իրոք, դա փառահեղ ծիծաղ էր, ամենահոյակապ ծիծաղն էր մի մարդու համար, որը վաղուց չէր ծիծաղել: Եվ դա սկիզբն էր երկար ու ձիգ երջանիկ ծիծաղների:

—Չգիտեմ, թե այսօր ամսի քանիսն է,— ասաց Սքրուջը,— չգիտեմ, թե ինչքան ժամանակ եմ անցկացրել Ոգիների հետ: Ոչինչ չգիտեմ: Ես կատարյալ երեխա եմ:

Ոչինչ, դա կարևոր չէ: Երեխա լինելն ավելի լավ է:

Էհե՛յ, հոպլա՛, էհե՛յ:

Նրա հրճվանքն ընդհատուեց եկեղեցու զանգի՝ երբևէ իր լսած ամենաերանելի դողանջով:
Շոնդալից բախում, շաչուն, մուրճի զարկ՝ դինգ—դոնգ—բում, դինգ—դոնգ—բում: Օ՛, փառահե՛ղ է,
փառահե՛ղ:

Սքրուջը վազեց պատուհանի մոտ, բացեց այն ու գլուխը դուրս հանեց: Ոչ մառախուղ կար, ոչ էլ
մշուշ: Ջինջ, պայծառ, թարմացնող ու ցրտաշունչ եղանակ էր: Յրտից մարդու երակներում արյունն
էր խաղում: Ոսկեփայլ արև: Չքնաղ երկինք: Հաճելի, թարմ օդ: Ուրախ դողանջներ: Օ՛, փառավո՛ր է,
փառավո՛ր:

—Այսօր ի՞նչ օր է,— գոչեց Սքրուջը ներքևում կանգնած մի տղայի, որը տոնական հագուստով
պարապ կանգնել ու շուրջն էր նայում:

—Հը՞,— անչափ զարմացած բացականչեց տղան:

—Այսօր ի՞նչ օր է, իմ անուշ տղա,— հարցրեց Սքրուջը:

—Այսօ՛ր,— պատասխանեց տղան,— վա՛հ, Սուրբ Ծննդեան օրն է: “Սուրբ Ծննդեան օրն է,— ինքն
իրեն ասաց Սքրուջը,— ես բաց չեմ թողել այն: Ոգիներն այդ ամենը մի գիշերում են արել: Նրանք
ինչ ուզեն, կարող են անել: Իհարկե, կարող են: Իհարկե, կարող են”:

—Հե՛յ, իմ անուշ տղա:

—Էհե՛յ,— արձագանքեց տղան:

—Դու գիտե՞ս մյուս փողոցի անկյունում գտնվող մսավաճառի խանութը,— հարցրեց Սքրուջը:

—Իմ կարծիքով՝ գիտեմ,— պատասխանեց տղան: “Ի՛նչ խելոք տղա է: Արտակարգ տղա է”,—
հիացավ Սքրուջը:

—Դու գիտե՞ս՝ խանութում կախված այն հոյակապ հնդկահավը վաճառվել է, թե ոչ: Ոչ թե փոքրը,
այլ մեծը:

—Ո՞րը, այն մեկը, որ իմ չա՞փ է,— պատասխանեց տղան: “Ի՛նչ հիանալի երեխա է: Նրա հետ
խոսելն ուղղակի հաճույք է”,— մտածեց Սքրուջը և ասաց. —Այո, բարեկամս:

—Մինչև հիմա կախված է այնտեղ,— պատասխանեց տղան:

—Իսկապե՞ս,— ասաց Սքրուջը,— դե վազիր ու գնիր այն:

—Կատակո՞ւմ եք,— բացականչեց տղան:

—Ոչ, ոչ, լուրջ եմ ասում,— ասաց Սքրուջը,— գնա գնիր այն և ասա, որ բերեն այստեղ, իսկ ես
նրանց կ'ասեմ, թե ուր տանեն: Եթե վերադառնաս խանութի աշխատողի հետ, քեզ մեկ շիլինգ
կտամ: Իսկ եթե հինգ րոպեից շուտ նրան բերես այստեղ, քեզ կես կրոն կտամ:

Տղան հրազենի գնդակի պես սուրաց: Մարդ պետք է ամուր ձեռք ունենա, որ կարողանա այդ
արագությամբ հրազենից գնդակ արձակել: “Ես հնդկահավը կուղարկեմ Բոբ Քրեյխիթին,— շնջաց
Սքրուջը՝ ձեռքերը շփելով ու քահ—քահծիծաղելով, — նա չի իմանա, թե ով է այն ուղարկել: Այն
երկու անգամ մեծ է Պատիկ Թիմից: Ջո Միլլերը երբեք նման կատակ չէր անի, ինչպես Բոբին
հնդկահավ ուղարկելն է”:

Հասցեն գրելու ժամանակ նրա ձեռքը դողաց, բայց մի կերպ գրեց և իջավ ներքև՝ բացելու մուտքի դուռը: Նա կանգնած սպասում էր խանութի աշխատողին, երբ հայացքն ընկավ դռան թակիչին:

—Ես այն կսիրեմ մինչև կյանքիս վերջը,— բացականչեց Սքրուջը, ձեռքով շոյելով թակիչը,— դժվար թե նախկինում ես այն նկատեի: Ի՛նչ ազնիվ տեսք ունի: Հրաշալի թակիչ է: Ահա և հնդկահավը: Էհե՛յ, հոպլա՛, ինչպե՞ս եք:

Շնորհավոր Սուրբ Ծնունդ: Ա՛յ քեզ հնդկահավ: Կասկածելի է, որ այդ թռչունը երբևէ կարողացել է կանգնել իր ոտքերի վրա: Դրանք մի բուսական կջարդվեին նրա ծանրության տակ, ինչպես կնքամուսի ձողիկներ:

—Վա՛հ, անհնար է այն տանել մինչև Քեմդեն Թաուն,— ասաց Սքրուջը,— Ձեզ կառք է հարկավոր: Նա այդ ասաց քրքջալով և քրքջալով էլ վճարեց հնդկահավի համար, հետո քրքջալով վճարեց կառքի համար և քրքջալով վարձատրեց տղային, բայց ավելի ուժգին քրքջաց, երբ հևալով նստեց իր աթոռին և շարունակեց քրքջալ, մինչև որ աչքերից արցունքներ հոսեցին:

Սափրվելն այնքան էլ հեշտ գործ չէր, որովհետև նրա ձեռքերը շարունակ դողում էին:

Եվ սափրվելը մեծ ուշադրություն է պահանջում, եթե նույնիսկ այդ ընթացքում մարդ չի պարում:

Բայց եթե անգամ Սքրուջը կտրեր իր քթի ծայրը, նա սպեղանիով կծածկեր այն ու լիովին գոհ կլիներ:

Նա հագավ իր տոնական զգեստները և, վերջապես, դուրս եկավ տնից:

Այդ ժամին մարդիկ խուռն բազմությամբ առաջ էին շարժվում այնպես, ինչպես որ ինքն էր տեսել Ներկա Սուրբ Ծննդյան Ոգու հետ միասին:

Ձեռքերը մեջքին դրած քայլելով՝ Սքրուջը բոլորին ողջունում էր հաճելի ժպիտով: Մի խոսքով, նա այնքան սիրավիր էր, որ երեք թե չորս բարեսիրտ մարդ նրան ասացին. —Բարի լույս, պարոն: Շնորհավոր Սուրբ Ծննդյան Ձեր տունը:

Սքրուջը հետո հաճախ էր ասում, որ այդ բառերը իր լսած բոլոր կենսուրախ հնչյուններից ամենակենսուրախն էին:

Նա շատ չէր հեռացել տնից, երբ տեսավ իրեն ընդառաջ եկող այն հաղթանդամ պարոնին, որը նախորդ օրը մտել էր իր գրասենյակն ու ասել. “Սքրուջ և Մարլի, եթե չեմ սխալվում”: Նա սրտի սուր ցավ զգաց՝ մտածելով, թե ինչպես կնայի իրեն այդ տարեց պարոնը, երբ հանդիպեն միմյանց, բայց նա գիտեր, թե ինչ ուղի է ընկած իր առջև և հետևեց դրան:

—Հարգարժան պարոն,— ասաց Սքրուջը, քայլերն արագացնելով և գրկելով տարեց պարոնին,— բարև Ձեզ: Հուսով եմ՝ երեկ հաջող ընթացավ Ձեր գործը:

Դուք շատ բարի գործ եք ձեռնարկել: Ուրախ Սուրբ Ծնունդ լինի, պարոն:

—Պարոն Սքրու՛ջ:

—Այո,— ասաց Սքրուջը,— դա իմ անունն է, և վախենում եմ, որ այն Ձեզ հաճելի չի լինի: Թույլ տվեք ներողություն խնդրել Ձեզնից: Դուք շատ բարի կլինեք, եթե...— այստեղ Սքրուջը շշնջաց նրա ականջին:

—Տե՛ր Աստված,— շնչակտուր գոչեց պարոնը,— սիրելի պարոն Սքրուջ, Դուք լու՛րջ եք ասում:

—Միանգամայն լուրջ,— ասաց Սքրուջը,— ոչ մի ֆարթինգ պակաս:

Հավատացնում եմ Ձեզ՝ դրանով ես իմ բազմաթիվ պարտքերն եմ վճարում:

Կարո՞ղ եք ինձ այդ լավությունն անել:

—Հարգարժան պարոն,— ասաց մյուսը՝ սեղմելով նրա ձեռքը,— չգիտեմ, թե ինչ ասեմ այդպիսի առատաձեռն... Այլևս ոչ մի խոսք, խնդրում եմ,— ընդհատեց Սքրուջը,— ուրախ կլինեմ, եթե ինձ տեսության գաք: Դուք ինձ տեսության կգա՞ք:

—Կգամ,—բացականչեց տարեց պարոնը:

Եվ դա անկեղծորեն ասվեց:

—Շնորհակալ եմ,— ասաց Սքրուջը,— ես շատ երախտապարտ եմ Ձեզ: Հիսուն անգամ Ձեզ շնորհակալ եմ: Աստված Ձեզ պահպանի:

Սքրուջը գնաց եկեղեցի, հետո զբոսնեց փողոցներում, նայեց այս ու այն կողմ շտապող մարդկանց, շոյեց երեխաների գլուխները, հարցուփորձ արեց մուրացկաններին, նայեց տների ներքևում գտնվող խոհանոցների պատուհաններին, հետո վերևի պատուհաններին և հասկացավ, որ ամեն ինչ կարող է իրեն բերկրանք պատճառել: Նա երբեք չէր պատկերացնում, որ սովորական զբոսանքը կամ ընդհանրապես որևէ բան կարող է իրեն այդպես երջանկացնել: Կեսօրից հետո նա քայլերն ուղղեց դեպի զարմիկի տուն:

Սքրուջը մի քանի անգամ գնաց—եկավ դռան մոտ՝ քաջություն չունենալով այն թակել: Բայց, ի վերջո, նա համարձակություն ձեռք բերեց ու դուռը թակեց:

—Տանտերը տա՞նն է, անուշիկս,— հարցրեց Սքրուջը դուռը բացող աղջկան:

—Ի՛նչ լավ աղջիկ է”:

—Այո, պարոն:

—Որտե՞ղ է նա, սիրունիկս,— հարցրեց Սքրուջը:

—Նա ճաշասենյակում է, պարոն, տանտիրուհու հետ միասին: Թույլ տվեք Ձեզ ուղեկցել:

—Շնորհակալություն, նա ինձ ճանաչում է,— ասաց Սքրուջը՝ ձեռքը մեկնելով ճաշասենյակի դռան փականին,— ինքս կգնամ, սիրելիս:

Նա զգուշորեն պտտեց փականը և դռան հետևից գլուխը երկչոտ ներս մտցրեց:

Տանտերերն ուշադիր զննում էին շքեղ պատրաստված ճաշի սեղանը:

Սովորաբար երիտասարդ տանտերերը նման դեպքերում միշտ նյարդայնանում են և սիրում են ստուգել, որ ամեն ինչ իր տեղում լինի:

—Ֆրեդ,— կանչեց Սքրուջը: Աստվա՛ճ իմ, ինչպե՛ս վեր թռավ զարմիկի կինը: Սքրուջն այդ բոլորին մոռացել էր, որ նա, ոտքերի տակ աթոռ դրած, նստել էր անկյունում, թե չէ այդպես անսպասելի չէր կանչի:

—Վահ, Տեր Աստված,— գոչեց Ֆրեդը,— այդ ո՞վ է:

—Ես եմ, քո քեռի Սքրուջը: Եկել եմ ձեզ հետ ճաշելու: Թույլ կտա՞ս ներս գալ, Ֆրեդ:

Թույլ կտա ներս գալ քեռու՞ն: Դե նա ուրախությունից քիչ մնաց պոկեր նրա ձեռքը: Հինգ բուպեից Սքրուջն իրեն զգաց, ինչպես իր տանը: Ավելի սրտանց ընդունելություն չէր կարող լինել:

Զարմիկի կինը ճիշտ նույն տեսքն ուներ, ինչպես որ Սքրուջը տեսել էր իր տեսիլքում: Նույնը և Թոփերը, որը քիչ հետո եկավ, նույնը և թմբկիկ քույրը, որը հայտնվեց Թոփերից հետո, նույնը և բոլոր հյուրերը:

Հրաշալի երեկո էր, հրաշալի խաղեր էին, հրաշալի համերաշխություն էր, հրա—շա—լի երջանկություն էր: Իսկ հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, Սքրուջն արդոն գրասենյակում էր: Օ՛, նա շատ շուտ էր եկել: Նա ուզում էր առաջինը լինել գրասենյակում, որ Բոբ Քրեչիթին բռներ ուշանալու պահին: Նա սրտանց ուզում էր այդ անել: Եվ այդ նրան հաջողվեց, այո, հաջողվեց:

Ուղիղ ժամը ինն էր: Բոբը չկար: Ինն անց քառորդ: Բոբը չկար: Նա ուշացավ ամբողջ տասնութ ու կես բուպե: Սքրուջն իր սենյակի դուռը բաց էր թողել, որ տեսնի Բոբին իր խորդանոցը մտնելիս: Նախքան դուռը բացելը Բոբը հանել էր գլխարկն ու շարժք: Մի ակնթարթում նա հայտնվեց իր աթոռին և արագորեն սկսեց գրիչը շարժել, կարծես ուզում էր լրացնել բաց թողած բուպեները:

—Ահա և դուք,— մոնչաց Սքրուջը՝ որքան կարող էր ճիշտ նմանակելով իր սովորական ձայնին,— ի՞նչ եք ուզում ասել՝ օրվա այս ժամին այստեղ գալով:

—Ներեցեք, պարոն,— ասաց Բոբը,— մի փոքր ուշացա:

—Ուշացա՞ք,— կրկնեց Սքրուջը:

— Այո, ես էլ եմ այդպես կարծում: Եկեք այստեղ, խնդրում եմ:— Բայց դա տարին մեկ անգամ է լինում, պարոն,— աղերսագին ասաց Բոբը՝ դուրս գալով իր խորդանոցից,— այդ այլևս չի կրկնվի: Երեկ ես մի փոքր ուրախացա, պարոն:

—Ահա թե ինչ կասեմ Ձեզ, բարեկամս,— ասաց Սքրուջը,— ես այլևս նման բան չեմ հանդուրժի: Այդ իսկ պատճառով,— շարունակեց նա ցատկելով իր աթոռից և հարվածելով Բոբի թիկունքին այնպես, որ վերջինս հետ—հետ օրօրվելով՝ կրկին հայտնվեց խորդանոցում,— այդ իսկ պատճառով ես ուզում եմ բարձրացնել Ձեր աշխատավարձը:

Բոբը դողաց և մի փոքր մետեցավ քանոնին: Նրա գլխում վայրկյանական միտք ծագեց՝ քանոնով խփել Սքրուջին ու գետնին տապալել, բռնել նրան և օգնության կանչել բակի մարդկանց՝ նրան զսպաշապիկ հագցնելու համար:

—Ուրախ Սուրբ Ծնունդ, Բոբ,— ասաց Սքրուջը՝ թփթփացնելով նրա մեջքին և այնպիսի լրջությամբ, որը կասկածի ենթակա չէր,— ամենաուրախ Սուրբ Ծնունդը լինի, Բոբ, իմ լավ բարեկամ, ինչպիսին երկար տարիներ չէք ունեցել իմ մեղքով: Ես կբարձրացնեմ Ձեր աշխատավարձը և կաշխատեմ օգնել Ձեր ընտանիքին:

Այսօր իսկ կխոսենք Ձեր հոգսերի մասին՝ տաք գինով լի Սուրբ Ծննդյան մի-մի գավաթով: Իսկ հիմա, Բոբ Քրեչիթ, նախքան մի նոր կետանշան դնելը, թե՛ծ կրակ վառեք և մի դույլ քարածուխ գնեք:

Մքրուջն իր խոստացածից շատ ավելին արեց, անսահման շատ: Իսկ Պստիկ Թիմի համար, որը չմահացավ, Մքրուջը դարձավ երկրորդ հայր: Նա դարձավ այնպիսի բարի ընկեր, այնպիսի բարի տնօրեն և, ընդհանրապես, այնպիսի բարի մարդ, որով կարող էր հպարտանալ մեր հին ու բարի քաղաքը կամ ցանկացած ուրիշ հին ու բարի քաղաք, գյուղաքաղաք կամ գյուղ մեր հին ու բարի աշխարհում:

Որոշ մարդիկ ծիծաղում էին՝ տեսնելով նրա փոփոխությունը, բայց նա չէր վրդովվում և համարյա ուշադրություն չէր դարձնում նրանց, որովհետև նա բավական իմաստուն էր՝ հասկանալու համար, որ աշխարհում միշտ կգտնվեն մարդիկ՝ պատրաստ ծիծաղելու բարի գործերի վրա: Նա հասկանում էր, որ նմանները, ամեն դեպքում, կույր են, և միաժամանակ մտածում էր, որ ավելի լավ է նրանց աչքերը ծիծաղից կնճռոտվեն, քան լացից:

Նա սրտանց ուրախ էր, և այդ լիովին բավարարում էր նրան: Հետագայում նա այլևս չհանդիպեց Ոգիներին, բայց ընդմիջտ ապրեց Ոգելից Խմիչքներից Բոլորովին Հրաժարվելու Սկզբունքով: Եվ նրա մասին միշտ ասում էին, որ եթե որևէ մեկը գիտի, թե ինչպես պետք է լավ տոնել Սուրբ Ծնունդը, ապա այդ նա է:

Լավ կլիներ, որ մեր մասին էլ անկեղծորեն նույնը ասեին, և նույնը ասեին բոլոր մարդկանց մասին: Եվ այսպես, ինչպես Պստիկ Թիմն ասաց, Աստված Օրհնի Մեզ:

ՎԵՐՁ